ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԻՄՈՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՆՈՐԱՅՐԻ

ԻՄՈՒՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԽՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈԶԵՐԻ ԱՖՐԻԿՅԱՆ ՍՈՒՐ ԺԱՆՏԱԽՏԻ ԴԵՊՔՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Գ.00.03 - «Մոլեկուլային և բջջային կենսաբանություն» մասնագիտությամբ
կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝
կենսաբանական գիտությունների դոկտոր
Զ.Ա. Կարալյան

ԵՐԵՎԱՆ – 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԽԱԺ	–	խոզերի աֆրիկյան ժանտախտ
ԽԱԺՎ	–	խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուս
ԽԴԺ	–	խոզերի դասական ժանտախտ
ԻԼ	–	ինտերլեյկին
ՈւՆԳ	–	ուռուցքի նեկրոզի գործոն
ԴՆԹ	–	դեզօքսիռիբոնուկլեինաթթու
ի-ՌՆԹ	–	ինֆորմացիոն ռիբոնուկլեինաթթու
ՌԷՀ	–	ռետիկուլոէնդոթելային հյուսվածք
ՀՎՕ	–	հետվարակային օր
ՎՀՏ	–	վիրուսային հեմոռագիկ տենդ
HADU	–	hemadsorbing unit
IFN	–	interferon
TNF	–	tumor necrosis factor
TNFRI	–	TNF receptor I
TLR	–	toll-like receptors
TGF-β	–	transforming growth factor beta
Th	–	T helper cells
CC	–	β- chemokines
CXC	–	α-chemokines
CXCR	–	C-X-C chemokine receptor
NF-kappaB	–	nuclear factor kappa-light-chain-enhancer of activated B cells
NFAT	–	nuclear factor of activated T- cells
COX-2	–	cyclooxygenase-2
ELISA	–	enzyme-linked immunosorbent assay
IgG	–	immunoglobulin G
TMB	–	tetramethylbenzidine
SIRS	–	systemic inflammatory response syndrome

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<u>Աշխատանքի արդիականությունը</u>

Խոզերի աֆրիկյան ժանտախտը՝ ԽԱԺ-ը, մեկն է առավել լուրջ միջսահմանային հիվանդություններից, որը կենդանիների առողջության պահպանության համաշխարհային կազմակերպությունը ներառել է «A» հիվանդությունների ցանկում որպես բարձր մահացությամբ վարակիչ հիվանդություն: Այն տարածվում է արագ և անկախ աշխարհագրական սահմաններից: ԽԱԺ-ի բուժման և կանխարգելման բացակայությունն ունի ծանր սոցիալ-տնտեսական հետևանքներ: Հիվանդության կանխարգելումը տնտեսական մեծ ազդեցություն կունենա կենդանիների ու կենդանական ծագում ունեցող սննդամթերքի միջազգային առևտրային շուկայում [Sánchez-Vizcaíno et al., 2009]:

Չնայած այս հիվանդության արդիականությանը, ոչ միայն ըստ հիմնարար վիրուսաբանության, այլ նաև խոզաբուծության տեսանկյուների, ԽԱԺ-ի ախտածագման մոլեկուլային մեխանիզմները դեռևս ամբողջովին պարզաբանված չեն:

Վիրուսային հիվանդությունների դեպքում, երբ առաջանում է վիրեմիա (ներառյալ ԽԱԺ-ը), ախտաբանության կարևոր հարցերից մեկը համարվում է իմունային համակարգի վիճակը: Ցավոք, ևս պարզ չեն սուր ԽԱԺ-ի դեպքում իմունային համակարգի փոփոխությունների պատճառները:

Հայտնի է, որ ցիտոկինների սինթեզը կարևոր դեր ունի ԽԱԺ-ի ախտաբանությունում և չափազանց կարևոր է ԽԱԺ-ի վիրուսի վերարտադրության համար: Սա հաստատվում է նաև այն փաստով, որ վիրուսային մի խումբ գեներ կարողանում են առաջացնել տարբեր տեսակի ինտերլեյկինների (ԻL) գեների տրանսկրիպցիայի փոփոխություններ: Մոնոցիտ/մակրոֆագերն արտազատում են մի շարք լուծելի միջնորդանյութեր, ներառյալ նախաբորբոքային ցիտոկինները [Murtaugh et al., 1996]: Վերջին ժամանակներում ենթադրվում է, որ ՈՒՆԳ-α-ի (ուռուցքի նեկրոզի գործոն ալֆա) մակարդակի բարձրացումը կարևոր դեր է խաղում ԽԱԺ-ի ախտածագման մեջ [Gómez del Moral et al., 1999]: Բացի այդ, F.J. Salguero-ն և համահեղինակները (2002թ.) սուր ԽԱԺ-ի դեպքում նկարագրել են շիճուկում ՈՒՆԳ-α-ի և ԻL-1β-ի մակարդակների բարձրացում: Նրանք հայտնաբերել են նաև փայծաղում և ավշային հանգույցներում այն բջիջների թվի միաժամանակյա ավելացում, որոնք սինթեզում են ՈՒՆԳ-α, ԻԼ-1α, ԻԼ-1β և ԻԼ-6: Չնայած այս ամենին, ԽԱԺ-ի ախտաբանությունում քիչ է ուսումնասիրված ինտերլեյկինների դերը: Այսպես, դեռ լիովին չեն ուսումնասիրվել նշված ցիտոկինների արտադրությունը հիվանդության դինամիկայում: Ինչպես նաև դեռևս ուսումնասիրված չէ այս ցիտոկինների արտադրության և իմունային համակարգի ծայրամասային օրգանների (ավշային հանգույցներ, փայծաղ) բջջային կազմի փոփոխությունների միջև ընկած փոխադարձ կորելացիոն կապը:

Ավելին, առկա գրականությունում չկան լիարժեք տվյալներ որոշ ինտերլեյկինների սինթեզի և նրանց դերի մասին ԽԱԺ-ի ախտածնության մեջ:

Այս ամենը սույն հետազոտությունը դարձնում են արդիական և հիմք են ծառայում ձեռնամուխ լինելու մեր կողմից տվյալ աշխատանքի իրագործման համար: Մասնավորապես, ուսումնասիրել սուր ԽԱԺ-ի դինամիկայում խոզերի իմունային համակարգի ծայրամասային օրգանների՝ ավշային հանգույցների և փայծաղի ախտաբանական փոփոխությունները և ծայրամասային արյան մեջ նախաբորբոքային ցիտոկինների քանակական տեղաշարժերը:

<u>Նպատակը և խնդիրները</u>

Հետազոտության նպատակն է սուր ԽԱԺ-ի դեպքում ուսումնասիել իմունային համակարգի ծայրամասային օրգաններում՝ ավշային հանգույցներում և փայծաղում լիմֆոցիտների և նրանց նախորդների՝ լիմֆոբլաստների քանակական և մորֆոֆիզիոլոգիական փոփոխությունները: Ստացված արդյուքները համադրել ծայրամասային արյան հետազոտությունների համապատասխան արդյունքների հետ: Ինչպես նաև հիվանդության ընթացքում հայտնաբերել նախաբորբոքային ցիտոկինների քանակական փոփոխությունները խոզերի ծայրամասային արյան մեջ:

Նշված նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել խոզերի ավշային հանգույցները և փայծաղը նորմալ և ախտաբանական վիճակներում: ԽԱԺ-ի դինամիկայում կատարել հերձումներ և ճշտել իմունային համակարգի ծայրամասային օրգանների ախտաանատոմիական և հյուսվածաբանական փոփոխությունները:

- ԽԱԺ-ի դինամիկայում ուսումնասիրել իմունային համակարգի ծայրամասային օրգանների՝ ավշային հանգույցների և փայծաղի լիմֆոիդ բջիջների պոպուլյացիայում քանակական փոփոխությունները: Լիմֆոիդ պոպուլյացիայի ստացված արդյունքները համադրել ծայրամասային արյան լեյկոցիտային կազմի փոփոխությունների հետ:
- ԽԱԺ-ի դինամիկայում ուսումնասիրել հիմնական նախաբորբոքային ցիտոկինների՝ ԻԼ-1β-ի, ԻԼ-6-ի, ԻԼ-8-ի և ՈՒՆԳ-α-ի մակարդակների փոփոխությունը ծայրամասային արյան մեջ:

<u>Գիտական նորույթը</u>

Աշխատանքում ուսումնասիրվել է խոզերի իմունային համակարգի ծայրամասային օրգաններում՝ ավշային հանգույցներում և փայծաղում լեյկոցիտների պոպուլյացիոն կազմի փոփոխությունը հիվանդության ողջ ընթացքում: Ներկայացվել է ամբողջական լիմֆոգրամ ԽԱԺ-ի դեպքում: Նաև ուսումնասիրվել է փայծաղի պարենքիմայում լիմֆոիդ բջիջների պոպուլյացիայում քանակական փոփոխությունները:

Իրականացվել է ավշային հանգույցներում և փայծաղում լիմֆոիդ բջիջների քանակական փոփոխությունների արդյունքների համադրում ծայրամասային արյան լեյկոցիտների քանակական փոփոխությունների հետ: Ուսումնասիրվել է խոզերի ավշային հանգույցների և փայծաղի լիմֆոցիտներում և լիմֆոբլաստներում ԴՆԹ-ի պարունակության բջջասպեկտրոֆոտոմետրիկ ցուցանիշների փոփոխությունները հիվանդության դինամիկայում:

Հիվանդության զարգացման բոլոր փուլերում ուսումնասիրվել է ԽԱԺ-ի ախտածագման մեջ կարևոր նշանակություն ունեցող նախաբորբոքային ցիտոկինների (ԻԼ-1β, ԻԼ-6, ԻԼ-8 և ՈՒՆԳ-α) քանակական տեղաշարժերն առողջ և վարակված խոզերի ծայրամասային արյան մեջ: Սուր ԽԱԺ-ի ընթացքում մեր կողմից առաջին անգամ ուսումնասիրվել է ԻԼ-8-ի մակարդակի փոփոխությունը: Ինչպես նաև մեր հետազոտություններում ՈՒՆԳ-α-ի սինթեզի վերաբերյալ ստացված արդյունքները լրացնելու են գիտական գրականության մեջ առկա տվյալները:

Գիտակիրառական նշանակությունը

ԽԱԺ-ը, հանդիսանալով բարձր մահացություն ունեցող հիվանդություն, որի նկատմամբ դեռևս չկան արդյունավետ պատվաստանյութեր, այժմ գտնվում է կենդանիների առողջության պահպանության համաշխարհային կազմակերպության ուշադրության կենտրոնում: Հաշվի առնելով այս հանգամանքը և արդիական խնդիրը, մեր հետազոտությունները, որոնք բացահայտում են ԽԱԺ-ի դեպքում իմունային համակարգի ծայրամասային օրգանների (ավշային հանգույցներ և փայծաղ) բջջային պոպուլյացիայի և արյան շիճուկում ցիտոկինների մակարդակի փոփոխությունները, նոր հնարավորություններ կընձեռնեն ԽԱԺ-ի կանխարգելման և բուժման համար: Մեր կողմից ստացված արդյունքները կարող են օգտակար լինել ԽԱԺՎ-ի (խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուս) նկատմամբ արդյունավետ պատվաստուկների կամ հակավիրուսային դեղամիջոցների մշակման համար, որոնք բացակայում են և պատճառ են հանդիսանում խոզերի մեծաքանակ և զանգվածային ոչնչացմանն ամբողջ աշխարհում, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունում:

Ատենախոսության փորձարկումը

Աշխատանքի հիմնական դրույթները ներկայացվել և զեկուցվել են ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի գիտական խորհրդի նիստում՝ 2015 թվականի նոյեմբերի 16-ին:

Հրատարակված գիտական աշխատանքները

Ատենախոսական աշխատանքի թեմայով հրատարակվել է 5 գիտական հոդված:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը

Աշխատանքը շարադրված է 110 էջի վրա, պարունակում է 4 աղյուսակ, 30 նկար, որից 16-ը գծապատկերներ են: Գրականության ցանկը ներառում է անգլերեն ու ռուսերեն լեզուներով 162 անվանում: Ատենախոսությունը բաղկացած է հապավումների ցանկից, ներածությունից, գրական ակնարկից, փորձարարական մասից, հետազոտության արդյունքներից, արդյունքների քննարկումից, եզրակացություններից ու գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1: ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1 Խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսը և հիվանդության ախտաբանությունը

Խոզերի աֆրիկյան ժանտախտը (ԽԱԺ) բարձր վարակելիություն ունեցող վիրուսային հիվանդություն է, որն ախտահարում է կաթնասուններից միայն վայրի և ընտանի խոզերին: Անկախ վարակի տարածման ուղուց վարակվում են բոլոր տարիքային խմբերի խոզերը:

ԽԱԺ-ը հայտնի է դարձել միայն 20-րդ դարում և որպես հիվանդաբանության ինքնուրույն միավոր առաջին անգամ կիրառվել է R.E. Montgomery-ի կողմից 1921 թվականին: Սակայն հիվանդության ախտանշանների նախնական նկարագրությունը տրվել է 1903-1905 թթ Հարավային Աֆրիկայի որոշ երկրներում ծագած վարակի ժամանակ (Քենիա, Անգոլիա, Մոզամբիկ և այլն) [Макаров, 2011]:

Խոզերի աֆրիկյան ժանտախտի վիրուսը հանդիսանում է խոշոր երկշղթա ԴՆԹ վիրուս (175-215 նմ), որը Asfarviridae (African swine fever and related viruses) ընտանիքի և Asfivirus ցեղի միակ ներկայացուցիչն է [Dixon el al., 2000, Tulman et at., 2009]: ԽԱԺ-ի վիրուսը պատված է երկշերտ իկոսաէդրային կապսիդով և արտաքին լիպոպրոտեիդային թաղանթով: Վիրուսի ԴՆԹ-ն պարունակում է 170-190 հազար զույգ նուկլեոտիդներ: ԴՆԹ-ի ծայրերը կապված են կովալենտ կապերով և պարունակում են ԴՆԹ-ի շրջադասավորված կրկնողություններ: Շտամից կախված վիրուսի գենոմը պարունակում է մոտավորապես 150-167 գեներ [Dixon et al., 2013]: Վիրուսի ԴՆԹ-ն կոդավորում է իր գենոմի կրկնապատկման և տրանսկրիպցիայի համար անհրաժեշտ ֆերմենտներ, կառուցվածքային սպիտակուցներ և նաև այնպիսի սպիտակուցներ, որոնք կարևոր են տիրոջ օրգանիզմում վիրուսի պահպանման և տարածման համար: Վիրուսի ԴՆԹ-ն կոդավորում է նաև ախտահարված բջիջների ապոպտոզին նպաստող սպիտակուցներ [Hernáez et al., 2004]: ԽԱԺՎ-ով վարակված բջիջներում հայտնաբերվել են 106 վիրուս-յուրահատուկ սպիտակուցներ, որոնցից 35-ը սինթեզվում են վիրուսային ԴՆԹ-ի կրկնապատկումից առաջ, իսկ 71-ը՝ հետո [http://veterinarua.ru/virusnye-infektsii/1169-afrikanskaya-chuma-svinej.html]: Հայտնի են ԽԱԺ-ի վիրուսի 22 գենոտիպեր [Boshoff et al., 2007, Leblanc et al., 2012]:

Երկշերտ կապսիդը կազմված է 1892-2172 կապսոմերներից: Արտաքին լիպոպրոտեիդային թաղանթը վիրուսը ձեռք է բերում բջջից դուրս գալու պահին՝ բողբոջման գործընթացում [Carrascosa et al., 1984]: Վիրուսի վարակելիությունը պահպանվում է 5-7 տարի 5°C-ի պայմաններում, սենյակային ջերմաստիճանում՝ 18 ամիս, 37°C-ում՝ 10-30 օր: Վիրուսը կայուն է 3-10 pH-ի միջավայրում, զգայուն է ճարպային լուծիչների նկատմամբ և ապաակտիվանում է 56°C-ում 30 րոպեի ընթացքում [Балышев и др., 2010]:

Աֆրիկյան ժանտախտի վիրուսը միակ ԴՆԹ արբովիրուսն է, որը փոխանցվում է հոդվածոտանիների միջոցով (Ornithodoros՝ արգասիդային տզերի ընտանիք) [Burrage, 2013, Tauscher et al., 2015]:

Խոզի օրգանիզմում վիրուսը բազմանում է հիմնականում մոնոնուկլեար-ֆագոցիտային համակարգի բջիջներում, հատկապես մոնոցիտներում և մակրոֆագերում, որոնցում վիրուսի բարձր տիտրեր են գրանցվում *in vivo* վարակների ժամանակ [Colgrove et al., 1969, Mebus, 1998]: Բացի մոնոնուկլեար-ֆագոցիտային համակարգի բջիջներից, վիրուսը կարող է բազմանալ նաև նեյտրոֆիլներում [Carrasco et al., 1996a], ֆիբրոբլաստներում, էնդոթելային բջիջներում, հեպատոցիտներում և երիկամային խողովակների էպիթելային բջիջներում, լիմֆոցիտներում [Wardley et al., 1977, Gómez-Villamandos et al., 1995a, Gómez-Villamandos et al., 1995b, Sierra et al., 1987, Sierra et al., 1989, Fernandez et al., 1992]: Վիրուսը խոզի օրգանիզմ է թափանցում վերին շնչառական ուղիներով, թոքերով, վնասված մաշկով, մարսողական համակարգի օրգանների լորձաթաղանթներով, ինչպես նաև տզի խայթի միջոցով: Վարակված կենդանու օրգանիզմից վիրուսը արտազատվում է արյան միջոցով՝ քթային արնահոսության ժամանակ, արտաթորանքով, մեզով, քթի խոռոչի լորձնային արտազատուկներով, թքով [Коваленко и др., 1965]: Վիրուսն սկզբում բազմանում է այն ավշային հանգույցների մոնոցիտներում և մակրոֆագերում, որոնք տեղակայված են վիրուսի ներթափանցման օջախին մոտ: Վիրուսը նախ ախտահարում է նշիկների, ենթածնոտային, հարականջային և միջընդերային ավշային հանգույցների մոնոցիտները և մակրոֆագերը: Անկախ վիրուսի թափանցման ուղուց խոզի ավշային հանգույցներում պարտադիր նկատվում են ախտաբանական փոփոխություններ: Հետագայում վիրուսը արյան և ավշի հետ տարածվում և տեղափոխվում է բազմացման երկրորդային վայրեր՝ փայծաղ, ոսկրածուծ, թոքեր, լյարդ, երիկամներ և առաջացնում է նշված օրգանների դիստրոֆիկ և նեկրոտիկ փոփոխություններ: Հարկ է նշել, որ հիվանդության առաջին օրից արյան շիճուկում նկատվում է վիրեմիա (վիրուսն արյան շիճուկում), որը աճում է հիվանդության զարգացմանը զուգընթաց: Անոթների ռետիկուլոէնդոթելային բջիջների ախտահարումները, որոնք արտահայտվում են օրգաններում և հյուսվածքներում արյունազեղումներով, այդ բջիջների զանգվածային քայքայումով, հանգեցնում են խոզերի մահվան [Бурба, 1967, Wilkinson et al., 1981, Gómez-Villamandos et al., 2013]:

Բնական պայմաններում հիվանդության գաղտնի շրջանը տևում է 2-20 օր, իսկ փորձարարական պայմաններում այն կարող է տատանվել 1-7 օր՝ կախված վիրուսի շտամից և ներարկվող չափաբաժնից:

Դեռևս 1958թ-ին նկարագրվել էր, որ ԽԱԺ-ի դեպքում առաջին ախտահարումները հայտնաբերվում են լիմֆոիդ հյուսվածքներում: ԽԱԺ-ը 1921 թ-ին առաջին անգամ R. E. Montgomery-ի կողմից նկարագրել է որպես ենթասուր կամ սուր վարակիչ հիվանդություն, որը բնութագրվում է 100% մահացությամբ, նկատելի արյունազեղումներով և մակարդման խանգարումներով [Maurer et al., 1958]:

Տարբերում են ԽԱԺ-ի հետևյալ ընթացքները. գերսուր, սուր, ենթասուր, քրոնիկ և լատենտ (առանց ախտանշանների): Ավելի հաճախ հանդիպում են հիվանդության գերսուր և սուր ընթացքները: ԽԱԺ-ի սուր ընթացքը նկարագրվում է նաև մեր կողմից ուսումնասիրվող գենոտիպ II վիրուսով փորձարարական պայմաններում վարակված խոզերի մոտ:

Գերսուր ընթացքով հիվանդության ժամանակ խոզերը սատկում են 24-72 ժամ անց: Հիվանդության սուր ընթացքում դիտվում է ջերմության բարձրացում՝ հիպերթերմիա (40-42°C), թուլություն, ընկճախտ, ախորժակի անկում, հիպերեմիա, դժվարանում է շնչառությունը, որոշ դեպքերում նաև արյունային լուծ: Արյունազեղումներ են հայտնաբերվում լիմֆոիդ և ոչ լիմֆոիդ օրգաններում: Խոզերի մոտ զարգանում է կոմա և նրանք սատկում են 4-10 օրվա ընթացքում [Ekue et al., 1989, Wilkinson et al., 1980, Wilkinson et al., 1981, Rodríguez et al., 1996, Howey et al., 2013]:

Հիվանդության ենթասուր ընթացքն իր ախտանշաններով նման է սուրին, սակայն զարգանում է ոչ շատ արագընթաց, իսկ խոզերը սատկում են 15-20 օրվա ընթացքում: Կենդանի մնացած խոզերի մոտ զարգանում է քրոնիկ ԽԱԺ, որը բնութագրվում է մեջընդմիջվող տենդով, հյուծվածությամբ, աճի կանգով, ինչպես նաև ախտահարվում են անոթները, մաշկը և աղիքները: Հիվանդության տևողությունը 2-10 ամիս է, իսկ մահացությունը կազմում է 50-60%: Կլինիկապես հիվանդ, բայց առողջացած խոզերը դառնում են վիրուսակիրներ, այսինքն նրանց մոտ զարգանում է հիվանդության լատենտ ընթացքը: Լատենտ ընթացքը հիմնականում բնորոշ է վայրի խոզերին: Հիվանդության այս ընթացքը կլինիկապես չի արտահայտվում, սակայն ժամանակ առ ժամանակ դիտվում է վիրեմիա: Սթրեսային պայմաններում այս խոզերը արտազատում են վիրուսներ և վարակում առողջ խոզերին [Коваленко и др., 1964]:

Սուր և ենթասուր հիվանդության պատճառով սատկած խոզերի հերձման ժամանակ հայտնաբերվում են վզատակի, որովայնի պատի փորային հատվածի, ազդրային ներքին մակերեսների մաշկի կարմրա-մանուշակագույն երանգի բազմաթիվ արյունազեղումներ: Քթի խոռոչը և տրախեան լցված են վարդագույն փրփուրային հեղուկով: Մարմնական և հատկապես ներքին օրգանների ախտահարված ավշային հանգույցները մեծացած են, արյունազեղված և ունեն մուգ կապույտ գույն [Wilkinson et al., 1981]: Փայծաղը նույնպես մեծացած է՝ 2-4 անգամ և ունի մուգ կարմիր երանգ, փափուկ կազմություն, ծայրերը կլորացած են: Թոքերը գերարյունալցված են, ծավալով մեծացած, ունեն մոխրա-կարմրավուն երանգ: Հաճախ հայտնաբերվում են արյունազեղումներ պլևրայի տակ, ինչպես նաև թոքաբորբի օջախներ: Սրտամկանում էպիկարդի և էնդոկարդի տակ նկատվում են տարբեր ձևերի և չափերի արյունազեղումներ: Երիկամները հաճախ մեծացած են, ունեն մուգ կարմիր երանգ, նկատվում են կետային արյունազեղումներ: Երիկամի ավազանը այտուցված է, արյունազեղումներով: Լյարդը մեծացած է, գերարյունալցված, անհավասարաչափ գունավորված մոխրա-կավագույն երանգով: Լեղապարկի լորձաթաղանթն այտուցված է, կետային արյունազեղումներով, որոնք հայտնաբերվում են նաև շճաթաղանթում: Աղեստամոքսային համակարգի լորձաթաղանթն այտուցված է, կարմիր, տեղ-տեղ արյունազեղված: Գլխուղեղի անոթներն արյունալցված են, կան արյունազեղումներ

[Wilkinson et al., 1981, Milev and Pavlov, 1981, http://webmvc.com/bolezn/livestock/infect/pig/aswfever.php]:

ԽԱԺ-ի սուր և ենթասուր ընթացքներում արյունատար անոթների պատերի մուկոիդ ուռճեցման և ֆիբրինոիդ մեռուկացման հետևանքով ավշային հանգույցներում և փայծաղում կտրուկ խախտվում է հեմոդինամիկան, լիմֆոիդ հյուսվածքները դատարկվում են, իսկ բջիջները քայքայվում են կարիոռեքսիսի հետևանքով [Milev and Pavlov, 1981, Carrasco et al., 1996b, http://veterinarua.ru/virusnye-infektsii/1169-afrikanskaya-chuma-svinej.html]: Կենտրոնական նյարդային համակարգում և պարենքիմատոզ օրագաններում նկատվում են տարբեր աստիճանի բորբոքային-դիստրոֆիկ փոփոխություններ: Ակտիվ վիուսը և նրա հակածինները հայտնաբերվում են հիվանդ կենդանու ավշային հանգույցներից, փայծաղից, ոսկրածուծից, լյարդից և թոքերից պատրաստված պատճենների մակրոֆագերում, ռետիկուլային բջիջներում, լիմֆոցիտներում, Կուպֆերյան բջիջներում, մեգակարիոցիտներում և հեմոցիտոբլաստներում: Տեսանելի են նաև շուրջկորիզային ներառուկներ [Fernandez et al., 1992, http://veterinarua.ru/virusnye-infektsii/1169-afrikanskaya-chuma-svinej.html]:

Օրգանիզմ թափանցած վիրուսի նուկլեինաթթուն դրդում է բջջային նյութափոխանակության մի շարք փոփոխություններ և ակտիվացնում է հիդրոլիտիկ ֆերմենտներ, որի արդյունքում ուժեղանում է լիմֆոիդ հյուսվածքների բջիջների պրոլիֆերացիան: Այդ բջիջներն ամենանպաստավոր միջավայրն են վիրուսի բազմացման համար: Խոզի օրգանիզմում վիրուսն արագ տարածվում է արյունատար և ավշատար անոթներով՝ ազդելով լիմֆոիդ հյուսվածքների, ոսկրածուծի և արյունատար անոթների պատերի վրա: Վիրուսի ազդեցությունն ավելի սաստկանում է, երբ զարգանում է իմունոլոգիական գերզգայնություն, որը արտահայտվում է պարարտ բջիջների և էոզինոֆիլների քանակի ավելացմամբ, ինչպես նաև անոթների պատերի մուկոիդ ուռճեցմամբ և ֆիբրինոիդ մեռուկի զարգացմամբ [Dixon et al., 2013, http://veterinarua.ru/virusnye-infektsii/1169-afrikanskaya-chuma-svinej.html]:

Քանի որ ԽԱԺ-ի վիրուսը բազմանում է լիմֆոիդ և ռետիկուլոէնդոթելային հյուսվածքների (ՌԷՀ) բջիջներում, այդ իսկ պատճառով հիվանդության սուր ընթացքի դեպքում այն ընկճում է իմունային համակարգը՝ քայքայելով կամ փոխելով լիմֆոիդ բջիջների գործունեությունը: ԽԱԺ-ի վիրուսը, բազմանալով խոզերի արյան սպիտակ բջիջներում պատճառ է հանդիսանում լեյկոպենիայի զարգացման: Մի շարք հեղինակներ ցույց են տվել, որ *in vivo* և *in vitro* պայմաններում վիրուսային վարակները հանգեցնում են լեյկոպենիայի, B և T բջիջների լիմֆոպենիայի, թրոմբոցիտոպենիայի և այդ բջիջների ապոպթոզի [Wardley and Wilkinson, 1977, Sánchez Vizcaino et al., 1981, Edwards et al., 1985, Salguero et al., 2004, Karalova et al., 2011a, Karalyan et al., 2012a]: Սուր ԽԱԺ-ի դեպքում լիմֆոցիտների քանակը կտրուկ նվազում է և, այդ իսկ պատճառով, հումորալ և բջջային իմունիտետի բաղադրիչները չեն կարողանում պայքարել ԽԱԺՎ-ի դեմ: Չնայած, որ խոզերի օրգանիզմում հայտնաբերվել են հակամարմիններ վիրուսային p30, p54 և p70 սպիտակուցների նկատմամբ, սակայն այդ հակամարմիններով պայմանավորված հակավիրուսային պաշտպանությունն արդյունավետ չէ սուր ԽԱԺ-ի դեպքում [Zsak et al., 1993, Gomez-Puertas et al., 1996]:

Հիվանդության ավելի ուշ փուլերում ախտաբանական փոփոխությունները (ընդհանուր վիճակի կտրուկ վատացում, անոթների թափանցելիության մեծացում, բազմաթիվ արյունազեղումներ) զարգանում են հիպերէրգիկ, ալերգիկ և աուտոիմուն գործընթացների պատճառով: Կտրուկ փոփոխվում են արյան հատկությունները. զարգանում է լեյկոպենիա, մեծանում է լեյկոցիտների սոսնձվելու կարողությունը: Զարգանում են ՌԷՀ-ի բջիջների ծանր դեգեներատիվ փոփոխություններ և բազմաթիվ արյունազեղումներ անոթների պատերի թափանցելիության խանգարման հետևանքով [Blome et al., 2013]: ԽԱԺ-ի ախտածագման և իմունածագման մեջ էական դեր են խաղում ալերգիկ և աուտոալերգիկ գործընթացները: Լիմֆոիդ բջիջների վրա վիրուսի թուլացրած շտամների ազդեցության դեպքում սինթեզվում են ոչ լիարժեք հակամարմիններ, որոնք չեն կարողանում չեզոքացնել վիրուսին: Ձևավորվում են հակածին-հակամարմին համալիրներ, որոնք կուտակվում են թիրախ օրգանների հյուսվածքներում՝ բերելով նրանց գործունեության խանգարումների, ինչպես նաև ալերգիկ և աուտոիմուն գործընթացների զարգացման: Դիտվում է բջջային իմունիտետի խթանում՝ վարակված բջիջների քայքայում (լիզիս), որոնք լիմֆոցիտների միջոցով ենթարկվել են սենսիբիլիզացիայի: Տեղի է ունենում նաև բջջային իմունիտետի միջնորդանյութերի (լիմֆոտոքսիններ, գաղթի արգելակման գործոն և այլն) արտազատում: Այս գործընթացների զարգացումը կախված է վիրուսի շտամի կենսաբանական հատկություններից և օրգանիզմի անհատական առանձնահատկություններից (իմուն համակարգի վիճակից) [Gómez-Villamandos et al., 2003, http://veterinarua.ru/virusnye-infektsii/1169-afrikanskaya-chuma-svinej.html]:

Սինթեզված հակամարմինների չեզոքացնող թույլ ակտիվությունը կապում են վիրուսի հակածինների կառուցվածքային առանձնահատկությունների հետ (հակածինների արգելափակումը ճարպերով, տիրոջ տեսակային հակածինների նման պաշտպանական հակածիններով դիմակավորում): Այն կապում են նաև լիմֆոիդ բջիջների գործունեության փոփոխության հետ (մակրոֆագերի հետ վիրուսի և հակածինների փոխազդեցության, ինչպես նաև T- և B-լիմֆոցիտների հետ այդ մակրոֆագերի փոխհամագործակցության խանգարումներ): Հակամարմինների ցածր ակտիվության պայմաններում ուժեղանում են բջջային իմունիտետի պատասխանները, որոնք ունեն էական նշանակություն վարակի արգելափաման մեջ, ինչպես նաև պատճառ են հանդիսանում հիպերզգայնության դանդաղեցված տիպի զարգացման, ալերգիկ և աուտոիմուն բարդությունների [Martins et al., 1993, Takamatsu et al., 2013, http://veterinarua.ru/virusnye-infektsii/1169-afrikanskaya-chuma-svinej.html]:

Հիվանդության ախտածագման մեջ որոշակի դեր են խաղում վիրուսի և էրիթրոցիտների փոխազդեցությունը և արյան մակարդելիության մեխանիզմի խանգարումները: Վիրուսի ազդեցությունն ավշային համակարգի բջիջների և էրիթրոցիտների վրա բնութագրվում է նշված բջիջների քայքայումով կամ նրանց գործունեության փոփոխություններով, ինչպես նաև ալերգիկ և աուտոիմուն գործընթացների զարգացմամբ [http://veterinarua.ru/virusnye-infektsii/1169-afrikanskaya-chuma-svinej.html, Wesley et al., 1984, Quintero et al., 1986]:

1.2 Խոզի ավշային հանգույցների կառուցվածքը

Ավշային հանգույցները հանդիսանում են ավշային համակարգի օրգաններ, որոնք կազմված են ռետիկուլյային հյուսվածքից և դասավորված են ավշային անոթներին համընթաց: Ավշային հանգույցներն իրականացնում են մի շարք գործառույթներ: Լիմֆոցիտներն այստեղ բազմանում են և հարստացնում արյունը իրենցով: Ավշի հետ հանգույց թափանցած զանազան մասնիկներ, միկրոօրգանիզմներ, գունանյութեր ենթարկվում են ֆագոցիտոզի կամ չեզոքանում են: Հանգույցի ռետիկուլոէնդոթելային բջիջներն ակտիվորեն մաքրում են ավիշը: Հանգույցի ֆագոցիտային բջիջները նաև կլանում են իրենց գործառույթը չկատարող էրիթրոցիտներին և լեյկոցիտներին, ինչպես նաև ավշային հանգույցները ծառայում են որպես իմունային պաշտպանության օրգաններ: Ավշային հանգույցները հանդիսանում են նրանցով հոսող ավշի համար կենսաբանական և մեխանիկական ֆիլտր՝ իրենց մեջ կուտակելով միկրոօրգանիզմներին: Խոզերի ավշային հանգույցները կոնգլոմերատային, օվալաձև և կլորավուն են (թվով 190): Խոզերի ավշային հանգույցների արտաքին մակերեսը հաճախ ունենում է կարմրավուն երանգ՝ կապված արյունատար անոթների դասավորվածության առանձնահատկությունների հետ: Ներքին օրգանների (թոքեր, լյարդ, աղիքներ) ավշային հանգույցնեը կտրվածքում ունենում են հստակ գունավորում, ինչը կապված է նրանցում պարունակվող տարբեր գունանյութերի հետ (հեմոսիդերին, մելանին և այլն) [Иванов и Ковальский, 1976]:

Ավշային հանգույցը մի կողմից ուռուցիկ է, իսկ հակառակ կողմում ունի ներհրում՝ դրունք (hilus): Դրունքից հանգույց են մտնում զարկերակներ և նյարդեր, իսկ դուրս են գալիս երակներ և արտատար ավշային անոթներ (vasa efferentia): Ավիշ բերող անոթները (vasa afferentia) հանգույց են մտնում հակառակ՝ ուռուցիկ կողմից: Խոզերի մոտ արտատար և ավիշ բերող անոթները ունեն հակառակ դասավորություն. ավիշ բերող անոթները հանգույց են մտնում դրունքից, իսկ արտատարները դուրս են գալիս ուռուցիկ կողմից, ինչը ցույց է տրվել 1938թ-ին [Baum and Grau]: Ինչպես նաև դրունքով են ներս մտնում արյունատար անոթները և նյարդերը, որոնք անցնում են շարակցահյուսվածքային խտրոցներով (տրաբեկուլներով): Ավիշ բերող անոթները թափանցում են ավշային ծոցեր՝ սինուսներ: Խոզերի ավշային հանգույցի դրունքը հաճախ դժվար տեսանելի է [Иванов и Ковальский, 1976, Dellmann and Brown, 1976]:

Ավշային հանգույցը կազմված է ստրոմայից և պարենքիմայից: Ստրոմայի կազմության մեջ են մտնում պատիճը և տրաբեկուլները: Պատիճից դուրս են գալիս տրաբեկուլները և, մոտենալով ավշային հանգույցի կենտրոնին, կարող են միանալ՝ կազմելով ցանց: Պարենքիման կազմված է ռետիկուլային հյուսվածքից՝ լցված լիմֆոցիտներով, որտեղ տարբերում են կեղևային (cortex) և միջուկային (medulla) շերտերը [Merighi et al., 1986]: Կեղևային նյութը պարունակում է երկրորդային հանգուցիկներ՝ ֆոլիկուլներ: Տարբերում են առանց լուսավոր կենտրոնների (կազմված հիմնականում լիմֆոիդ բջիջներից) և լուսավոր կենտրոններով ֆոլիկուլներ (լուսավոր կենտրոն եզրույթին համարժեք օգտագործվում են նաև սաղմնային կենտրոն, ռեակտիվ կենտրոն, բազմացման կենտրոն, գերմինատիվ կենտրոն եզրույթները): Լուսավոր կենտրոնների զարգացումը կատարվում է օրգանիզմի վրա հակածինների ազդեցության ներքո: Ավշային ֆոլիկուլների լուսավոր կենտրոնները բացակայում են օրգանիզմի սաղմնային զարգացման ընթացքում, ինչպես նաև չեն հայտնաբերվում ստերիլ պայմաններում մեծացած կենդանիների մոտ [http://hystology.ru/limfaticheskie_uzly.html]: Ֆոլիկուլի կենտրոնական մասին բնորոշ է հատուկ դենդրիտային բջիջների առկայությունը: Այդպիսի բջիջները բնորոշ են միայն երկրորդային ավշային օրգանների B-գոտիներին: Այդ դենդրիտային բջիջներն իրենց բջջաթաղանթում գտնվող ընկալիչների միջոցով կարող են ֆիքսել հակածինը և երկար ժամանակ ամուր պահել ստեղծված հակածին-հակամարմին համալիրը՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով նրա և B-լիմֆոցիտների արդյունավետ շփման համար: Լուսավոր կենտրոնը պարունակում է ազատ մակրոֆագեր, որոնք ունակ են ֆագոցիտոզի ենթարկել լիմֆոցիտների քայքայման արդյունքում առաջացած նյութերը: Այդպիսի մակրոֆագերի ցիտոպլազման վակուոլիզացված է և պաարունակում է գունավորված մարմնիկներ: Այստեղ են գտնվում նաև խոշոր չափերի բլաստ բջիջներ: Ֆոլիկուլի ծայրամասային հատվածում դասավորված են համեմատաբար փոքր լիմֆոցիտները, որոնք պատկանում են B բջիջներին: Այսպիսով, ավշային հանգույցի ֆոլիկուլները համարվում է թիմուս ոչ կախյալ գոյացություններ [Ramos et al., 1990]: Ավշային ֆոլիկուլի միկրոկառուցվածքը շատ դինամիկ է և կախված է ավշային հանգույցի ֆունկցիոնալ վիճակից, ինչն էլ իր հերթին որոշվում է հակածինի նկատմամբ իմուն պատասխանով: Խոզերի մոտ երկրորդային հանգուցիկները հեշտությամբ տարբերվում են և ունեն լուսավոր կենտրոններ: Ավշային ֆոլիկուլների ռեակտիվ կենտրոնները գնդաձև են և ունեն 2 գոտի՝ լուսավոր (light zone) և մուգ (dark zone): Լուսավոր գոտին այդպես է կոչվում, քանի որ պարունակում է ավելի շատ ռետիկուլային բջիջներ, քան մուգ գոտին, որը կազմված է հիմնականում մուգ ներկվող, միջին չափի լիմֆոցիտներից: Լուսավոր գոտու վերևում գտնվում է փոքր լիմֆոցիտներից կազմված պսակը (cap), որը շատ կաթնասունների դեպքում տեղակայված է ավշային հանգույցի եզրային ծոցի մոտ: Սակայն խոզերի դեպքում լիմֆոցիտներից կազմված պսակը գտնվում է ռեակտիվ կենտրոնի խորքում՝ պատիճից հեռու [Hunt,1968, Anderson, 1972]:

Անդրադառնալով խոզերի ավշային ֆոլիկուլներին կարևոր է նշել, որ ավշային հանգուցիկների բազմացման կենտրոնի լուսավոր գոտին այնքան էլ հստակ տարբերակելի չէ մուգ գոտուց ինչպես մարդու մոտ: Լուսավոր գոտին տեղակայված է բազմացման կենտրոնի բևեռում՝ ավշային հանգույցի պատիճից հեռու (ունի հակառակ դասավորությունը ի տարբրություն կաթնասունների այլ տեսակների): Խոզերի ավշային հանգույցներում տրաբեկուլներն անցնում են ողջ հանգույցով, իսկ բազմացման կենտրոնների լուսավոր գոտիներն ուղղված են դեպի տրաբեկուլները՝ հաճախ լիմֆոցիտների պսակի հետ միասին: Խոզերի ավշային ֆոլիկուլները հիմնականում դասավորված են ավշային հանգույցի կենտրոնում, այլ ոչ թե ծայրամասերում [Hunt,1968]:

Ինչպես ցույց են տվել R.M. Binns-ը և J.G. Hall-ը (1966), խոզերի ավշային հանգույցներում կեղևային և միջուկային նյութերը տեղակայված են հակառակ (ի տարբերություն մարդու և մյուս կաթնասունների). նախ միջուկային նյութն է, ապա՝ կեղևայինը: Նրանք նաև պարզել են, որ խոզերի ավշում լիմֆոցիտները հայտնաբերվում են շատ քիչ քանակությամբ: Նրանք ենթադրել են, որ լիմֆոցիտները խոզի ավշային հանգույցներ են տեղափոխվում մազանոթային համակարգից, և ապա հետ դեպի մազանոթային համակարգ, այլ ոչ թե մազանոթայինից դեպի ավշային համակարգ (ինչպես մյուս կենդանիների դեպքում): Այս հանգամանքը կարող էր հիմք ծառայել ավշում լիմֆոցիտների քիչ քանակություն հայտնաբերելու համար: Իսկ այս ամենը, ըստ նրանց, բացատրվում է խոզերի ավշային հանգույցների եզակի ու յուրահատուկ կառուցվածքով: Նրանց կողմից բացահայտված մյուս տարբերակիչ կառուցվածքային առանձնահատկությունն այն էր, որ ավշային հանգուցը ունի մինչև 6 էֆֆերենտ ծորաններ, ինչը ոչխարների և հորթերի դեպքում 1 կամ 2 հատ է: Այս ծորանները համեմատաբար փոքր են, ունեն մինչև 1մմ տրամագիծ [Binns and Hall, 1966, Bennell and Husband, 1981, Pabst and Geisler, 1981]:

Ապացուցված է, որ գերմինատիվ կենտրոնի լուսավոր գոտին դասավորվում է հակածինիններ ընդունելու վայրին ավելի մոտ և այն ուղղված է դեպի հանգույցի եզրային ծոցը, այսինքն դեպի ավիշը ներս բերող հատվածը: Ինչպես արդեն նշվել է վերևում խոզերի մոտ ավիշը ավշային հանգույց է մտնում դրունքով, ինչով էլ հավանաբար բացատրվում է գերմինատիվ կենտրոնների տեղակայումը: Միջուկային շերտում գտնվում են երկրորդային հանգուցիկներից դուրս եկող փափկալարերը, որոնց դասավորվածությունը համապատասխանում է ավշի շարժման ուղղությանը (օրինակ, մարդու դեպքում): Խոզերի մոտ իսկական փափկալարերը բացակայում են [Hunt, 1968]:

Հարկեղևային կամ պարակորտիկալ գոտին համարվում է թիմուս-կախյալ գոտի և լցված է T-լիմֆոցիտներով: Այս գոտում հանդիպում են մակրոֆագերի տարատեսակ հանդիսացեղ ինտերդիգիտացնող բջիջներ, որոնք ունեն բազմաթիվ մատնաձև ելուստներ: Այս բջիջների կորզները լուսավոր են՝ քրոմատինի եզրային տեղադրությամբ: Ենթադրվում է, որ այս բջիջներն իրենց հումորալ գործոններով՝ ցիտոկիններով դրդում են T-լիմֆոցիտների պրոլիֆերացիան և տարբերակումը: Հարկեղևային գոտուն հատուկ են յուրահատուկ տիպի անոթները՝ հետմազանոթային երակիկները, որոնք հանդիսանում են ավշային հանգույցի մեջ շրջանառվող լիմֆոցիտների մտնելու վայրը: Հարկեղևային գոտու չափերը և բջջային կազմը հաստատաուն չեն և կախված են իմուն պատասխանի բնույթից և փուլից: Բջջային իմունիտետի զարգացման դեպքում այս գոտում տեղի են ունենում T-լիմֆոցիտների խթանում, բլաստտրանսֆորմացիա, պրոլիֆերացիա և տարբերակում: Խոզերի մոտ ծոցերն ավելի նեղ են [http://hystology.ru/limfaticheskie_uzly.html]:

1.2.1 Ավշային հանգույցների ախտաբանությունը ԽԱԺ-ի դեպքում

Չնայած որ լիմֆոիդ հյուսվածքների ախտաբանությունը ԽԱԺ-ի դեպքում շարունակվում է ուսումնասիրվել [Каваленко и др. 1972, Макаров, 2011, Gómez-Villamandos et al., 2003, Gómez-Villamandos et al., 2013], պետք է նշել, որ ԽԱԺՎ-ի II գենոտիպի ախտաբանական ազդեցությունը լիովին ուսումնասիրված չէ: Ավշային հանգույցների ախտահարման աստիճանը կախված է ԽԱԺՎ-ի գենոտիպից (վիրուլենտության աստիճանից), հիվանդության ընթացքից, տևողությունից, խոզերի ընտանի կամ վայրի լինելուց:

ԽԱԺՎ-ի ազդեցությունը լիմֆոիդ օրգանների վրա արտահայտվում է ինչպես մակրոփոփոխություններով, այնպես էլ միկրոփոփոխություններով:

Մակրոփոփոխություններն արտահայտվում են ավշային հանգույցների չափերի մեծացմամբ, գույնի փոփոխությամբ (մուգ կապույտ երանգ և բազմաթիվ արյունազեղումներ) [Бурба, 1967, Carrasco et al., 1997a, Rodríguez et al., 1996, Wilkinson et al., 1981, Ekue et al., 1989, Milev and Pavlov, 1981]:

Արյունազեղումների զարգացման պատճառ է հանդիսանում օրգաններում և հյուսվածքներում անոթային փոփոխությունները՝ անոթաթափանցելիության մեծացումը, անոթների էնդոթելային բջիջների ախտահարումները [Gómez-Villamandos et al., 1997a]: Սուր ԽԱԺ-ի դեպքում հիվանդության արդեն 3-րդ օրից սկսած ավշային հանգույցներում հայտնաբերվում են արյունազեղումներ: Միևնույն ժամանակ դիտվում է մազանոթների և փոքր անոթների էնդոթելային բջիջների ֆագոցիտային գործընթացի խթանում, էնդոթելային բջիջների նվազում, ինչպես նաև արյան բջիջների և մեռուկի կուտակումներ էնդոթելի տակ: Անոթների լուսանցքները խցանվում են թրոմբոցիտներով և ֆիբրինային միկրոմակարդուկներով: Վիրուսի բազմացում հայտնաբերվում է խթանված էնդոթելային բջիջների հարևանությամբ գտնվող մոնոցիտներում և մակրոֆագերում: Հետվարակային 5-րդ օրը (ՀՎՕ) վիրուսի վերարտադրությունը դիտվում է նաև շրջանառվող նեյտրոֆիլներում: 7-րդ օրը ախտահարումներն ավելի ինտենսիվ են և վիրուսի վերարտադրությունը գրանցվում է նաև ծոցերի և մազանոթների էնդոթելային բջիջներում, ինչպես նաև պերիցիտներում, ֆիբրոբլաստներում, հարթ մկանային և ռետիկուլյար բջիջներում: Հետազոտության արդյունքները ենթադրում են, որ ավշային հանգույցների արյունազեղումները կապված են էնդոթելի խթանման և տարածուն ներանոթային մակարդումների հետ: Անոթի պատի բջիջներում վիրուսի վերարտադրությունը տեղի է ունենում հիվանդության ավելի ուշ փուլերում և, հետևաբար, խաղում է երկրորդային դեր [Carrasco et al., 1997a, Gómez-Villamandos et al., 1997a]:

ԽԱԺՎ-ի ազդեցությունը հեմատոպոեզի վրա ուսումնասիրելիս ոսկրածուծում նույնպես գրանցվել է նմանատիպ պատկեր և փոփոխություններ: Ուլտրակառուցվածքային փոփոխությունները զարգանում են վարակումից 3 օր հետո և պահպանվում մինչև 7-րդ օրը՝ բնութագրվելով մակրոֆագերի ակտիվացմամբ: Վարակման 5-րդ օրից հետո վիրուսի վերարտադրությունը գրանցվում է մոնոցիտ/մակրոֆագերում, ռետիկուլյար բջիջներում, ոչ հասուն նեյտրոֆիլներում և նախամոնոցիտներում: Արդեն 7-րդ օրը վիրուսի վերարտադրությունը հայտնաբերվում է մեգակարիցիտներում, էնդոթելային բջիջներում և պերիցիտներում: Անոթային փոփոխությունները բնութագրվում են սինուսոիդ էնդոթելային բջիջների ակտիվացմամբ, ներանոթային մակարդումներով և միկրոմիջավայրի ու հեմատոպոետիկ բջիջների միջև ֆիբրինային թելերի տարածումով: Էական փոփոխություններ չեն գրանցվում արյան սպիտակ բջիջների ընդհանուր հաշվարկում, մոնոցիտների տոկոսային հարաբերությունում և թրոմբոցիտների հաշվարկում: Սակայն վարակումից հետո 3-րդ օրից սկսած հայտնաբերվում է սուր լեյկոպենիա և նեյտրոֆիլիա: Հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ սուր ԽԱԺ-ի դեպքում ոսկրածուծում հեմատոպոեզը աճում է՝ համընկնելով մակրոֆագերի ակտիվացման հետ: Ո՛չ անոթային փոփոխությունները, ո՛չ էլ վիրուսի բազմացումը ոսկրածուծի բջջային տարբեր պոպուլյացիաներում չեն հանգեցնում ոսկրածուծի գործունեության նվազմանը: Հեմատոպոեզի աճը կարող է թողնել դրական ազդեցություն՝ կանխելով թրոմբոցիտոպենիայի վաղաժամ սկիզբը և բացասական ազդեցություն՝ խթանելով վիրուսի տարածումը նեյտրոֆիլների միջոցով: Ուժեղացած հեմատոպոեզն անկարող է փոխհատուցել լեյկոպենիան [Gómez-Villamandos et al., 1997b]:

Խոզերի ընդերային և մարմնական ավշային հանգույցներում ախտաանատոմիական փոփոխություններն սկզբում բնութագրվում են սերոզ, ապա սերոզ-հեմոռագիկ և հեմոռագիկ լիմֆադենիտով [Белянин и др., 2011]: Ավշային հանգույցներում միկրոփոփոխությունները դրսևորվում են բջիջների պոպուլյացիայի քանակական փոփոխություններով, լիմֆոիդ բջիջների դատարկմամբ, որը զարգանում է ապոպթոզի հետևանքով [Gómez-Villamandos et al., 1995b, Carrasco et al., 1996b, Blome et al., 2013, Salguero et al., 2004]: Ապոպթոզը նկարագրվում է ինչպես կեղևային շերտում, այնպես էլ թիմուս-կախյալ հատվածում, իսկ ծայրամասային արյան մեջ դիտվող լիմֆոպենիան կապված է T- լիմֆոցիտների դատարկման հետ [Carrasco et al., 1996b]: Ապոպթոզի են ենթարկվում ինչպես ԽԱԺՎ-ով ախտահարված, այնպես էլ չախտահարված լիմֆոցիտները [Ramiro-Ibáñez et al., 1996]: Ավշային հանգույցների դատարկումը իրականանում է T- և B- լիմֆոցիտների ապոպթոզի հետևանքով. նախ ապոպթոզի են ենթարկվում T- լիմֆոցիտները, ապա ավշային ֆոլիկուլներում գտնվող

B-լիմֆոցիտները: Այդ ֆոլիկուլներում ապոպտոզի ենթարկվող B բջիջների հետ միասին հայտնաբերվում են նաև վիրուսով ախտահարված այլ բջիջներ: Չախտահարված լիմֆոցիտների ապոպտոզը խթանվում է ցիտոկիններով կամ ապոպտոզային միջնորդանյութերով, որոնք անջատվում են ԽԱԺ-ի վիրուսով վարակված մակրոֆագերից [Oura et al., 1998a, Oura et al., 1998b]:

2009 թվականին *in vitro* ուսումասիրությունների արդյունքում պարզվել է, որ մակրոֆագային կուլտուրայում վարակից (բարձր վիրուլենտություն ունեցող շտամով) մի քանի ժամ անց արդեն նկատվում են ապոպտոզի նշաններ, իսկ 18 ժամ հետո արդեն արգելակվում է կասպազ-3-ի ակտիվացումը, բայց ապոպտոզը շարունակում է զարգանալ: Հետևաբար, ապոպտոզը իրականացվում է կասպազից անկախ և ենթադրվում է, որ գոյություն ունեն դեռևս անհայտ այլ մեխանիզմներ, որոնք հանգեցնում են տեր բջջի ապոպտոզային մահվան [Portugal et al., 2009]:

Սակայն 2012 թվականին ԽԱԺ-ի դեպքում ապոպտոզի դերը ԽԱԺՎ-ի վերարտադրության վրա պարզելու համար կրկին ուսումնասիրվել է կասպազ խմբի սպիտակուցների ակտիվացումը և նրանց արգելակումը: Պարզվել է, որ կասպազներ 3, 9 և 12-ը ակտիվանում են վարակումից 16 ժամ հետո, իսկ կասպազ 8-ը չի ակտիվանում: Իրոք, կասպազ 3-ի ակտիվացումը վարակի վաղ փուլում կարող է վճռական դեր խաղալ բջջից վիրուսի դուրս գալու գործընթացում [Galindo et al., 2012]:

Այսպիսով, լիմֆոիդ օրգաններում ապոպտոզի հետևանքով մահացած լիմֆոցիտները հիմք են հանդիսանում սուր ԽԱԺ-ում վաղ լիմֆոպենիայի զարգացման համար [Gómez-Villamandos et al., 1997b, Gómez-Villamandos et al., 2003., Karalyan et al., 2012b]:

1.3 Խոզի փայծաղի կառուցվածքը

Փայծաղն ամենամեծ լիմֆոիդ օրգանն է մի շարք գործառույթներով. արյունաստեղծ գործառույթ՝ լիմֆոպոեզ, որն ընդգրկում է նաև T- և B-լիմֆոցիտների հակածին-կախյալ տարբերակումը, պաշտպանական գործառույթ՝ իմուն պաշտպանություն: Այն պահեստավորում ու ֆիլտրում է արյունը. կարմիր կակղանը պարունակում է մեծաթիվ մակրոֆագեր, որոնք կլանում են արյան կարմիր բջիջները: Ընդ որում, էրիթրոցիտները կորցնում են իրենց օսմոտիկ կայունությունը և ենթարկվում են հեմոլիզի: Ազատված հեմոգլոբինը վերածվում է բիլիռուբինի և հեմոսիդերինի: Բիլիռուբինը անցնում է լյարդ, որտեղ օգտագործվում է լեղու սինթեզի համար, իսկ հեմոսիդերինը միանում է պլազմայի տրանսֆերինի հետ: Այս միացությունը կլանվում է արյունից կարմիր ոսկրածուծի մակրոֆագերի կողմից, որոնք էլ երկաթ են մատակարարում զարգացող էիրթրոցիտներին [http://vethist.snu.ac.kr/his_lecture/lymphatic.htm, Иванов и Ковальский, 1976, Dellmann and Brown, 1976]:

Փայծաղն արտաքինից պատված է միջին հաստության շարակցահյուսվածքային պատիճով՝ շրջապատված որովայնամզով: Պատիճը կազմված է երկու շերտից՝ շարակցական հյուսվածքից և հարթ մկաններից: Պատիճից դեպի օրգանի ներս ուղղվում են խտրոցներ, որոնք կազմված են կոլագենային և առաձգական թելերից, ինչպես նաև հարթ միոցիտներից: Փայծաղի հենքը ռետիկուլային հյուսվածքն է, որը կազմված է ռետիկուլային բջիջներից և թելերից: Փայծաղը կազմված է կարմիր (pulpa rubra) և սպիտակ (pulpa alba) կակղաններից: Սպիտակ կակղանը կազմված է ավշահանգուցիկներից և շուրջզարկերեակային ավշային բունցներից: Ավշահանգուցիկների ամենահիմնական բջիջները B-լիմֆոցիտներն են, որոնք հիմնականում տեղակայված են ավշային հանգուցիկի լուսավոր կամ գերմինատիվ կենտրոնում (B-լիմֆոցիտների գոտի՝ zona germinativa): Ավշահանգուցիկների պերիֆերիկ մասով անցնում է ավշային ֆոլիկուլի զարկերակը, որը շրջապատված է շուրջզարկերակային կամ T-լիմֆոցիտների գոտիով (zona periarterialis): Բացի T- և B-լիմֆոցիտների գոտիներից ավշային հանգուցիկում առկա է նաև եզրային կամ մարգինալ գոտի (zona marginalis) (խառը՝ T- և B-լիմֆոցիտներ, ինչպես նաև բազմաթիվ մակրոֆագեր):

Շուրջզարկերակային գոտին ըստ բջջային կազմի և գործառույթների համապատասխանում է ավշային հանգույցների հարկեղևային գոտուն: Այստեղ տեղափոխված T-լիմֆոցիտները ենթարկվում են բլաստտրանսֆորմացիայի, պրոլիֆերացիայի և հակածին-կախյալ տարբերակման: Տարբերակման շնորհիվ ձևավորվում են էֆեկտոր բջիջներ, T-հելփերներ, T-ռեգուլիատորներ, T-քիլերներ և հիշողության բջիջներ:

Լուսավոր կենտրոնն իր բջջային կազմով և գործունեությամբ համանման է ավշային հանգույցի ավշահանգուցիկի լուսավոր կենտրոնին: Լուսավոր կենտրոնում կարմիր ոսկրածուծից այստեղ եկած B-լիմֆոցիտները ենթարկվում են բլաստտրանսֆորմացիայի, պրոլիֆերացիայի և հակածին-կախյալ տարբերակման, որի շնորհիվ ձևավորվում են էֆեկտոր բջիջներ [http://vethist.snu.ac.kr/his_lecture/lymphatic.htm, Иванов и Ковальский, 1976, Dellmann and Brown, 1976]:

Շուրջզարկերակային ավշային բունոցները տեղակայվում են կակղանային զարկերակների երկայնքով և կազմված են լիմֆոցիտների երկու շերտից՝ արտաքինից տեղակայված են T-լիմֆոցիտների, իսկ ներսից՝ B-լիմֆոցիտների շերտերը [http://vethist.snu.ac.kr/his_lecture/lymphatic.htm, Иванов и Ковальский, 1976, Dellmann and Brown, 1976]:

Փայծաղի կարմիր կակաղանը կազմված է ռետիկուլային հյուսվածքից, կարմիր գույն տվող արյան բջջային տարրերից և գլխավորապես սինուսոիդային տիպի արյունատար անոթներից:

Փայծաղի ծոցերը կազմված են մասնագիտացված ցուպիկաձև էնդոթելային բջիջներից: Փափկալարերը տեղակայվելով ծոցերի միջև ձևավորում են լայն եռաչափ ցանց, որը կազմված է ռետիկուլային թելերից և բջիջներից, էրիթրոցիտներից, մակրոֆագերից, լիմֆոցիտներից, պլազմոցիտներից և այլ լեյկոցիտներից [Иванов и Ковальский, 1976, http://vethist.snu.ac.kr/his_lecture/lymphatic.htm, Dellmann and Brown, 1976]:

1.3.1 Փայծաղի ախտաբանությունը ԽԱԺ-ի դեպքում

Ինչպես ավշային հանգույցներում, այնպես էլ փայծաղում ԽԱԺ-ի վիրուսի ազդեցությունը դրսևորվում է մակրո- և միկրոփոփոխություններով: Մակրոփոփոխություններն արտահայտվում են փայծաղի չափերի մեծացմամբ՝ 2-4 անգամ (սպլենոմեգալիա), գույնի փոփոխությամբ (մուգ կարմիր կամ բալագույն) և կլորացած եզրերով: Փայծաղում հայտնաբերվում են հեմոռագիկ ինֆարկտի բազմաթիվ օջախներ [http://veterinarua.ru/virusnye-infektsii/1169-afrikanskaya-chuma-svinej.html]:

ԽԱԺՎ-ով վարակված խոզերի օրգանիզմում արյան և ավշի միջոցով տարածված վիրուսն ախտահարելով փայծաղն առաջացնում է այդ օրգանում դիստրոֆիկ և նեկրոտիկ փոփոխություններ: Հիվանդության դինամիկայում փայծաղում զարգացող մորֆոլոգիական փոփոխությունները դրսևորվում են լիմֆոիդ կառուցվածքների պրոլիֆերացիայի արգելակումով, լիմֆոցիտների և ռետիկուլոէնդոթելային բջիջների զանգվածային կարիոպիկնոզով և կարիոռեքսիսով [Белянин и др., 2011, Макаров и др. 2010.]:

Փայծաղի հյուսվածաբանական ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերվում են զանգվածային, միաձուլված արյունազեղումներ՝ հեմոսիդերինի կուտակմամբ, անոթներում մակարդուկներ, կակղանում եզակի պահպանված և չափերով փոքրացած ֆոլիկուլներ, լիմֆոցիտների կարիոպիկնոզ և կարիոռեքսիս: Փայծաղում բջիջների պրոլիֆերատիվ ակտիվության իմունոհիստոքիմիական հետազոտությունները պարզել են, որ պրոլիֆերացիայի ենթարկվող բջիջների ընդհանուր քանակության ֆոնի վրա գերակշռում են նեկրոզային և ապոպթոզային վիճակներում գտնվող բջիջները, ինչը վկայում է բջիջների պրոլիֆերացիայի արգելակման մասին [Колбасов и др., 2012, Oura et al., 1998a, Oura et al., 1998b]:

Ցույց է տրված, որ ԽԱԺՎ-ի շատ շտամեր միտոգեններին արձագանքելու սպլենոցիտների ունակության կորստի կամ նվազման պատճառ են հանդիսանում: ԽԱԺ-ի դեպքում նվազում են նաև միտոգեն գործոններով խթանված T բջիջների պրոլիֆերատիվ ունակությունը: Նմանապես, մոնոցիտները, որոնք անմիջականորեն վարակված են վիրուսով, դառնում են թերի իրենց գործառույթով որպես անտիգեն ներկայացնող բջիջներ, երբ նրանք ավելացվում են միտոգենով խթանված T բջիջներին: Չնայած նրան, որ ախտահարված փայծաղում լեյկոցիտների թիվը նվազում է արագորեն հիվանդության զարգացմանը զուգընթաց, տարբեր բջջային ֆենոտիպերի համամասնությունը մնում է անփոփոխ: Այսպիսով, լիմֆոիդ հյուսվածքում լիմֆոցիտների ակտիվության նվազումը կարելի է ուղղակիորեն վերագրել մոնոցիտների վարակմանը [Childerstone et al, 1998]:

Վաղուց հայտնի է, որ ԽԱԺՎ-ն հիմնականում տեղակայվում է լիմֆոիդ հյուսվածքների մոնոնուկլեար ֆագոցիտային համակարգի բջիջներում: Սուր ԽԱԺ-ով վարակված կենդանիների լիմֆոիդ հյուսվածքներին բնորոշ են ծանր ախտահարումները և բջիջների դատարկվելը, որը կապված է մեծաքանակ մակրոֆագերի վարակման հետ: Մեծաթիվ լիմֆոցիտների մահվան պատճառ է հանդիսանում ապոպթոզը, այլ ոչ թե նեկրոզը: ԽԱԺՎ-ի լետալ շտամով վարակված խոզերի մոտ 3-րդ ՀՎՕ-ում փայծաղի կարմիր և սպիտակ կակղաններում T և B բջիջների գոտիներում շատ լիմֆոցիտներ գտնվում են ապապթոզային վիճակում: Փայծաղի շուրջզարկերակային T-լիմֆոցիտների գոտում T բջիջների ապոպթոզն սկսվում է ավելի ուշ՝ 5-7-րդ ՀՎՕ-ում: Ապոպթոզի են ենթարկվում ոչ միայն վարակված, այլև չվարակված լիմֆոցիտները, ինչը խթանվում է ցիտոկիններով կամ ապոպթոզային միջնորդանյութերով, որոնք անջատվում են վարակված մակրոֆագերից [Oura et al., 1998b]:

ԽԱԺ-ի դինամիկայում գրանցված ապոպթոզից զատ սուր ԽԱԺ-ի ժամանակ 3-րդ ՀՎՕ-ում փայծաղի փափկալարերի ուլտրակառուցվածքային հետազոտություններում հայտնաբերվում են վիրուսի բազմացման կենտրոններ պարունակող մեծաքանակ մակրոֆագեր՝ ամրացած մկանային բջիջներին: 5-րդ ՀՎՕ-ից փայծաղի փափկալարերում հայտնաբերվում են բազմաթիվ էրիթրոցիտներ՝ կապված մեծաքանակ ֆիբրինի կուտակումների հետ, իսկ մակրոֆագերն արդեն չեն հայտնաբերվում: Այսպիսով, փայծաղի փափկալարերում ֆիքսված մակրոֆագերում ԽԱԺՎ-ի բազմացումը և դրան հետևող ցիտոպատիկ ազդեցությունները կարող են պատասխանատու լինել ֆիբրինի կուտակման համար [Carrasco et al, 1997b]:

Փայծաղում (ինչպես նաև լյարդում, ավշային հանգույցներում, ոսկրածուծում, թոքերում և երիկամներում) լիմֆոիդ և միելոիդ բջիջների ակտիվության և քանակական փոփոխություններից բացի սուր ԽԱԺ-ի դեպքում հայտնաբերվում է նաև վիրուսի ազդեցությամբ թրոմբոցիտների ակտիվացում և հատիկազրկում: Այս փոփոխությունները համընկնում են մոնոնուկլեար-ֆագոցիտային համակարգի ակտիվացման և մոնոցիտ/մակրոֆագերում վիրուսի վերարտադրության հետ: Վերոնշյալ փոփոխությունները ի հայտ են գալիս 3-րդ ՀՎՕ-ում: Հիվանդության 5 և 7-րդ օրերին թրոմբոցիտներն սկսում են սոսնձվել, որը համընկնում է էնդոթելային փոփոխությունների հետ: Թրոմբոցիտներում վիրիոնները հայտնաբերվում են սուր ԽԱԺ-ի վերջին փուլերում: Ինչ վերաբերում է ենթասուր ԽԱԺ-ին, ապա թրոմբոցիտների ակտիվացումը գրանցվում է կրկին 3-րդ ՀՎՕ-ում, իսկ թրոմբոցիտների սոսնձումը ավելի քիչ է գերակշռում: Վիրիոնները թրոմբոցիտներում հայտնաբերվում են 5-7-րդ ՀՎՕ-ին: Սա ենթադրում է, որ թրոմբոցիտները նպաստում են ԽԱԺ-ի վիրուսի տարածմանը խոզի օրգանիզմում, հատկապես ենթասուր վարակի դեպքում [Gómez-Villamandos et al., 1996]:

1.4 Ցիտոկիններ

Ցիտոկինները կազմում են իմունային համակարգի ֆունկցիոնալ առումով կարևոր և ունիվերսալ հումորալ գործոնների մեծաթիվ խումբ, որոնք շատ կարևոր են բնածին և ադապտիվ իմունիտետի համար: Ցիտոկինները մասնակցում են բազմաթիվ գործընթացների: Ցիտոկիններին չի կարելի համարել միայն իմունային համակարգի գործոններ, քանի որ նրանք կարևոր դեր են խաղում արյունաստեղծման գործընթացում, հյուսվածքային հոմեոստազում, միջհամակարգային ազդակների փոխանցման մեջ [Ярилин, 2010]:

Գոյություն ունեն հակավիրուսային ազդեցություն ունեցող ցիտոկիններ, ինչպիսիք են ինտերֆերոնները, գաղութախթանիչ գործոնը (օժտված արյունաստեղծ ազդեցությամբ) և ուռուծքի նեկրոզի գործոնը՝ ՈՒՆԳ (TNF): Առանձնացվել է ցիտոկինների մեկ այլ խումբ նաև՝ քեմոկիններ (քեմոտաքսիսի ցիտոկիններ) [Ярилин, 2010]:

Ցիտոկինների արտադրության համար անհրաժեշտ է համապատասխան գեների ակտիվացում: Ցիտոկինների սինթեզի համար ինդուկտորներ են համարվում բջիջների բնական լիգանդները: Օրինակ, մոնոցիտ/մակրոֆագի համար դա լիպոպոլիսախարիդներն են և բակտերիալ այլ նյութեր, որոնք ազդում են TLR-ի միջոցով, իսկ լիմֆոիդ բջիջների համար՝ հակածիններն են, որոնք ազդում են հակածինը ճանաչող ընկալիչների միջոցով [Lydyard et al., 2011]:

Ցիտոկինների արտադրության համար պատասխանատու են պրոդուցենտ բջիջների 2 հիմնական խմբեր՝ միելոիդ և լիմֆոիդ բջիջները: Ամենաակտիվ պրոդուցենտներն են, համապատասխանաբար, մոնոցիտ/մակրոֆագերը և T-լիմֆոցիտները: Միելոիդ բջիջներում ցիտոկինների գեների ակտիվացման գործընթացները և նրանց արտադրությունը ընթանում է ավելի արագ, քան լիմֆոիդ բջիջներում [Lydyard et al., 2011]:

Բոլոր դեպքերում բջջի ընկալունակությունը տվյալ ցիտոկինի հանդեպ կախված է նրա նկատմամբ ընկալիչի առկայությունից այդ բջջի մակերեսին: Ցիտոկին-ընկալիչ փոխազդեցությունը բերում է բջջի մեջ նոր գործընթացների ծավալմանը, ինչպիսիք են բջջի աճի խթանումը, տարբերակումը կամ մահը [Ярилин, 2010, Lydyard et al., 2011]:

Հայտնի է, որ բջջի ակտիվացումը հակածինով խթանում է ինչպես ցիտոկինների սինթեզը, այնպես էլ նրանց ընկալիչների դրսևորումը՝ էքսպրեսիան: Սա ստեղծում է պայմաններ ցիտոկինների տեղային ազդեցության դրսևորումների համար: Իրոք, եթե նույն գործոնն ակտիվացնում է և՛ պրոդուցենտ-բջջին, և՛ թիրախ բջջին, ստեղծվում է ամենանպաստավոր պայմանները տեղային դրսևորումների համար: Սովորաբար ցիտոկինները կապվում, ինտերնալիզացիայի են ենթարկվում և ճեղքվում թիրախ բջիջների կողմից, սկզբունքորեն չանջատվելով արտազատող պրոդուցենտ բջիջներից: Ոչ հաճախ, բայց ցիտոկինները կարող են լինել տրանսմեմբրանային մոլեկուլներ (օր., ԻԼ-1α և ՈՒՆԳ-α) կամ էլ կարող են ներկայացվել թիրախ բջիջներին միջբջջային մատրիքսի պեպտիդագլիկանների հետ կապված վիճակում (օր., ԻԼ-7 և մի շարք այլ ցիտոկիններ), ինչը նաև նպաստում է նրանց տեղային ազդեցությանը [Ярилин, 2010]:

Արյան շիճուկում պարունակվում են ցիտոկիններ այնպիսի քանակությամբ, որը բավարար չէ նրանց կենսաբանական ազդեցության դրսևորման համար: Հավանաբար, ցիտոկինների ազդեցության տեղային բնույթն ունի սկզբունքային նշանակություն օրգանիզմի նորմալ կենսագործունեության համար: Այդ մասին վկայում է նրանց շատ արագ դուրս բերումն օրգանիզմից երիկամների միջոցով [Дранник, 1999, Lydyard et al., 2011]:

Ցիտոկինները պլեոտրոպ (ազդում են տարբեր թիրախների վրա) և բազմաֆունկցիոնալ են (թողնում են տարբեր ազդեցություններ): Այսպես, ԻԼ-1β-ի և ՈՒՆԳ-α-ի թիրախ բջիջների քանակը չափազանց շատ է: Բազմազան են նաև նրանց կողմից առաջացրած ազդեցությունները, որոնք մասնակցում են համալիր (կոմպլեքսային) ռեակցաների ձևավորմանը՝ բորբոքում, հեմոպոեզի որոշակի փուլեր, նեյրոտրոպ և այլ ռեակցիաներ: Ցիտոկինների համակարգին բնորոշ է նաև ցիտոկինների փոխկապվածությունը և փոխազդեցությունը: Այս փոխազդեցությունը կայանում է նրանում, որ ցիտոկիններն ազդում են ինդուկտորների ներկայությամբ կամ ինքնուրույն՝ խթանելով կամ ուժեղացնելով (կամ ճնշելով) այլ ցիտոկինների արտադրությունը: Օրինակ, նախաբորբոքային ցիտոկիններ ԻԼ-1β-ն և ՈՒՆԳ-α-ն խթանում են հենց իրենց և այլ նախաբորբոքային ցիտոկինների արտադրությունը (ԻԼ-6, ԻԼ-8 և այլ քեմոկիններ): Հակառակ ազդեցությունն ունեն TGF-β և ԻԼ-10-ը, որոնք ճնշում են տարբեր ցիտոկինների արտադրությունը: Ցիտոկինների միջև փոխազդեցությունը դրսևորվում է նաև ֆունկցիոնալ մակարդակում. որոշակի ցիտոկիններ ուժեղացնում կամ ճնշում են մյուս ցիտոկինների ազդեցությունը: Նկարագրվել են ցիտոկինների սիներգիզմ (օր., նախաբորբոքային ցիտոկինների խմբի ներսում) և անտագոնիզմ [Ярилин, 2010]:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ ոչ մի ցիտոկին չի կարող գոյություն ունենալ և դրսևորել իր ակտիվությունը մեկուսացված վիճակում:

1.4.1 Նախաբորբոքային ցիտոկիններ

Ցիտոկինները համարվում են բորբոքման հիմնական հումորալ գործոնները, որոնք անհրաժեշտ են բնածին իմունիտետի պաշտպանական գործունեության իրականացման համար: Բորբոքման զարգացման գործընթացին մասնակցում են 3 խումբ ցիտոկիններ՝ բորբոքային կամ նախաբորբոքային ցիտոկինները, քեմոկինները, գաղութախթանիչ գործոնները, ինչպես նաև ԻԼ-12-ը և IFNγ-ն: Ցիտոկիններով է նաև պայմանավորված բորբոքային ռեակցիաների ճնշումը և պահպանումը [Дранник, 1999]:

Նախաբորբոքային ցիտոկինների խմբում առանձնացնում են 3 հիմնական ներկայացուցիչներ՝ ՈՒՆԳ-α, ԻԼ-1, ԻԼ-6: Վերջին շրջանում նրանց շարքին են դասվել նաև ԻԼ-17-ը և ԻԼ-18-ը: Այս ցիտոկինները հիմնականում արտադրվում են ակտիվացած մոնոցիտների և մակրոֆագերի կողմից մեծամասամբ բորբոքման օջախում: Նախաբորբոքային ցիտոկինները կարող են արտադրվել նաև նեյտրոֆիլների, դենդրիտային բջիջների, ակտիվացած B-լիմֆոցիտների, բնական քիլերների և T-լիմֆոցիտների կողմից: Ախտածնի թափանցման օջախում մակրոֆագերն առաջինն են սկսում սինթեզել ցիտոկիններ: Հետագայում արյան հոսքից այդ օջախ ներթափանցած լեյկոցիտների հաշվին մեծանում է պրոդուցենտ բջիջների քանակը: Մասնավորապես, նախաբորբոքային ցիտոկինների սինթեզին միանում են նաև միկրոօրգանիզմների կողմից արտադրված նյութերով և բորբոքային գործոններով խթանված էպիթելային, էնդոթելային, սինովիալ, գլիալ բջիջները, ֆիբրոբլաստները: Ցիտոկինների գեները համարվում են ինդուկցիայի ենթարկվող գեներ: Այդ գեների դրսևորման համար բնական ինդուկտորներ են համարվում ախտածին մանրէները և նրանց կողմից արտադրված նյութերը, որոնք ազդում են TLR-ի միջոցով, և ախտածինները ճանաչող այլ ընկալիչները: Միևնույն ժամանակ որոշ նախաբորբոքային ցիտոկիններ (ԻԼ-1, ՈՒՆԳ-α) հենց իրենք կարող են խթանել նախաբորբոքային ցիտոկինների սինթեզը [Ярилин, 2010]:

Նախաբորբոքային ցիտոկինները սինթեզվում և բջջից արտազատվում են բավականին արագ: Սինթեզված ողջ ցիտոկինը չի անջատվում բջջից: Ցիտոկինների որոշ քանակություն կապվում է բջջի մակերեսին կամ պահվում ցիտոպլազմային հատիկներում: Հատիկներից ցիտոկինների ձերբազատումը կարող է խթանվել նույն ակտիվացնող ազդակներով, որոնք խթանում են ցիտոկինների սինթեզը: Սա ապահովում է ցիտոկինների արագ ներթափանցումն ախտահարման օջախ [Lydyard et al., 2011]:

Նախաբորբոքային ցիտոկիններն ունեն շատ գործառույթներ: Նրանց հիմնական դերն է բորբոքային ռեակցիայի «կազմակերպումը»: Նախաբորբոքային ցիտոկինների ավելի կարևոր և վաղ ազդեցություններից առաջինը դա էնդոթելային բջիջների և լեյկոցիտների վրա ադհեզիայի մոլեկուլների էքսպրեսիայի ուժեղացումն է: Սա հանգեցնում է լեյկոցիտների արտագաղթին արյան հունից դեպի բորբոքման օջախ: Բացի այդ ցիտոկինները նպաստում են բջջի օքսիդատիվ պայթյունի հրահրմանը, ցիտոկինների և այլ բորբոքային գործոնների ընկալիչների էքսպրեսիային: Նրանք նաև խթանում են այլ ցիտոկինների, բակտերիցիդ պեպտիդների արտադրությունը և այլն: Նախաբորբոքային ցիտոկինները թողնում են առավելապես տեղային ազդեցություն: Շրջանառություն անցած ավելցուկային նախաբորբոքային ցիտոկինները նպաստում են բորբոքման համակարգային ազդեցության արտահայտմանը, ինչպես նաև խթանում են բորբոքման օջախից հեռու գտնվող բջիջների կողմից ցիտոկինների սինթեզը: Համակարգային մակարդակում նախաբորբոքային ցիտոկինները խթանում են սուր փուլի սպիտակուցների սինթեզը, առաջացնում են մարմնի ջերմաստիճանի բարձրացում, ազդում են էնդոկրին և նյարդային համակարգերի վրա, իսկ բարձր չափաբաժիններով հանգեցնում են ախտաբանական փոփոխությունների զարգացմանը (օրինակ, սեպտիկ շոկ) [Дранник, 1999]:

1.4.2 ԻԼ-1

Հավաքական սպիտակուցների ընտանիք է, որը ներառում է 11-ից ավելի մոլեկուլներ: Նրանցից շատերի դերը դեռ հայտնի չէ, սակայն 5 մոլեկուլները՝ ԻԼ-1α (ժամանակակից դասակարգմամբ IL-1F1), ԻԼ-1β (IL-1F2), ԻԼ-1RA (IL-1F3), ԻԼ-18 (IL-1F4) և ԻԼ-33 (IL-1F11) ակտիվ ցիտոկիններ են [Ярилин, 2010]:

ԻԼ-1α-ին և ԻԼ-1β-ին անվանում են մեկ ընդհանուր անվամբ՝ ԻԼ-1, քանի որ նրանք փոխազդում են նույն ընկալիչների հետ և նրանց ազդեցությունը հնարավոր չէ տարբերել: ԻԼ-1-ը ունի համակարգային բազմաթիվ ազդեցություններ: Այն խթանում է հեպատոցիտների կողմից սուր փուլի սպիտակուցների սինթեզը և, ազդելով հիպոթալամուսի ջերմակարգավորիչ կենտրոնի վրա, նպաստում է տենդի զարգացմանը: Այն մասնակցում է նաև բորբոքային գործընթացի համակարգային դրսևորումների զարգացմանը (օր., տկարություն, ախորժակի անկում, քնկոտություն, ադինամիա): Ուժեղացնելով գաղութախթանիչ գործոնի ընկալիչների էքսպրեսիան, ԻԼ-1-ը նպաստում է հեմոպոեզի աճին: ԻԼ-1-ը խթանում է ոսկրածուծից լեյկոցիտների դուրս բերմանը, առաջին հերթին նեյտրոֆիլների, այդ թվում ոչ հասուն, ինչը հանգեցնում է բորբոքման ժամանակ լեյկոցիտոզի և լեյկոֆորմուլայի դեպի ձախ տեղաշարժին (բջիջների ոչ հասուն ձևերի կուտակում): ԻԼ-1-ի ազդեցությունը դրսևորվում է նաև վեգետատիվ գործառույթներում և նույնիսկ բարձրագույն նյարդային գործունեությունում (վարքային ռեակցիանների փոփոխություններ): ԻԼ-1-ի թիրախներ կարող են լինել նաև խոնդրոցիտները և օստիոցիտները, ինչի հետ կապված է աճառի և ոսկրի քայքայումը ԻԼ-1-ի ազդեցությամբ, երբ նրանք ներգրավված են բորբոքային գործընթացի մեջ: ԻԼ-1-ը կարող է նպաստել նաև հակառակ գործընթացին՝ ախտահարված հյուսվածքի հիպերպլազիային [Дранник, 1999]:

1.4.3 ՈՒՆԳ-α

Ուռուցքի նեկրոզի գործոն α՝ ՈՒՆԳ-α-ն (TNFα) հանդիսանում է ակտիվության լայն շրջան ունեցող նախաբորբոքային ցիտոկին: ՈՒՆԳ-α-ն ունի β-կառուցվածք: Այն սինթեզվում է որպես ակտիվ թաղանթային մոլեկուլ՝ նախա-ՈՒՆԳ-α, որը իրենից ներկայացնում է երկրորդ տիպի տրանսմեմբրանային սպիտակուց [Ярилин, 2010, Lydyard et al., 2011]:

ՈՒՆԳ-α-ի հիմնական պրոդուցենտները (ինչպես ԻԼ-1-ի) մոնոցիտները և մակրոֆագերն են: Այն արտադրվում է նաև նեյտրոֆիլների, էնդոթելային և էպիթելային բջիջների, էոզինոֆիլների, B- և T-լիմֆոցիտների կողմից, երբ նրանք ներգրավվում են բորբոքային գործընթացի մեջ: Արյան շրջանառության մեջ բոլոր նախաբորբոքային ցիտոկիններից առաջինը հայտնաբերվում է ՈՒՆԳ-α-ն (բորբոքային գործընթացի խթանումից 20-30 րոպե հետո), ինչը կապված է բջջի կողմից մոլեկուլների թաղանթային ձևերի և, հավանաբար, նաև ՈՒՆԳ-α պարունակող հատիկների «անջատման» հետ [Ярилин, 2010, Lydyard et al., 2011]:

ՈՒՆԳ-α-ի գործառույթների իրագործումը մեծամասամբ կախված է ՈՒՆԳ-ի ընկալիչ՝ TNFRI-ի հետ փոխազդեցությունից, որը համապատասխան գեների խթանման միջոցով հանգեցնում է ծանր իմունային անբավարարության: Բորբոքային ռեակցիաների գագաթնակետին ՈՒՆԳ-α-ի ընկալիչները կարող են պոկվել թաղանթից և անցնել միջբջջային տարածություն, որտեղ կապվում են ՈՒՆԳ-α-ի հետ՝ ցուցաբերելով հակաբորբոքային ազդեցություն [Дранник, 1999]:

Ինչպես ԻԼ-1-ը, այնպես էլ ՈՒՆԳ-α-ն ուժեղացնում են ադհեզիայի մոլեկուլների էքսպրեսիան, նախաբորբոքային ցիտոկինների և քեմոկինների, սուր փուլի սպիտակուցների, ֆագոցիտային բջիջների ֆերմենտների սինթեզը և այլն: ՈՒՆԳ-α-ն նույնպես մասնակցում է բոլոր հիմնական տեղային բորբոքումների զարգացմանը, ինչպես նաև որոշ համակարգային բորբոքումների դրսևորումներին: Այն ակտիվացնում է էնդոթելային բջիջները, խթանում է անգիոգենեզը, ուժեղացնում է լեյկոցիտների գաղթը և ակտիվացնում նրանց: Ի տարբերություն ԻԼ-1-ի, ՈՒՆԳ-α-ն ավելի մեծ ազդեցություն ունի լիմֆոցիտների ակտիվացման և պրոլիֆերացիայի վրա: ՈՒՆԳ-α-ն խթանում է ֆիբրոբլաստների պրոլիֆերացիան՝ նպաստելով վերքի լավացմանը: ՈՒՆԳ-α-ի տեղային առատ արտադրության դեպքում այն նպաստում է հյուսվածքների վնասմանը, որն արտահայտվում է հեմոռագիկ նեկրոզով: Այս ամենի հետ մեկտեղ ՈՒՆԳ-α-ն ճնշում է լիպոպրոտեինային լիպազների ակտիվությունը, ինչը թուլացնում է լիպոգենեզը և հանգեցնում է կախեքսիայի զարգացման (ՈՒՆԳ-α-ի նախնական անվանումն էր կախեքսին): ՈՒՆԳ-α-ի մեծ քանակության անջատումը և նրա կուտակումը շրջանառության մեջ բերում է ծանր ախտաբանական երևույթների զարգացման՝ օրինակ, սեպտիկ շոկի զարգացման [Ярилин, 2010]:

1.4.4 ԻԼ-6

Հանդիսանում է լայն ազդեցություն ունեցող նախաբորբոքային ցիտոկին: ԻԼ-6-ը արտադրվում է մոնոցիտների և մակրոֆագերի, էնդոթելային, էպիթելային, գլիալ, հարթ մկանային բջիջների, ֆիբրոբլաստների, T-լիմֆոցիտներից Th2-ի, ինչպես նաև շատ քաղցկեղածին բջիջների կողմից: Միելոիդ բջիջների կողմից ԻԼ-6-ի արտադրությունը խթանվում է իրենց TLR-ի և միկրոօրգանիզմների, նրանց կողմից արտադրված նյութերի փոխազդեցությունից, ինչպես նաև ԻԼ-1-ի և ՈՒՆԳ-α-ի ազդեցության շնորհիվ: [Ярилин, 2010, Lydyard et al., 2011]:

ԻԼ-6-ը մասնակցում է բորբոքման ժամանակ տեղային դրսևորումների ողջ համալիրի խթանմանը: Այն ազդում է ֆագոցիտների գաղթի վրա՝ ուժեղացնելով CC-քեմոկինների սինթեզը, որոնք ներգրավում են մոնոցիտներին ու լիմֆոցիտներին և թուլացնում են CXC-քեմոկինների արտադրությունը, որոնք գրավում են նեյտրոֆիլներին: ԻԼ-6-ի նախաբորբոքային ազդեցություններն ավելի թույլ են արտահայտվում, քան ԻԼ-1-ի և ՈՒՆԳ-α-ի և ի տարբերություն նրանց, այն չի ուժեղացնում այլ ընկճում է բորբոքային գործընթացներում ներգրավված բջիջների կողմից նախաբորբոքային ցիտոկինների (ԻԼ-1, ՈՒՆԳ-α և ԻԼ-6) և քեմոկինների սինթեզը: Այսպիսով, ԻԼ-6-ը օժտված է և՛ նախաբորբոքային, և՛ հակաբորբոքային ցիտոկինների հատկություններով՝ մասնակցելով բորբոքային ռեակցաների ոչ միայն զարգացմանը, այլ նաև արգելակմանը [Дранник, 1999]:

ԻԼ-6-ը համարվում է այն հիմնական գործոնը, որը հեպատոցիտներում խթանում է սուր փուլի սպիտակուցների գեների էքսպրեսիան: ԻԼ-6-ը ազդում է հեմոպոեզի տարբեր փուլերի վրա, այդ թվում ցողունային բջիջների պրոլիֆերացիայի և տարբերակման վրա: Այն ծառայում է որպես աճի գործոն ոչ հասուն պլազմային բջիջների համար՝ զգալիորոն ուժեղացնելով հումորալ իմունային պատասխանը: ԻԼ-6-ը նաև ազդում է T-լիմֆոցիտների վրա՝ բարձրացնելով ցիտոտոքսիկ T-բջիջների ակտիվությունը [Ярилин, 2010]:

1.4.5 Քեմոկիններ և ԻL-8

Քեմոկինները (Chemotactic cytokines) հայտնաբերվել են նախորդ դարի 80-ական թվականներին: Իրենցից ներկայացնում են ցիտոկինների մեծ խումբ, որոնք պոլիպեպտիդներ են: Քեմոկինները հիմնականում հանդիպում են կենսաբանական հեղուկներում [Ярилин, 2010, Lydyard et al., 2011]:

ԻԼ-8-ը (CXCL8) պատկանում է CXC քեմոկինների խմբին, որոնք գրավում են նեյտրոֆիլներին, ոչ հաճախ լիմֆոցիտներին, բայց ոչ երբեք մոնոցիտներին:

Ըստ ֆունկցիոնալ նշանակության տարբերում են.

1. Հոմեոստատիկ քեմոկիններ
2. Նախաբորբոքային քեմոկիններ

Հոմեոստատիկ քեմոկինները պատասխանատու են լիմֆոիդ օրգաններում բջիջների (առաջնահերթ լիմֆոցիտների) տեղաբաշխման համար: Նախաբորբոքային քեմոկինները պատասխանատու են բջիջների ակտիվացման և նրանց բորբոքման օջախ ներգրավելու համար: Այս խմբերի քեմոկինները տարբերվում են սինթեզի և արտազատման պայմաններով. հոմեոստատիկ քեմոկիններն արտազատվում են մշտապես, հիմնականում ստրոմայի և էնդոթելային, դենդրիտային բջիջների կողմից, իսկ երբեմն նաև լիմֆոցիտների կողմից: Քեմոկինները կարգավորում են իմունային համկարգի բջիջների հասունացման գործընթացում տեղի ունեցող գաղթը: Այսպես, քեմոկինները պայմանավորում են լիմֆոիդ սկզբնակ բջիջների «բնակեցումը» թիմուսում, ինչպես նաև թիմոցիտների գաղթի ուղղորդումը և T բջիջների տեղափոխումը իմունային համակարգի ծայրամասեր: Քեմոկինները նաև որոշում են հասունացման տարբեր փուլերում գտնվող դենդրիտային բջիջների գաղթի ուղղությունը՝ նախ բջիջների տեղաշարժն արյան հոսքից դեպի պատնեշային հյուսվածքներ, իսկ հետո տեղափոխումը տեղային (ռեգիոնալ) ավշային հանգույցների T-գոտի: Լիմֆոիդ օրգաններում ստրոմայի տարբեր հատվածներ արտազատում են տարբեր հոմեոստատիկ քեմոկիններ, որոնք ապահովում են T-գոտում T բջիջների և B-գոտում B բջիջների տեղաբաշխումը: Սա ապահովում է լիմֆոիդ օրգանների կայուն կազմն անընդհատ շրջանառվող լիմֆոցիտների պարագայում [Дранник, 1999]:

Որպես կանոն հոմեոստատիկ և նախաբորբոքային քեմոկինները փոխազդում են տարբեր ընկալիչների հետ: Մեկ քեմոկինը կարող է փոխազդել տարբեր ընկալիչների հետ, օրինակ, ԻԼ-8-ը կարողանում է ճանաչել CXCR1 և CXCR2 ընկալիչները: Քեմոկինի և ընկալչի ճանաչումն ուղեկցվում է ինտեգրինների ակտիվացմամբ, ադհեզիայի ուժեղացմամբ, բջջի բևեռացմամբ, F-ակտինի ձևավորմամբ, շարժական պսևդոպոդի (լամելլոպոդ) ձևավորմամբ և, վերջապես, ակտոմիոզինի կծկմամբ, որը ապահովում է բջջի շարժը [Ярилин, 2010, Дранник, 1999]:

Նախաբորբոքային քեմոկիններն արտադրվում են միելոիդ (մոնոցիտ, մակրոֆագ) և էնդոթելային բջիջների կողմից նրանց ակտիվացումից հետո: Բորբոքման օջախում քեմոկինների սինթեզին մասնակցում են նաև ակտիվացած էպիթելային բջիջները: Քեմոկինների սինթեզի համար խթան են հանդիսանում ախտածնի ուղղակի ազդեցությունը (որոնք ճանաչվում են հիմնականում TLR-ի կողմից) և նախաբորբոքային ցիտոկինները (ԻԼ-1, ՈՒՆԳ-α, ԻԼ-6, ԻԼ-17 և այլն): Այստեղ նախաբորբոքային քեմոկինները ոչնչով չեն տարբերվում մյուս նախաբորբոքային ցիտոկիններից: Սակայն այս քեմոկինները կարող են արտադրվել նախապես, ապա կապվել գլյուկոզամինագլիկանների հետ և պահեստավորվել հատիկների ձևով նեյտրոֆիլներում, էոզինոֆիլներում, ցիտոտոքսիկ T բջիջներում և ձեռբազատվել բջջից հատիկազրկման ժամանակ: Լիմֆոցիտների ակտիվացման դեպքում (հատկապես T բջիջների) նույնպես արտազատվում են քեմոկիններ: Քեմոկինների իմմոբիլիզացիան բջջի արտաքին մակերեսին և միջբջջային մատրիքսի գլյուկոզամինագլիկանների կողմից անհրաժեշտ է նրանց խտության գրադիենտի ձևավորման համար, որն ապահովում է գաղթի ուղղությունը [Ярилин, 2010]:

Բորբոքման պայմաններում քեմոկինները հանդիսանում են ոչ միայն քեմոտաքսիսի գործոններ, այլ նաև շատ կարևոր է նրանց մասնակցությունը լեյկոցիտների ակտիվացմանը, հատկապես նրանց ներգրավմանը գաղթի գործընթացին: Բորբոքման սուր փուլի սկզբում նեյտրոֆիլների ներգրավման գործընթացում որոշիչ դերը պատկանում է CXC-քեմոկինների խմբին, որտեղ նախաբորբոքային գործոններին են պատկանում CXC-քեմոկինները 1-8 հերթական համարներով [Ярилин, 2010,]:

Ամենաուսումնասիրվածը և, հավանաբար, ամենակարևորն այս նախաբորբոքային քեմոկիններից ԻԼ-8-ն է: Ինչպես մյուս քեմոկինները, այնպես էլ ԻԼ-

8-ը ունի գլյուկոզամինագլիկանների հետ խնամակցություն, ինչպես նաև հեպարին սուլֆատի հետ, որը հանդիպում է հյուսվածքներում: Ի շնորհիվ այս խնամակցության ԻԼ-8-ի զգալի քանակությունն իմմոբիլիզացվում է, ինչը շատ կարևոր է հյուսվածքներում նրա խտության գրադիենտի ձևավորման համար [Ярилин, 2010]:

Շատ բջիջներ ունակ են արտադրելու ԻԼ-8, սակայն հիմնական սինթեզողները մոնոցիտները, մակրոֆագերը և էնդոթելային բջիջներն են: ԻԼ-8-ի սինթեզ նկարագրվել է նաև պարարտ և էպիթելային բջիջների, լիմֆոցիտների, ֆիբրոբլաստների և մի շարք այլ բջիջների կողմից: ԻԼ-8-ի արտադրության համար պայման է հանդիսանում բջջի ակտիվացումը, որը տեղի է ունենում միկրոօրգանիզմների, վիրուսների և նրանց կողմից անջատված նյութերի, նախաբորբոքային ցիտոկինների (ԻԼ-1β, ՈՒՆԳ-α և այլն), մի քանի այլ բորբոքային միջնորդանյութերի (կոմպլեմենտի բաղադրիչներ, կինիններ և այլն) և թրոմբագոյացման գործոնների և այդ բջիջների փոխազդեցության արդյունքում: ԻԼ-8-ի գենը պատկանում է գեների այն խմբին, որոնք ակտիվանում են NF-kappaB-ի և տրանսկրիպցիայի այլ գործոնների կողմից: Էնդոթելային բջիջները, ինչպես նաև նեյտրոֆիլները կարող են կուտակել նախասինթեզված ԻԼ-8 և արագ անջատել այն իրենց ակտիվացումից հետո [Lydyard et al., 2011]:

ԻԼ-8-ը ճանաչում են 2 ընկալիչներ՝ CXCR1-ը (ճանաչում է միայն ԻԼ-8-ը) և CXCR2-ը (ճանաչում է նաև մի շարք այլ α-քեմոկիններ): Հիմնական բջիջները, որոնք էքսպրեսիայի են ենթարկում այդ ընկալիչները և ԻԼ-8-ի հիմնական թիրախը նեյտրոֆիլներն են [Ярилин, 2010, Lydyard et al., 2011]:

ԻԼ-8-ին բնորոշ է գրավել նաև էոզինոֆիլներին, բազոֆիլներին և T-լիմֆոցիտներին: ԻԼ-8-ի գլխավոր գործառույթն է ապահովել նեյտրոֆիլների էքստրավազացիան և նրանց ուղղորդված գաղթը դեպի բորբոքման օջախ: Ընդ որում ԻԼ-8-ի սինթեզի աղբյուր են ծառայում ոչ միայն բորբոքային օջախի մակրոֆագերը, այնպես էլ բորբոքված հատվածի անոթների էնդոթելային բջիջները: Էնդոթելային բջիջների կողմից արտադրված ԻԼ-8-ը ապահովում է նեյտրոֆիլների ներգրավումը դեպի անոթի պատ և նրանց ինտեգրինների ակտիվացումը, ինչպես նաև անոթից բջիջների արտագաղթը: Այստեղ ԻԼ-8-ը գլյուկոզամինագլիկանների միջոցով կապվում և պահվում է էնդոթելային բջիջների մակերեսին: ԻԼ-8-ի ձևավորված գրադիենտը ապահովում է անոթային հունից նեյտրոֆիլների արտահոսքին և գաղթին դեպի բորբոքման օջախ: Բորբոքման օջախում ԻԼ-8-ը շարունակում է դրսևորել իր ակտիվությունը: Այն ակտիվացնում է այդ օջախում գտնվող նեյտրոֆիլներին, նպաստում է բջիջների հատիկազրկման գործընթացին, խթանում է մոնոնուկլեար բջիջների կողմից ցիտոկինների արտադրությունը [Ярилин, 2010, Lydyard et al., 2011]:

Բորբոքման գործընթացի զարգացման ժամանակ նախաբորբոքային գործոններն արագորոն ազդում են մանր անոթների էնդոթելային բջիջների վրա (մազանոթների և հետմազանոթային երակիկների): Այստեղ այդպիսի գործոններ են հանդիսնաում մակրոֆագերից և այլ բջիջների անջատված ցիտոկինները (ԻԼ-1β, ՈՒՆԳ-α): Էնդոթելային բջիջները մշտապես էքսպրեսիայի են ենթարկում այդ ցիտոկինների ընկալիչների գեները: Ցիտոկինների ազդեցության տակ տեղի է ունենում էնդոթելային բջիջների ակտիվացում, ինչպես նաև նախաբորբոքային ցիտոկինների և քեմոկինների արտազատում [Ярилин, 2010]:

1.4.6 Նախաբորբոքային ցիտոկինների սինթեզը և ազդեցությունը ԽԱԺ-ի դեպքում

ԽԱԺ-ի դեպքում վիրուսի և մոնոցիտ/մակրոֆագային համակարգի փոխազդեցությունը նպաստում է միջնորդ մոլեկուլների անջատմանը, որոնք կարևոր են հիվանդության հետագա զարգացման գործընթացներում:

Վիրուսի կարողությունը պահպանվել բնական տերերի և ընտանի խոզերի օրգանիզմում, որոնք առողջացել են ցածր վիրուլենտության շտամով վարակվելուց հետո, ցույց է տալիս, որ վիրուսը օժտված է արդյունավետ մեխանիզմներով՝ տիրոջ պաշտպանական համակարգից խուսափելու համար: Անընդհատ ավելացող ապացույցները հաստատում են այն փաստը, որ վիրուսի հիմնական «մարտավարության» հիմքում ընկած է վարակված մակրոֆագերում ազդանշանային ուղիների փոփոխությունները: Այդ փոփոխություններն իրենց հերթին խանգարում են մեծ թվով իմունամոդուլյատոր գեների դրսևորումը [Dixon et al., 2004]:

Իմունային համակարգի բջիջների կողմից՝ ներառյալ մակրոֆագերը, արտադրվող ցիտոկինները խթանում են բորբոքային պաշտպանություն վիրուսային վարակների դեպքում: Քանի որ ԽԱԺՎ-ն հանդիսանում է Asfarviridae ընտանիքի միակ անդամը, նրա ԴՆԹ-ն կոդավորում է մի շարք նոր գեներ, որոնք չեն կոդավորվում այլ ընտանիքների վիրուսների կողմից: Այդ գեների շարքին է պատկանում A238L գենը, որը կարողանում է կարգավորել նախաբորբոքային ցիտոկինների սինթեզը, ինչը վերահսկվում է հիմնականում NF-kappaB և NFAT ուղիներով [Salguero et al., 2008, Dixon et al., 2004]: NF-kappaB-ն իրենից ներկայացնում է տրանսկրիպցիոն գործոնների մեծ ընտանիք, որը պարունակում է տարբեր հոմոդիմերներ և հետերոդիմերներ: Վերջիններս հանդիսանում են տրանսկրիպցիայի տրանսակտիվատորներ իմունոմոդուլիատոր գեների համար (նախաբորբոքային ցիտոկինների ու քեմոկինների գեներ): Դեռևս 1996 թվականին ցույց է տրվել, որ A238L գենով կոդավորվող սպիտակուցը փոխազդում և ապաակտիվացնում է NF-kappaB-ին՝ կանխելով նախաբորբոքային ցիտոկինների տրանսկրիպցիան և արտադրությունը, և, հետևաբար, ճնշում է իմունային պատասխանը [Powell et al., 1996, Granja et al., 2006, Revilla et al., 1998]: NF-kappaB-ի արգելակումը հաստատվում է նաև այն փաստով, որ A238L գենից զուրկ շտամով վարակված խոզերի ոսկրածուծի առաջնային կուլտուրայում մեծանում է ՈՒՆԳ-α-ի ի-ՌՆԹ-ի էքսպրեսիան, սակայն վարակի ընթացքը և ախտաբանությունը մնում է նույնը: Սա վկայում է այն մասին, որ նշված ցիտոկինը բավարար չէ վիրուսի դեմ պայքարի համար [Salguero et al., 2008]:

Միևնույն ժամանակ պարզվել է, որ ԽԱԺՎ-ի կողմից կոդավորվող A238L սպիտակուցը հակազդում է տեր բջջի բորբոքային պատասխանին՝ վերահսկելով P300 գենի տրանսակտիվացիան (խթանված գեների էքսպրեսիան) վիրուսային վարակի ընթացքում: Ցույց է տրվել, որ A238L-ը արգելակում է բորբոքային կարգավորիչներ COX2-ի և ՈՒՆԳ-α-ի դրսևորումը: A238L-ը կանխում է տրանսկրիպցիայի կոակտիվատոր հանդիսացող P300 սպիտակուցի մասնակցությունը պրոմոտորային հատվածում էնհանսոսոմների ձևավորման գործընթացին [Granja et al., 2009]:

Տարբեր հետազոտողների ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ սուր ԽԱԺ-ի վաղ փուլերում դիտվում է ՈՒՆԳ-α-ի, ԻԼ-1α-ի, ԻԼ-1β-ի և ԻԼ-6-ի մակարդակների բարձրացում լիմֆոիդ օրգաններում: Միևնույն ժամանակ բարձրանում են ՈՒՆԳ-α-ի և ԻԼ-1β-ի մակարդակները արյան շիճուկում: Այս փոփոխություններն ուղեկցվում են այդ միջավայրում լիմֆոցիտների ապոպթոզով: Նաև հայտնաբերվում են ախտահարված ու նորմալ մակրոֆագեր, որոնք ցուցաբերում էին արտազատող և ֆագոցիտային ակտիվություն: Նկատվում է բարձր արտազատող ակտիվություն ունեցող մակրոֆագերի թվի ավելացում ապոպտոզի ենթարկվող լիմֆոցիտների հարևանությամբ: Սա հաստատում է, որ սուր ԽԱԺ-ի դեպքում անջատված նախաբորբոքային ցիտոկինները խթանում են լիմֆոցիտների ապոպտոզը [Salguero et al., 2005, Salguero et al., 2004]:

Սուր ԽԱԺ-ի դեպքում նշիկների իմունոհիստոքիմիական հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ վիրուսային հակածինների կուտակումները նշիկներում դիտվում են վարակումից 3-4 օր հետո: Այդ նույն ժամանակահատվածում գրանցվել է մոնոցիտ/մակրոֆագերի քանակի ավելացում: Այս ամենի հետ մեկտեղ հայտնաբերվել է նախաբորբոքային ցիտոկինների էքսպրեսիայի աճ (ՈՒՆԳ-α, ԻԼ-1α), ինչպես նաև լիմֆոցիտների ապոպտոզ և արյունազեղումներ [Fernández de Marco et al., 2007]:

Նախաբորբոքային ցիտոկինների քանակական տեղաշարժեր գրանցվել են նաև այլ օրգաններում, օրինակ, թոքերում: Ուսումնասիրվել է նախաբորբոքային ցիտոկինների համակարգային և տեղային անջատումը *in vivo* պայմաններում: ՈՒՆԳ-α-ի ի-ՌՆԹ-ի էքսպրեսիայի վաղ ավելացում գրանցվել է ԽԱԺՎ-ով վարակված ալվեոլային մակրոֆագերում: Փորձարարական ճանապարհով վարակված խոզերի ախտահարված օրգաններում ՈՒՆԳ-α-ի էքսպրեսիայի ուժգնացումը համապատասխանում է վիրուսային սպիտակուցների էքսպրեսիային, իսկ շիճուկում ՈՒՆԳ-α-ի մակարդակի բարձրացումը՝ կլինիկական ախտանշանների ի հայտ գալուն: ՈՒՆԳ-α-ն ներգրավված է ԽԱԺ-ի ախտաբանության հիմնական կլինիկական դրսևորումներում, ինչպիսիք են ներանոթային մակարդումը, հյուսվածքների վնասումը, ապոպտոզը և շոկը [Gómez del Moral et al., 1999]:

Հետագայում պարզվել է, որ ալվեոլային մակրոֆագերում ցիտոկինների էքսպրեսիայի նկատելի փոփոխություններ չեն գրանցվում, իսկ վիրուսի բազմացումը դիտվում է այդ բջիջների քիչ տոկոսում: Իսկ թոքերի ներանոթային մակրոֆագերը, որտեղ դիտվում է վիրուսի բազմացում, ցուցաբերում են ինտենսիվ ակտիվացում, ինչը ուղեկցվում է ԻԼ-1α-ի և ՈՒՆԳ-α-ի էքսպրեսիայով [Carrasco et al., 2002]:

ԽԱԺ-ի բարձր վիրուլենտության շտամերով *in vitro* ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վիրուսն ախտահարում է ընտանի և վայրի խոզերի աորտայի էնդոթելային բջիջների առաջնային կուլտուրաները: Էնդոթելային բջիջներում գեների էքսպրեսիան, վիրուսի վերարտադրությունը և վիրուսի դուրս գալը բջջից ընթանում են նույնատիպ՝ ինչպես մակրոֆագերում: Վիրուսով ախտահարված էնդոթելային բջիջները մահանում են ապոպթոզի պատճառով վարակումից 4 ժամ հետո: Վաղ-առաջնային նախաբորբոքային պատասխաններն արգելակվում են, որոնք բնութագրվում են մակրեսային ադհեզիայի մոլեկուլների (E-selectin-ների), ԻԼ-6-ի և ԻԼ-8-ի ի-ՌՆԹ-ների էքսպրեսիայի բացակայությամբ: Դեռ ավելին, ԽԱԺՎ-ն ակտիվորոն ճնշում է ինտերֆերոնով խթանված դաս I հյուսվածքահամատեղելիության գլխավոր համալիրի մակերեսային էքսպրեսիան: Սա իր հերթին օգնում է վիրուսին խուսափել տիրոջ իմունային համակարգից: Վեստերն-բլոթ վերլուծությունը ցույց է տվել, որ NF-kappaB տրանսկրիպցիայի գործոնի 65-kDa ենթամիավորը, որը հանդիսանում է վիրուսային վարակի վաղ պատասխանի կենտրոնական կարգավորիչը, նվազում է վարակումից 8 ժամ հետո, ապա անհետանում 18-րդ ժամին [Vallée et al., 2001]:

Գիտական գրականության տվյալների համաձայն պարզվել է, որ նախաբորբոքային ցիտոկինների՝ ՈՒՆԳ-α-ի, ԻԼ-6-ի էքսպրեսիայի աճ գրնացվել է նաև այն մակրոֆագերում, որոնք ախտահարված են ԽԱԺՎ-ի ցածր վիրուլենտություն ունեցող շտամերով [Gil et al., 2003, Gil et al., 2008]:

Նույն պատկերն է դիտվում նաև նախաբորբոքային քեմոկինների դեպքում՝ ներառյալ ԻԼ-8-ը [Fishbourne et al., 2013]:

Այսպիսով, ելնելով վերոնշյալ հղումներց, հասկանալի է դառնում, որ ԽԱԺ-ի զարգացման գործընթացում էական դերակատարում ունեն իմունային համակարգում զարգացող տեղաշարժերը, որոնք դեռևս ամբողջովին և հիմնավոր ուսումնասիրված չեն:

ԳԼՈՒԽ 2: ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Աշխատանքն իրականացվել է ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի բջջի կենսաբանության և վիրուսաբանության լաբորատորիայում: ԽԱԺՎ-ի վարակի փորձարարական մասն իրականցվել է Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության կենտրոն ՊՈԱԿ-ում (ըստ 2010թ. հունվարի 12-ի պայմանագրի): Հետազոտության ընթացքում օգտագործվել են նաև կենդանիներ, ինչի համար ստացվել է ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի էթիկայի հանձնաժողովի թույլտվությունը (IRB#00004079):

2.1 Կենդանիներ

Փորձերում օգտագործվել են 3-4 ամսեկան, 35-40 կգ զանգվածով 21 խոզ, որոնցից 17-ը վարակվել են ԽԱԺՎ-ի միջմկանային ներարկման ճանապարհով, իսկ 4-ը՝ ընդգրկվել ստուգիչ խմբում: Կենդանիների խնամքը և էֆթանազիան իրականացվել է համաձայն կենդանիների խնամքի ու կիրառման (Գիտությունների Ազգային Ակադեմիայի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի ներինստիտուտային վերահսկող խորհրդի/Էթիկայի անկախ կոմիտե, IRB#00004079) և ամերիկյան անասնաբույժների բժշկական ասոցիացիայի էֆթանազիայի մասին ուղեցույցների: Ուսումնասիրություններն իրականացվել են խոզերի ավշային հանգույցների և փայծաղի պատճենների, կտրվածքների և ծայրամասային արյան քսուկների օգնությամբ:

2.2 Վիրուս

Հետազոտություններում օգտագործվել է ԽԱԺ-ի գենոտիպ II վիրուսը, որի հարուցած առաջին համաճարակը Կովկասյան տարածաշրջանում գրանցվել է Վրաստանում, իսկ հետագայում թափանցել հարևան երկրներ, այդ թվում՝ Հայաստան [Rowlands et al., 2008]: ԽԱԺՎ-ի տիտրը որոշվել է հեմադսորբցիայի եղանակով [Enjuanes et al., 1976, Wardley and Wilkinson, 1980]: Փորձարարական ճանապարհով վարակման համար ԽԱԺՎ-ի չափաբաժինը կազմել է 10^4 հեմադսորբցիոն միավոր՝ $HADU_{50}$/մլ 0,2 մլ/կգ-ի հաշվարկով:

2.3 Ուսումնասիրության համար նյութերի ստացում

Քսուկների պատրաստման, վիրուսի տիտրի որոշման և արյան շիճուկում ցիտոկինների քանակական հաշվարկի համար ծայրամասային արյունը հավաքվել է խոզերի ակնային երակային ծոցից (ophthalmic venous sinus) [Stier and Leucht, 1980]: Հիվանդության 7 օրերի ընթացքում յուրաքանչյուր օր պատրաստվել են արյան քսուկներ, որոնք ներկվել են ստանդարտ եղանակով ըստ Գիմզայի: Հավաքվել է նաև 3-4մլ արյուն ցիտոկինների քանակական ուսումնասիրությունների համար: Ավշային հանգույցները և փայծաղը վերցվել են խոզերին վարակելուց հետո յուրաքանչյուր օր իրականացվող խոզերի հերձման ընթացքում: Ավշային հանգույցներից և փայծաղից պատրաստվել են կտրվածքներ և պատճեններ:

2.3.1 Ավշային հանգույցի և փայծաղի պատճեններ և կտրվածքներ

Ավշային հանգույցների և փայծաղի պատճենների ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են ցիտոգրամների ձևով: Լիմֆոգրամի և փայծաղի լիմֆոիդ և միելոիդ պոպուլյացիայի տվյալների ստացման համար յուրաքանչյուր խոզի ավշային հանգույցի և փայծաղի պատճենների տարբեր տեղամասերում համապատասխանաբար հաշվարկվել են 800-1000 բջիջ և նրանց քանակությունը ներկայացվել է տոկոսներով: Բջիջների հաշվարկները կատարվել են Գիմզայի մեթոդով ներկված պատրաստուկներով [Ромейс, 1954]:

Ավշային հանգույցները և փայծաղը ֆիքսվել են ֆորմալինի 10% չեզոք լուծույթում, ապա ջրազրկվել են էթիլ սպիրտի աճող խտությունների հաջորդականության կիրառմամբ, գունազրկվել են թթվում և կարծրացվել պարաֆինով: 5մկմ հաստության կտրվածքները ներկվել են հեմատոքսիլին-էոզինով ըստ Վան-Գիզոնի և Ռոմանովսկու [Ромейс, 1954]:

Հետազոտվող օրգանի առանձին տեղամասերի բջջաբանական ուսումնասիրություններն իրականացվել են մինչև 1200 անգամ խոշորացում ապահովող լուսային մանրադիտակով: Կիրառվել է վանդակային տեստային համակարգ՝ համատեղված համակարգչի էկրանին, որտեղ հայտնվում է պատկերը, ինչը ստացվում է մանրադիտակին հարմարեցված թվային տեսախցիկի օգնությամբ: Ավշային հանգույցների և փայծաղի կառուցվածքային կազմավորման ցուցանիշների ուսումնասիրությունների համար կիրառվել է թույլ խոշորացում (օբյեկտիվ 10x): Ուսումնասիրված բոլոր տեսադաշտերի ամբողջական մակերեսներն եղել են հավասար:

2.3.2 Բջիջների մորֆոլոգիական վերլուծություն

Խոզերի ծայրամասային արյան և ավշային հանգույցներում, փայծաղում արյան սպիտակ բջիջների և նրանց նախորդների մորֆոլոգիական վերլուծությունն իրականացվել է բջիջների ֆիքսված քսուկների և պատճենների օգնությամբ, որոնք ներկվել են հեմատոքսիլին-էոզինով ըստ Ռոմանովսկի-Գիմզայի [Ромейс, 1954]: Որոշվել է բջջային կազմը, արյան սպիտակ բջիջների տոկոսային հարաբերությունը, նրանցում հայտնաբերվող ատիպիկ և նեկրոզի ու ապոպթոզի հետևանքով մահացած բջիջների տոկոսը: Արյան սպիտակ բջիջների նախորդների տոկոսային հարաբերությունը պարզելու համար յուրաքանչյուր դեպքի համար միջինում հաշվարկվել են 300-ից ավել բջիջ: Բջիջների մորֆոլոգիական ուսումնասիրությունները կատարվել են ըստ Weiss-ի և Wardrop–ի (2010) և Harvey-ի (2012):

2.4 Բջիջների մորֆոմետրիկ չափումներ

Ուսումնասիրվող բջիջների մորֆոմետրիկ փոփոխությունների գնահատման համար օգտագործվել է ImageJ ստանդարտ ծրագիրը: ImageJ-ն թույլ է տալիս հետազոտել նույն բջջի ցիտոպլազմայի, կորիզի և կորիզակի մակերեսները: Ստացված տվյալները ներկայացված են մկմ^2-ով:

2.4.1 ԴՆԹ-ի ներկում ըստ Ֆյոլգենի

Ցիտոքիմիական հետազոտությունների համար ողջ նյութը ֆիքսվել է 30 րոպե 96% էթիլ սպիրտում, ապա ներկվել Շիֆֆի ռեակտիվով ըստ Ֆյոլգենի: ԴՆԹ-ի հիդրոլիզը իրականացվել է 5Ն HCl-ում 22^{O}C ջերմաստիճանում 1 ժամվա ընթացքում [Lillie, 1965, Магакян и Каралова, 1989]:

Ուսումնասիրվող լիմֆոիդ բջիջների բոլոր ձևերում ԴՆԹ-ի քանակի որոշումը ստուգիչ և ԽԱԺՎ-ով ախտահարված ծայրամասային արյան ներկված քսուկներում և ավշային հանգույցների և փայծաղի պատճեններում իրականացվել է պատկերի հեռուստատեսային սկանավորող անալիզատորով (խոշորացում – 100x1.30), որը հավաքված էր համակարգչին միացված SMP 05 (OPTON, ԳԴՀ) մանրադիտակ-ֆոտոմետրի վրա (ալիքի առավելագույն կլանման տիրույթը 575 նմ է):

2.4.2 ԴՆԹ-ի բջջաֆոտոմետրիա

Հայտնի է, որ ԴՆԹ-ի քանակական ներկումից հետո ուսումնասիրվող բջիջների կորիզների օպտիկական խտությունը դառնում է ԴՆԹ-ի պարունակությանը համարժեք բջջամետրիայի առումով: Ընդ որում, ուսումնասիրվող բջիջների կորիզների օպտիկական խտությունը համեմատվում է համարժեք բջիջներում արդեն հայտնի ԴՆԹ-ի քանակության հետ: Ստացված արդյունքներում ԴՆԹ-ի քանակը նշվել է «c» միավորով, որտեղ 1 «c»-ն հավասար է ԴՆԹ-ի հապլոիդ հավաքակազմին դիպլոիդ բջջի պոպուլյացիայում, որոնք գտնվում են բջջային ցիկլի G_0/G_1 փուլերում:

Այսպիսով, բջջամետրիկ չափումները հնարավորություն են տալիս բջիջների կորիզները համարել անէուպլոիդ, եթե նրանք շեղվել են 2c, 4c, 8c, 16c-ից ավելի քան 10%-ով, այսինքն, եթե այդ արժեքները չեն գտնվում 2c±0,2, 4c±0,4, 8c±0,8 սահմաններում [Böcking et al, 1995, Opfermann et al, 1987, Haroske et al, 1998]: ԴՆԹ-ֆուքսին համալիրի քանակության, ինչպես նաև կորիզի, կորիզակների մակերեսների և տրամագծերի որոշումն իրականացվել է հեռուստատեսային մեթոդով: Այստեղ կիրառվել են SMP-05 (Opton) սկանավորող մանրադիտակ-ֆոտոմետրին միացված համակարգիչ և տեսախցիկ (ԴՆԹ-ֆուքսին համալիրի կողմից ալիքի առավելագույն կլանման տիրույթը մանրադիտակ-ֆոտոմետրի համար կազմել է 575նմ): Յուրաքանչյուր դեպքի համար ԴՆԹ-ի քանակական չափումները կատարվել են 100 կորիզների վրա: Որոշվել է ԴՆԹ-ի միջին քանակությունը (համեմատվող պայմանական միավորներով), կորիզների և կորիզակների մակերեսը և տրամագիծը, ինչպես նաև կորիզում կորիզակների քանակը: Ապա կորիզներում ԴՆԹ-ի քանակության ստացված տվյալների հիման վրա կառուցվել են հիստոգրամներ ըստ պլոիդության դասերի: Հիստոգրամների կառուցման համար առողջ խոզերի ծայամասային արյան լիմֆոցիտների կորիզներում որոշվել է ԴՆԹ-ի պլոիդային ստանդարտը:

2.4.3 Սպիտակուցների նաֆթոլ դեղին ներկում

Բջջում ընդհանուր սպիտակուցների քանակական որոշման համար բոլոր պատրաստուկները ներկվել են Ֆյուլգենը նաֆթոլ դեղինին համակցելու մեթոդով [Gaub et al., 1975]: Այս մեթոդը թույլ է տալիս միաժամանակ նույն բջջում միկրոսպեկտրոֆոտոմետրիկ վերլուծության ենթարկել ԴՆԹ-ն և սպիտակուցը, որտեղ սպիտակուցի ծավալը համապատասխանում է բջջի չոր զանգվածին: Սպիտակուցների քանակական ուսումնասիրությունն իրականացվել է մանրադիտակ ֆոտոմետրի միջոցով 434նմ ալիքի տիրույթում:

2.5 Ցիտոկինների մակարդակի որոշում ծայրամասային արյան շիճուկում

Արյան շիճուկները պահվել են համաձայն արձանագրության՝ -20°C-ի պայմաններում 2 ամսից ոչ ավել: Ցիտոկինների քանակական պարունակությունը որոշվել է միաժամանակ: Մեր կողմից ուսումնասիրվել են հետևյալ ցիտոկինները՝ ԻԼ-1β, ԻԼ-6, ԻԼ-8 և ՈՒՆԳ-α:

Ցիտոկինների քանակական հետազոտությունները կատարվել են 4 առողջ և ԽԱԺՎ-ով վարակված 8 խոզերի ծայրամասային արյան շիճուկներում: Մոտավորապես 4մլ արյուն հավաքվել է յուրաքանչյուր խոզի ակնային երակային ծոցից [Stier and Leucht, 1980]:

Խոզերի արյան շիճուկներում ցիտոկինների հանդեպ IgG հակամարմիններն որոշվել են ELISA մեթոդով (R&D (USA) հավաքածուի օգնությամբ)՝ հիմնաված դասական կարծրֆազային իմունոֆերմենտային եղանակի վրա: Մինչ իմունոֆերմենտային ռեակցիայի իրականացումն առողջ և հիվանդ խոզերից վերցված արյան շիճուկները նստեցման եղանակով մաքրվել են ձևավոր տարրերից և պահվել -

20°C-ում: Առաջին փուլում ցիտոկինների հանդեպ IgG հակամարմիններով նմուշները ավելացվել են համապատասխան խցիկներում, որոնց հատակում արդեն գտնվում էին ցիտոկինների հակածինները: Կես ժամյա ինկուբացիայից հետո, որի ընթացքում տեղի է ունենում հակածին-հակամարմին համալիրի ձևավորումը, չկապված բաղադրիչները լվացման ճանապարհով հեռացվել են: Երկրորդ փուլում խցիկներում ավելացվել է կոնյուգատ, որը բաղկացած է խոզերի ցիտոկինների հակամարմինների հանդեպ ճագարի հակա-IgG-ից և պերօքսիդազից, որոնք ձևավորում են բնորոշ իմունային համալիր խոզի յուրահատուկ IgG հակամարմինների հետ: Լվացման ճանապարհով հեռացվել են կոնյուգատի մնացորդները և խցիկներում ավելացվել է TMB սուբստրատ, որը ձևավորված իմունային համալիրը ներկել է երկնագույն, ապա ստոպ-ռեագենտի ավելացումից հետո՝ դեղին գույնով: Հետազոտվող նմուշներում գունավորման ինտենսիվությունն ուղիղ համեմատական է IgG հակամարմինների խտությանը: Ինչպես ստուգիչ, այնպես էլ հետազոտվող շիճուկներում լույսի ալիքի կլանումը չափվել է 450նմ ալիքի երկարության տիրույթում HUMAREADER սպեկտրոֆոտոմետրի միջոցով, որտեղ կիրառվել է 650նմ ալիքի երկարության դիֆերենցիալ ֆիլտր: Արդյունքները համեմատվել են ստանդարտ ստուգիչների հետ:

2.6 Մորֆոլոգիական եզրակացությունների ճշտության գնահատում

Ավշային հանգույցների և փայծաղի պատճենների բջջաբանական հետազոտության որակական ստուգումը կատարվել է ներլաբորատորիային եզրակացության ճշգրտության համակարգով, որը իրականացվում է լաբորատորիայում մշտապես: Ավշային հանգույցների և փայծաղի բոլոր պատճենները միաժամանակ հետազոտվել են 2 մասնագետների կողմից, արդյունքները համեմատվել և տարաձայնությունների դեպքում նաև քննարկվել են:

2.7 Համակարգչային վերլուծություն

Յուրաքնչյուր դեպքում վերլուծության են ենթարկվել նվազագույնը 100-200-ական բջիջներ տարբեր մեթոդների օգնությամբ, որոնք թույլ են տվել կատարել ծայրամասային արյան քսուկների, ավշային հանգույցների, փայծաղի կտրվածքների և պատճենների վերլուծություն, ինչպես առողջ, այնպես էլ հիվանդ խոզերի մոտ: Քսուկներում հաշվարկվել են արյան սպիտակ ձևավոր տարրերի, ինչպես նաև հիվանդության դինամիկայում հայտնաբերվող բջիջների տոկոսային հարաբերությունը:

Պատրաստուկների ուսումնասիրության համար կիրառվել է լուսային մանրադիտակ (REFLECTED LIGHT FLUORESCENCE MICROSCOPE L2001 Series User Guide), իսկ վերլուծությաունն իրականացվել է Labkit Standart v1.1en ծրագրի օգնությամբ:

2.8 Վիճակագրական վերլուծություն

Ստացված փորձարարական բոլոր տվյալները ենթարկվել են վերլուծության, մշակվել են վարիացոն վիճակագրության մեթոդներով, որտող վիճակագրական վերլուծության համար կիրառվել է “Excel” ծրագրային փաթեթի 13.0 տարբերակի “Տվյալների վերլուծության” բաժնի “Նկարագրական վերլուծության” ենթաբաժինը: Յուրաքանչյուր խմբում բոլոր ցուցանիշների համար որոշվել է միջին թվաբանականը (M), ստանդարտ շեղումը (σ) և միջինի ստանդարտ սխալը (m):

Պարամետրիկ ցուցանիշների համար տարբերության հավաստիության որոշումը կատարվել է ըստ Ստյուդենտի t չափանիշի: Ոչ պարամետրիկ ցուցանիշների համար տարբերության հավաստիության որոշումը կատարվել է ըստ Վիլկոքսոն-Մանն-Ուիթնիի U չափանիշի SPSS 13.0 ծրագրի օգնությամբ (SPSS, Inc., Chicago, IL):

Ուսումնասիրվող ցուցանիշների միջև կորելացիան որոշվել է “Excel” ծրագրով՝ Պիրսոնի r կորելացիայի (հարաբերակցության) գործակցի օգնությամբ: Կորրլացիայի գործակցի սխալը որոշվել է $m_r=\pm1-r^2/n$ բանաձևով, որտեղ n-ը դիտումների թիվն է: Սխալը չի գերազանցել կորելացիայի գործակցի արժեքի 1/3-ը: r-ի մինչև 0.3 արժեքի դեպքում կորելացիոն կապը համարվել է թույլ, 0.3-0.6-ի դեպքում՝ միջին, իսկ 0.6-ից բարձրը՝ ուժեղ: «-»-ը նշանակում է հակադարձ կորելացիոն կապ:

Գլուխ 3: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

3.1 Խոզերի փորձարարական վարակումը ԽԱԺՎ-ով: Կլինիկական և ախտաանատոմիական հետազոտություններ

Խոզերի փորձարարական վարակումն իրականացվել է վիրուսի միջմկանային ներարկմամբ՝ հավասար չափաբաժիններով, որոնք հաշվարկվել են վիրուսի տիտրի որոշման հեմադսորբցիայի եղանակով: Միջմկանային վարակումը շատ քիչ է տարբերվում բնական ճանապարհով վարակումից: Նման վարակմանը բնորոշ է վիրուսի վաղ հայտնաբերումն արյան մեջ, ինչպես նաև հիվանդության գաղտնի շրջանի կրճատումը 2-4 օրով [Guinat et al., 2014]: Այս ամենը՝ վիրուսի չափաբաժնի ստանդարտացումը, հիվանդության և, հետևապես, փորձի տևողության կրճատումը, հնարավորություն են տալիս ԽԱԺ-ի փորձարարական մոդելավորման ընթացքում ավելի հաճախ կիրառել միջմկանային վարակումը:

Փորձարարական վարակման ընթացքը ոչնչով չի տարբերվել գրականության մեջ նկարագրված հիվանդության ընթացքից և 6-րդ կամ 7-8-րդ ՀՎՕ-ին հասել է ագոնալ փուլին [Gomez-Villamandos et al., 1997b]: Վարակումից հետո հիվանդության առաջին երկու օրերը ընթացել են առանց որևէ ախտանշանների, չնայած 2-րդ հետվարակային օրից սկսած գրանցվել է վիրեմիա (մինչև log 4-5 HADU/մլ): Այնուհետև հիվանդության 3-4-րդ օրերից նկատվել է ախորժակի բացակայություն, որը զուգորդվել է մարմնի արտաքին ծածկույթների ջերմաստիճանի բարձրացմամբ՝ մինչև 40-41°C, ակտիվության նվազմամբ, շնչառության դժվարեցմամբ: 5-6-րդ օրերին որոշ կենդանիների արտաթորանքում նկատվել է արյուն: Հիվանդության վերջնական փուլում (7-րդ օրվա սկզբում) կենդանիները ենթարկվել են էֆթանազիայի համաձայն համապատասխան ուղեցույցի (տես գլուխ 2-ում):

Ինչպես նշվեց վերևում հիվանդության վաղ ախտանշաններն են հանդիսանում ախորժակի բացակայությունը և ջերմաստիճանի բարձրացումը (նկար 1): Վարակումից 2-3 օր անց մաշկային ծածկույթում նկատվել են շատ փոքր՝ 1-2մմ, ինչպես նաև մինչև 10մմ տրամագծով արյունազեղումներ: Արյունազեղումները տեղակայված էին առջևի և հետին վերջույթների ներքին մակերեսներին, ականջների ծայրերին:

Արյունազեղումները նախ դրսևորվել են կետային և, ունենալով միաձուլվելու միտում, ավելի վառ արտահայտվել են հիվանդության 3-5-րդ օրերին (մուգ վարդագույնից մինչև մուգ մանուշակագույն երանգով): Այսպիսի ախտաբանական փոփոխությունները լավ հայտնի են ԽԱԺ-ի դեպքում [Anderson et al., 1987, McVicar et al., 1981]:



Նկար 1 - Խոզի մարմնի ջերմաստիճանային տատանումները ԽԱԺ-ի դինամիկայում:
Աբցիսների առանցք՝ հետվարակային օրեր (ՀՎՕ),
Օրդինատների առանցք՝ ջերմաստիճան:

Դիտվել են նաև վարքային փոփոխություններ՝ կենդանիները հաճախ պառկած էին ստվերում, շնչառությունը հաճախացած էր, դրսևորում էին արտահայտված անտարբերություն: Կենդանու շարժման ընթացքում նկատվել է հետին վերջույթների թուլություն և երերուն քայլվածք: Կենդանու վարքի դրսևորման այսպիսի շեղումները, որոնք նկարագրվում են մեր կողմից, նույնպես հայտնի են բավականին վաղուց [Wilkinson et al., 1980]: Այսպիսով, մեր կողմից իրականացված փորձերում հիվանդության ընթացքում դրսևորված կլինիկական ախտանշանները ոչնչով չեն տարբերվում գիտական գրականությունում նշված տվյալներից:

Ինչպես երևում է նկար 2-ից բոլոր վարակված կենդանիների արյան պլազմայում վիրուսի հեմադսորբցիոն տիտրերեն սկսել են արտահայտվել վարակումից 2-3 օր անց: Որոշ կենդանիների մոտ վիրեմիան սկսել է նկատվել հետվարակային առաջին օրվա վերջում: Արյան պլազմայում վիրուսի տիտրերի առավելագույն արժեքները գրանցվել են հիվանդության 4-5-րդ օրերեն (4,25-5,0 $\log_{10}$ HAD50) և պահպանվել են անփոփոխ մինչև հետվարակային 6-7-րդ օրը:



Նկար 2 - Վիրուսի հեմադսորբցիոն տիտրերը

ԽԱԺ-ով վարակված խոզերի արյան մեջ:

Աբցիսների առանցք՝ վարակի տևողությունն արտահայտված օրերով,

Օրդինատների առանցք՝ վիրուսի տիտրն արտահայտված $\log_{10}$ $HADU_{50}$/մլ միավորով:

Սուր ԽԱԺ-ի դինամիկայում մեր կողմից նկատվել են ինչպես լավ հայտնի, այնպես էլ համեմատաբար հազվագյուտ և քիչ հայտնի ախտաանատոմիական փոփոխություններ [Karalova et al., 2015]:

Խոզերի հերձման ժամանակ հայտնաբերվել են բազմաթիվ արյունազեղումներ լործաթաղանթներում և շճաթաղանթներում, ինչպես նաև որովայնի և կրծքի խոռոչների օրգաններում: Լավ նկատելի էին բազմաթիվ արյունազեղումներ նաև միջընդերքում (նկար 3): Ավշային հանգույցները մեծացած էին և այնտեղ հայտնաբերվել են ներսփռված արյունազեղումներ: Ընդերային ավշային հանգույցներում հայտնաբերվել են փոփոխություններ, արդեն իսկ գրականությունում լավ նկարագրված, ինչպիսիք են ավշային հանգույցի չափերի մեծացումը, շոշափելիս փափկությունը և արտաքնապես հեմատոմաներ հիշեցնող մուգ բալագույն/կապույտ երանգը:



Նկար 3 - Խոզի միջընդերքն արյունազեղումներով (7-րդ ՀՎՕ):

Փայծաղը ծավալով մեծացած էր (երբեմն մի քանի անգամ), կակղանը փափկած էր, փխրուն, ուներ մուգ կարմիր երանգ և լցված էր արյունով: Լյարդը նույնպես մեծացած էր և արյունալցված: Թոքերը փքված էին, երբեմն նկատվել է շճային այտուց: Թոքերում հաճախ տեսանելի էին եզակի արյունազեղումներ: Արյունազեղումները հաճախ հայտնաբերվել են թոքերի եզրերում (նկար 4):



Նկար 4 - Թոքային արյունազեղումներ (7-րդ ՀՎՕ):

Կրծքային, որովայնային և պերիկարդիալ խոռոչներում հայտնաբերվել է զգալի քանակությամբ էքսուդատ, հաճախ ֆիբրինային մակարդուկներով (էքսուդատի գույնը տատանվում էր դեղնակարմրավուն երանգից մինչև մուգ կարմիր) (նկար 5):



Նկար 5 - Էքսուդատի կուտակում կրծքի խոռոչում (7-րդ ՀՎՕ):

Երիկամները ծավալով մեծացած էին, արյունալցված, ծածկված արյունազեղումների բազմաթիվ օջախներով, երբեմն առկա էին նաև տարածուն արյունազեղումներ (նկար 6):



Նկար 6 - Ախտահարված երիկամը արյունազեղումներով (7-րդ ՀՎՕ):

Որոշ խոզերի մոտ նկատվել է սրտի չափերի մեծացում: Պերիկարդը հաճախ լցված էր մուգ կարմիր երանգի 100-150մլ էքսուդատով: Երբեմն հայտնաբերվել են արյունազեղումներ անմիջապես սրտամկանում (նկար 7):

Նկար 7 - Արյունազեղումներ սրտամկանում (7-րդ ՀՎՕ):

Մեր կողմից իրականացված հետազոտությունների ընթացքում բազմիցս հայտնաբերվել են արյունազեղումներ նաև մկանային հյուսվածքներում՝ հատկապես վերջույթների (նկար 8): Արյունազեղումներ հայտնաբերվել են նաև հետին վերջույթների խոշոր հոդերում: Կարևոր է նշել, որ հեմարտրոզ հայտնաբերվել է ոչ միայն ծնկային հոդում (առավել հաճախակի տեղայնացում), այլ նաև մյուս խոշոր հոդերում, օրինակ, կոնք-ազդրային հոդում:

Նկար 8 - Արյունազեղումներ մկանային հյուսվածքում (7-րդ ՀՎՕ):

3.1.1 Ավշային հանգույցների ախտաբանությունը

Հերձման արդյունքում ԽԱԺ-ի վաղ փուլերում որոշ ավշային հանգույցներում հայտնաբերվել են արյունազեղումներ (սկսած հիվանդության 3-րդ օրից): Հիվանդության ավելի ուշ շրջանում արդեն ախտահարված էին ավշային հանգույցների մեծ մասը:

Ախտահարված ավշային հանգույցներն ունեին մուգ կապույտ երանգ, իսկ լայնական կտրվածքում նկատելի էին կետային կամ միաձուլված արյունազեղումներ (նկար 9): Մարմնական և էնդերային ավշային հանգույցների ախտաանատոմիական հետազոտություններում հայտնաբերված փոփոխություններն սկզբում բնութագրվել են սերոզ, ապա սերոզ-հեմոռագիկ և հեմոռագիկ լիմֆադենիտով:

Նկար 9 - Ախտահարված ավշային հանգույց՝ զանգվածային արյունազեղումներով:

Ավշային հանգույցների հյուսվածաբանական հետազոտություններում լավ տեսանելի էին ավշային ֆոլիկուլները բազմացման կենտրոններով (նկար 10):



Նկար 10 - Ավշային ֆոլիկուլ բազմացման կենտրոնով, օբ x 4, օկ. x 10
(բազմացման կենտրոնները նշված են սլաքներով):
Պատրաստուկը ներկվել է հեմատոքսիլին-էոզինով:

3-րդ ՀՎՕ-ում ավշային հանգույցների մանրադիտակային հետազոտությունների արդյունքում արդեն հայտնաբերվել են ախտաբանական փոփոխություններ: Առաջնային ախտաբանական փոփոխությունները բնութագրվել են էրիթրոցիտների ներթափացման և պարենքիմային բջիջների նվազման պատկերով (նկար 11):



Նկար 11 - Ախտահարված ավշային հանգույցը հիվանդության 3-րդ օրը, օբ x 25, օկ. x 10 (էրիթրոցիտների ներթափանցումը նշված է սլաքներով): Պատրաստուկը ներկվել է հեմատոքսիլին-էոզինով:

Պարենքիմայում ավելացել էին ախտահարված և քայքայված բջիջների թիվը (նկար 12):



Նկար 12 - Ախտահարված բջիջներն ավշային հանգույցում, օբ x 25, օկ. x 10: Պատրաստուկը ներկվել է հեմատոքսիլին-էոզինով:

Հիվանդության ավելի ուշ փուլերում ավշային հանգույցներում հայտնաբերվել է հեմոռագիկ լիմֆադենիտ (նկար 13 ա, բ):



Նկար 13 - Հեմոռագիկ լիմֆադենիտ հիվանդության 4-րդ (ա) և 6-րդ (բ) օրը, օբ x 4, օկ. x 10 (հեմոռագիաները նշված են սլաքներով)

Պատրաստուկը ներկվել է հեմատոքսիլին-էոզինով:

Արյունազեղումների ինտենսիվության մեծացմանը զուգահեռ հիվանդության վերջնական փուլում տարբեր աստիճանով ախտահարված էին ավշային հանգույցների 60 %-ից ավելին: Որոշ ավշային հանգույցներում հանդիպել է նաև հիպերպլազիա, որը հավանաբար հանդիսանում է փոխհատուցողական ռեակցիա: Որոշ դեպքերում հիպերպլազիան ավշային ֆոլիկուլների դատարկման հետևանքով փոխարինվում էր հիպոպլազիայով: Ավշային ֆոլիկուլներում նույնպես նկատվել են արյունազեղումներ:

Այսպիսով, մեր կողմից կատարված աշխատանքում ցույց է տրված, որ խոզերի աֆրիկյան սուր ժանտախտի ամենավաղ փուլերից սկսած (2-3-րդ օր) առաջանում են ավշային հանգույցների ախտահարումներ՝ կետային, իսկ հետագայում զանգվածային արյունազեղումների տեսքով: Նկարագրվել է նաև ավշային ֆոլիկուլների հիպերպլազիա, որն ավելի ուշ փուլերում լիմֆոիդ բջիջների արտամղման հետևանքով փոխարինվել է հիպոպլազիայով:

3.1.2 Լիմֆոգրամ

Լիմֆո-միելոիդային համալիրն իրենից ներկայացնում է հյուսվածքների և օրգանների համակարգ, որոնց պարենքիման կազմված է մեզենքիմային ծագման բջիջներից: Այն բաղկացած է ոսկրածուծից, թիմուսից, փայծաղից, ավշային հանգույցներից, աղիների լիմֆոիդ հյուսվածքից և շարակցական հյուսվածքից: Համալիրի գործառույթային նշանակությունն է՝ արյունաստեղծման գործընթացի ապահովումը (միելոպոեզ) և իմունային համակարգի բջիջների ձևավորումը (լիմֆոպոեզ): Այս համալիրի հյուսվածքների և օրգանների շարքում կան իսկական լիմֆոիդ կազմավորումներ, որտեղ իրականանում է միմիայն լիմֆոպոեզը (թիմուս, ավշային հանգույցներ, աղիների լիմֆոիդ հյուսվածք) և խառը կազմավորումներ, որոնք ապահովում են և՛ լիմֆոպոեզը, և՛ միելոպեզը (ոսկրածուծ, փայծաղ):

Իմունային համակարգի օրգաններն իրենց մորֆոլոգիական հատկանիշներով նույնականացվում են լիմֆոիդ օրգանների հետ, քանի որ նրանց հիմնական բջիջները համարվում են լիմֆոցիտները և նրանց նախորդները: Իմունային համակարգի օրգանները ենթաբաժանվում են կենտրոնականի և ծայրամասայինի: Կենտրոնական օրգաններ են համարվում ոսկրածուծը, թռչունների մոտ Bursa fabricii-ն և նրա անալոգը կաթնասունների մոտ, ինչպես նաև թիմուսը (ուրցագեղձը): Ծայրամասային օրգաններին են պատկանում փայծաղը, ավշային հնագույցները և ողջ օրգանիզմում տարածված և տարբերակման տարբեր փուլերում գտնվող լիմֆոցիտների մեծաթիվ կուտակումները [http://chem21.info/info/100608/]:

Տարբեր տեղակայում և մասնագիտացում ունեցող լիմֆոիդ օրգանների կողմից օրգանիզմում բորբոքային գործընթացների նկատմամբ զարգացող պատասխան ռեակցիաների օրինաչափությունների ուսումնասիրությունը կօգնի հասկանալ իմունոկոմպետենտ օրգաններում բջջահյուսվածքային փոխազդեցությունների մեխանիզմները: Այդ մեխանիզմների կառավարումը կարող է թողնել չեզոքացնող, դետոքսիֆիկացնող ազդեցություն ախտաբանական (բորբոքային) գործընթացի վրա: Այս ամենը նաև թույլ կտա օպտիմալացնել մոտեցումները բուժման գործընթացում: Այսպիսով, հասկանալի է դառնում, որ իմունային համակարգի ծայրամասային օրգանները հանդիսանում են այն վայրերը, որտեղ հանդիպում են հակածինները իմունոկոմպետենտ բջիջների հետ: Այստեղ նաև տեղի է ունենում հակածնի ճանաչումը, իմունոկոմպետենտ բջիջների փոխազդեցությունը, նրանց պրոլիֆերացիան (կլոնային էքսպանսիա), հակածին-կախյալ տարբերակումը: Հետևապես, այստեղ տեղի է ունենում յուրահատուկ իմուն պատասխանի զարգացումը [Фрейдлин, 1998]:

Այս գլխում մենք ներկայացնելու ենք սուր ԽԱԺ-ի դինամիկայում ավշային հանգույցներում տեղի ունեցող փոփոխությունները: Լիմֆոիդ օրգաններում այդ կարևորագույն փոփոխություններից մեկը հանդիսանում է ավշային հանգույցների բջջային պոպուլյացիայի կազմի փոփոխությունը՝ լիմֆոգրամը: ԽԱԺ-ի դեպքում խոզերի ամբողջական լիմֆոգրամն առաջին անգամ ուսումնասիրվել և ներկայացվել է մեր կողմից [Zakaryan et al., 2015]: Ավշային հանգույցում բջջային պոպուլյացիայի կազմը ներկայացնող տվյալները բերվում են աղյուսակ 1-ում:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից առողջ խոզերի ավշային հանգույցների բջջային պոպուլյացիայի ամենահիմնական բջիջները լիմֆոցիտներն են, որոնք լիմֆոբլաստների հետ միասին կազմում են ողջ կորիզավոր բջիջների մոտ 85%-ը: Կորիզավոր բջիջների 11.5%-ը կազմում են միոլոիդ շարքի բջիջները (միելոիդ բջիջներ, մետամիելոցիտներ, էոզինոֆիլների և նեյտրոֆիլների տարբեր ձևեր և բազոֆիլներ): Բջիջների մոնոցիտային շարքը կազմում է 2%-ը, իսկ կորիզավոր էրիթրոիդ բջիջները՝ 1.5%-ից էլ քիչ:

ԽԱԺ-ի զարգացման վաղ փուլերում լիմֆոցիտների քանակը ավելանում է (ոչ արժանահավատ), իսկ փորձարարական վարակման 5-րդ օրից սկսած մինչև վերջին օրը՝ նվազում: Հիվանդության 6-7-րդ օրերին լիմֆոցիտների քանակությունը 2 անգամ արժանահավատ նվազում է ստուգիչ խմբի ցուցանիշների համեմատ: Ավշային հանգույցների բջջային պոպուլյացիայում վարակի 3-րդ օրից սկսած հայտնաբերվում են ատիպիկ լիմֆոցիտներ: ԽԱԺ-ի ժամանակ ատիպիկ լիմֆոցիտնեն առաջին անգամ հայտնաբերվել են բջջի կենսաբանության և վիրուսաբանության լաբորատորիայում տարվող հետազոտությունների արդյունքում [Karalova et al., 2011b, Karalyan et al., 2012b]: Մինչև հիվանդության վերջին օրն այդ ատիպիկ լիմֆոցիտները հայտնաբերվում են, այն էլ աճող քանակություններով: Հիվանդության վաղ փուլերում բջջային պոպուլյացիայում նկատվում է լիմֆոբլաստների նվազման միտում: Հիվանդության ողջ ընթացքում բազոֆիլների պոպուլյացիան մնում է գրեթե անփոփոխ: Նեյտրոֆիլներին բնորոշ է պոպուլյացիայի երիտասարդացումը (վարակի 5-րդ օրից սկսած), որտեղ դիտվում է ցուպիկակորիզավոր բջիջների ավելացում, ի տարբերություն սեգմենտակորիզավոր նեյտրոֆիլների կայուն ցուցանիշների: Գրեթե միաժամանակ (վարակի 6-րդ օրից սկսած) կտրուկ ավելանում է նեյտրոֆիլների ամենավաղ մորֆոլոգիապես ճանաչելի նախորդների՝ միելոիդ բջիջների, քանակությունը: Սա անկասկած նշան է հանդիսանում պոպուլյացիայի երիտասարդացման (վերականգնողական տեղաշարժ), որը բնորոշ է ԽԱԺ-ի որոշ ձևերին: Նմանատիպ գործընթացներ տեղի են ունենում նաև էոզինոֆիլների պոպուլ-

Աղյուսակ 1

Խոզի ավշային հանգույցի բջջային կազմը ստուգիչ խմբում և ԽԱԺ-ի դինամիկայում

Բջիջներ	Ստուգիչ	2-րդ ՀՎՕ	3-րդ ՀՎՕ	4-րդ ՀՎՕ	5-րդ ՀՎՕ	6-րդ ՀՎՕ	7-րդ ՀՎՕ
Մոնոցիտներ	1.1±0.3	0.3±0.05	0.2±0.01	0.7±0.2	2.3±0.7	1.6±0.6	5.0±1.3**
Մոնոբլաստներ	0.9±0.2	0.1±0.01	0.1±0.01	0.4±0.1	1.1±0.3	0.8±0.2	0.2±0.08
Լիմֆոցիտներ	83.0±6.4	91.1±8.3	90.5±5.8	92.7±10.3	67.0±7.5	37.0±9.6*	42.6±5.8*
Ատիպիկ լիմֆոցիտներ	-	-	0.1±0.01	0.1±0.01	0.3±0.1**	0.5±0.2**	0.8±0.2**
Լիմֆոբլաստներ	1.9±0.4	0.5±0.1***	0.5±0.1***	0.3±0.02***	1.0±0.2	2.2±0.7	1.0±0.4
Միելոիդ բջիջներ	4.3±1.1	4.0±0.9	3.7±0.7	2.4±0.7	3.4±0.6	10.6±1.6**	18.5±1.4**
Մետամիելոցիտներ	2.5±0.9	0.5±0.1*	0.5±0.1*	0.3±0.07*	2.6±0.9	2.7±0.7	3.8±0.8
Ցուպիկակորիզավոր նեյտրոֆիլներ	1.2±0.4	0.5±0.2	1.5±0.3	0.3±0.08***	3.4±1.4***	4.9±1.6**	3.9±1.1***
Սեգմենտակորզավոր նեյտրոֆիլներ	0.8±0.1	0.8±0.2	1.0±0.2	0.2±0.01	1.0±0.3	1.2±0.3	1.2±0.4
Մետամիելոցիտային էոզինոֆիլներ	0.7±0.1	0.5±0.1	0.5±0.2	0.1±0.01	4.3±1.2**	8.4±0.7**	0.4±0.1
Էոզինոֆիլներ	1.5±0.3	1.0±0.2	1.0±0.3	1.6±0.3	3.1±0.9	11.8±2.9**	1.6±0.5
Բազոֆիլներ	0.5±0.1	0.3±0.05	0.1±0.02	0.2±0.01	0.4±0.1	1.1±0.4	0.2±0.06
Կորիզավոր էրիթրոիդ բջիջներ	1.4±0.1	0.5±0.1	0.7±0.1	0.7±0.1	10.1±2.4**	17.0±3.0**	20.7±3.4**

* արժանահավատ փոքր է ստուգիչ խմբից ($p<0.05$-$p<0.01$)

** արժանահավատ մեծ է ստուգիչ խմբից ($p<0.05$-$p<0.01$)

*** միտում ($p<0.1$)

յացիայում, սակայն այստեղ ավելանում է հասուն ձևերի քանակությունը: Սա պայմանավորված է ինչպես հասուն էոզինոֆիլների ցածր զգայնությամբ ԽԱԺ-ի վիրուսի նկատմամբ, այնպես էլ վերականգնողական տեղաշարժով (որը հավանաբար բնորոշ է ողջ միելոիդ պոպուլյացիային) [Gómez-Villamandos et al., 1997b]:

Էրիթրոիդ շարքի կորիզավոր բջիջների պոպուլյացիան վարակի 5-րդ օրից սկսած արժանահավատորոն ավելանում է: Նրա մասնաբաժինը ավշային հանգույցի ողջ բջջային պոպուլյացիայի մեջ աճում է ավելի քան 10 անգամ: Այս աճը տեղի է ունեում ի հաշիվ ավշային հանգույցի հիմնական բջիջների՝ լիմֆոցիտների քանակի նվազման, ինչպես նաև էիրթրոպոեզի խանգարման, մասնավորապես, էիրթրոցիտների հասունացման խանգարման [Karalova et al., 2014]: Այս խանգարման հետևանքով ոսկրածուծից արտազատվում են էրիթրոիդ շարքի մեծաքանակ կորիզավոր բջիջներ, որոնց մի մասը պահվում են ֆիլտրող կառույցներում, ինչը բնորոշ է ավշային հանգույցին: Այս ամենի հետ միաժամանակ հետվարակային 6-7-րդ օրերին (հիվանդության վերջնական փուլ) տեղի է ունենում միելոիդ բջիջների քանակության զգալի աճ: Լիմֆոիդ, միելոիդ և էիրթրոիդ պոպուլյացիաների փոփոխությունների տոկոսային հարաբերությունները բերվում են նկար 14-ում:



Նկար 14 - Հիմնական կորիզավոր բջիջների պոպուլյացիաների հարաբերակցությունը: Աբցիսների առանցք՝ հետվարակային օրեր, Օրդինատների առանցք՝ բջիջների տոկոսը ընդհանուր պոպուլյացիայում:

Ավշային հանգույցներում բջիջների պոպուլյացիոն կազմի փոփոխությունների հետ միաժամանակ տեղ է ունենում նաև բջիջների կենսունակության և նրանց ընդհանուր քանակության փոփոխություններ: Այս հետազոտությունների արդյունքները բերվում են նկար 15-ում:



Նկար 15 - Ավշային հանգույցի միավոր մակերեսում
կենսունակ և ոչ կենսունակ բջիջների ընդհանուր քանակությունը:
Աբցիսների առանցք՝ հետվարակային օրեր,
Օրդինատների առանցք՝ բջիջների թիվը համապատասխան տեսադաշտում:

Ինչպես երևում է 15-րդ նկարից ավշային հանգույցում բջիջների ընդհանուր քանակությունը միավոր մակերեսում ունեցել է աճի միտում ($p<0.1$) հիվանդության վաղ փուլերում (վարակից 2-3 օր անց): Հիվանդության վերջնական փուլում կորիզավոր բջիջների քանակությունը միավոր մակերեսում նվազել է մինչև ստուգիչ արժեքները:

Հաշվի առնելով աղյուսակ 1-ի տվյալները, կարելի է ենթադրել, որ այդ աճը պայմանավորված է հասուն լիմֆոցիտների աճող պոպուլյացիայիով: Հիվանդության 5-րդ օրից սկսած կորիզավոր բջիջների ընդհանուր քանակությունը նվազելով հասնում է ստուգիչ արժեքներին: Այսպիսի տատանումների հիմնական պատճառ է կրկին հանդիսանում հասուն լիմֆոցիտների քանակական փոփոխությունը: Հետվարակային 2-րդ օրից սկսած գրանցվել է ոչ կենսունակ բջիջների քանակական աճ (տարբերությունը ստուգիչ խմբի հետ արժանահավատ է սկսած 3-րդ օրից մինչև փորձի ավարտը – $p<0.01$-$p<0.001$): Վարակից 3 օր անց անկենսունակ բջիջները կազմել են ընդհանուր պոպուլյացիայի 10%-ը:

Ելնելով վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ կենսունակ կորիզավոր բջիջների ընդհանուր քանակությունն ավշային հանգույցի միավոր մակերեսում հիվանդության ուշ փուլերում (5-7-րդ օրեր) ունի նվազման միտում ($p<0.1$):

Առողջ խոզերի ավշային հանգույցների պատճենների ուսումնասիրության արդյունքում պարզ երևում է, որ ավշային հանգույցի բջջային պոպուլյացիայի հիմնական բջիջները լիմֆոցիտներն են: Այդ պոպուլյացիայում քիչ թվով, բայց հանդիպում են նաև լիմֆոբլաստներ, միելոիդ բջիջներ և էրիթրոիդ բջիջներ (նկար 16):



Նկար 16 - Առողջ խոզերի ավշային հանգուցի պատճեններ:

Ա – Հասուն լիմֆոցիտներով շրջապատված միելոիդ բջիջ (նշված է սլաքով):

Բ, Գ – Լիմֆոցիտներ և լիմֆոբլաստներ (կորիզակ պարունակող բջիջներ):

Դ – Հասուն լիմֆոցիտներով շրջապատված բազոֆիլային էրիթրոբլաստ (նշված է սլաքով):

Պատճենները ներկվել են ըստ Գիմզայի, մասշտաբը՝ 10 մկմ:

ԽԱԺ-ի դինամիկայում ավշային հանգույցների պատճենների ուսումնասիրությունների արդյունքում գրանցվել է հասուն լիմֆոցիտների թվաքանակի նվազում՝ լիմֆոպենիա (մոտավորապես 2 անգամ): Հիվանդության ընթացքում զարգացող լիմֆոպենիային զուգահեռ ավելանում է էոզինոֆիլների թիվը: Վարակի ընթացքում նկատվում է ԽԱԺ-ին բնորոշ հեմադսորբցիա (նկար 17):



Նկար 17 - Ավշային հանգույցի պատճենները ԽԱԺ-ի դինամիկայում:

Ա – Լիմֆոբլաստ (կորիզակ պարունակող բջիջ) և լիմֆոցիտ:

Նկատվում է ԽԱԺ-ին բնորոշ հեմադսորբցիա:

Բ – Լիմֆոցիտներ և լիմֆոբլաստներ, իսկ կենտրոնում 2 էոզինոֆիլ:

Գ – 3 էոզինոֆիլներ և փոքր լիմֆոցիտներ:

Դ – Հեմադսորբցիա լիմֆոցիտի մակերեսին:

Պատճենները ներկվել են ըստ Գիմզայի, մասշտաբը՝ 10 մկմ:

(բոլոր պատճեններում նկատվում է պանցիտոպենիա (վերաբերում է կորիզավոր բջիջներին) ի հաշիվ լիմֆոպենիայի զարգացման)

3.1.3 Ավշային հանգույցի լիմֆոցիտների և լիմֆոբլաստների կորիզային ԴՆԹ-ի, սպիտակուցների քանակական փոփոխությունները: Բջիջների մորֆոլոգիական հետազոտություն

Մեր աշխատանքի հաջորդ փուլում ուսումնասիրել ենք հետազոտվող բջիջների՝ լիմֆոցիտների և լիմֆոբլաստների բջջաբանական և մորֆոֆունկցիոնալ փոփոխությունները: Այդ նպատակով կիրառվել է բջջասպեկտրոֆոտոմետրիայի մեթոդը (բջջում պարունակվող ԴՆԹ-ի՝ ներկված ըստ Ֆյոլգենի, և սպիտակուցների՝ ներկված նաֆթոլ դեղինով, քանակական չափումեր):

Ինչպես երևում է նկար 18-ում առողջ խոզերի ավշային հանգույցների լիմֆոցիտները դիպլոիդ են: ԽԱԺ-ի վաղ փուլերում լիմֆոցիտների պոպուլյացիայում հայտնվում են հիպերդիպլոիդ բջիջներ, ինչը համապատասխանում է միտոտիկ ցիկլի S փուլին: Հիպերդիպլոիդ լիմֆոցիտների հայտնվելու պատճառ կարող է հանդիսանալ ինչպես օրգանիզմի ռեակցիան վիրեմիայի նկատմամբ (որը գրանցվում է արդեն վարակից 24-48 ժամ անց՝ տես վերևում), այնպես էլ ԽԱԺ-ի վիրուսի ուղղակի ազդեցությունը, որն առաջ է բերում ախտահարված բջիջների կորիզային ԴՆԹ-ի պրոլիֆերացիա [Enjuanes et al., 1977, Nascimento et al., 2012]: Երրորդ տարբերակը դա վիրուսի վերարտադրությամբ բջջային ԴՆԹ-ի կրկնապատկման դիմակավորումն է (վիրուսային գործարանները, որոնք պարունակում են զգալի քանակությամբ ԴՆԹ և տեղակայվում են ախտահարված բջիջների կորիզների կողքին): Վերջինը կարելի է համարել ոչ հիմնավոր, քանի որ մեր կողմից օգտագործված հեռուստատեսային ուղիղ բջջասպեկտրոֆոտոմետրիայի մեթոդն, ի տարբերություն հոսքային բջջաֆոտոմետրիայի, հնարավորություն է տալիս տեսանելիորեն տարբերակել վիրուսային գործարանները կորիզային ԴՆԹ-ից:

Հիվանդության ավելի ուշ փուլերում (4-6-րդ օրեր) հիպերդիպլոիդ լիմֆոցիտներն անհետանում են: Սա մեզ թույլ է տալիս հակվելու նրանց հայտնվելու վերաբերյալ վերևում նշված առաջին տարբերակին՝ օրգանիզմի ռեակցիային վիրեմիայի նկատմամբ: Եթե հիպերդիպլոիդ բջիջները հայտնվեին վիրուսի ուղղակի ազդեցությամբ կամ նրա վերարտադրության շնորհիվ, ապա նրանք կպահպանվեին մինչև վարակի ավարտը և կգրանցվեր նրանց քանակական աճ:



Նկար 18 - Ստուգիչ խմբում և ԽՍԺ-ի դինամիկայում խոզերի ավշային հանգույցների լիմֆոցիտների կորիզների բաշխումը ըստ ԴՆԹ-ի պլոիդության դասերի:
Ա – Ստուգիչ խումբ, Բ – 2-րդ ՀՎՕ, Գ - 3-րդ ՀՎՕ, Դ - 4-րդ ՀՎՕ, Ե - 5-րդ ՀՎՕ, Զ - 6-րդ ՀՎՕ:

Աբցիսների առանցք՝ պլոիդության դասերը ըստ ԴՆԹ-ի պարունակության, Օրդինատների առանցք՝ ընդհանուր պոպուլյացիայում բջիջների պարունակությունը %-ով:



Նկար 19 - Ստուգիչ խմբում և ԽԱԺ-ի դինամիկայում խոզերի ավշային հանգույցների լիմֆոբլաստների կորիզների բաշխումը ըստ ԴՆԹ-ի պլոիդության դասերի:

Ա – Ստուգիչ խումբ, Բ – 2-րդ ՀՎՕ, Գ - 3-րդ ՀՎՕ, Դ - 4-րդ ՀՎՕ, Ե - 5-րդ ՀՎՕ, Զ - 6-րդ ՀՎՕ:

Աբցիսների առանցք՝ պլոիդության դասերը ըստ ԴՆԹ-ի պարունակության,

Օրդինատների առանցք՝ ընդհանուր պոպուլյացիայում բջիջների պարունակությունը %-ով:

Սակայն վիրուսի հեմադսորբցիոն տիտրերը բարձրանում էին մինչև 4-5-րդ ՀՎՕ և պահպանվում առավելագույնով մինչև հիվանդության ավարտը (տես բաժին 3.1-ում):

Լիմֆոցիտներում ԴՆԹ-ի քանակության ավելացումը, որը տեղի չի ունեցել քաղցկեղային տրանսֆորմացիայի հետևանքով, հիմնականում կապում են նրանց ակտիվության բարձրացման հետ՝ խթանված տարբեր գործոններով, այդ թվում նաև համակարգային բորբոքումով [Olivares-Zavaleta et al., 2011, Wang et al., 2011]:

Նկար 19 Ա-ում երևում է, որ ավշային հանգույցում լիմֆոբլաստները հիմնականում դիպլոիդ են, սակայն բջիջների ընդհանուր պոպուլյացիայում հայտնաբերվել են նաև հիպերդիպլոիդ լիմֆոբլաստներ: ԽԱԺ-ի վաղ փուլերում՝ 2-րդ ՀՎՕ, լիմֆոբլաստների պոպուլյացիայում հայտնվում են արդեն հիպերդիպլոիդ, տետրապլոիդ, հիպերտետրապլոիդ լիմֆոբլաստներ: Հետևաբար, գրանցվում է հիստոգրամի տեղաշարժ դեպի աջ, ինչը վկայում է այդ բջիջների կորիզային ԴՆԹ-ի պրոլիֆերացիայի մասին: ԽԱԺ-ի դինամիկայում արդեն 3-րդ ՀՎՕ-ից սկսած բջիջների պոպուլյացիայում հայտնաբերվում են հիպոդիպլոիդ լիմֆոբլաստներ: Հիստոգրամը տեղաշարժվում է դեպի ձախ (նկար 18-ի Գ, Դ, Ե, Զ): Հիպոդիպլոիդ լիմֆոբլաստների առկայությունը վկայում է ապոպթոզային գործընթացների մասին:

Նկար 20-ից երևում է, որ հիվանդության 2-4-րդ ՀՎՕ-ն ներառյալ ավշային հանգույցների լիմֆոցիտներում և լիմֆոբլաստներում տեղի է ունեում սպիտակուցի պարունակության արժանահավատ բարձրացում: Հիվանդության ավելի ուշ փուլերում հետազոտված բջիջներում սպիտակուցի պարունակության ցուցանիշները չեն տարբերվել ստուգիչ խմբի ցուցանիշներից:

Լիմֆոցիտներում սպիտակուցների քանակության ավելացումը սովորաբար կապում են այդ բջիջների ակտիվացման հետ՝ խթանված ինչպես յուրահատուկ, այնպես էլ ոչ յուրահատուկ խթանիչներով: Այս փաստը հայտնի է արդեն երկար ժամանակ՝ ֆիտոհեմագլյուտինինի ազդեցության շնորհիվ տրանսկրիպցիայի ակտիվության բարձրացման օրինակով [Kay, 1968]: Տարբեր վիրուսների ազդեցությամբ լիմֆոցիտների ակտիվացաման փաստը նույնպես հայտնի է բավականին վաղուց:



Նկար 20 - Ստուգիչ խմբում և ԽԱԺ-ի դինամիկայում խոզերի ավշային հանգույցների լիմֆոցիտներում և լիմֆոբլաստներում սպիտակուցի պարունակությունը: Աբցիսների առանցք՝ հետվարակային օրեր,
Օրդինատների առանցք՝ սպիտակուցի պարունակությունը պայմանական միավորներով (ՊՄ):

Լիմֆոցիտների ակտիվացումը հնարավոր է ինչպես վիրուսով վարակվելու և վիրուսի բազմացման արդյունքում, այնպես էլ համապատասխան բջիջների աբորտիվ (ոչ արդյունավետ) վարակի հետևանքով: Այս երևույթները լայնորոն լուսաբանված են գրականության մեջ և ուղղակիորեն չեն առնչվում մեր աշխատանքին, այդ իսկ պատճառով ձեռնպահ ենք մնում որևէ հղում կատարելուց: Կարևոր է նշել, որ խոզի լիմֆոցիտներն զգայուն են ԽԱԺ-ի վիրուսի բազմացման նկատմամբ և նրանց ակտիվացումը հնարավոր է վերոնշյալ փոխազդեցությունների հետևանքով [Knipe and Howley, 2007, Wardley et al., 1977]:

Իմուն համակարգի բջիջների մակերեսների փոփոխությունները հանդիսանում են ֆիզիոլոգիական կարգավիճակի կարևոր ցուցանիշներ: ԽԱԺ-ի դինամիկայում ավշային հանգույցների լիմֆոիդ բջիջների մակերեսների ուսումնասիրությունների արդյունքները բերվում են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Ավշային հանգույցի լիմֆոիդ բջիջների մակերեսները ԽԱԺ-ի դինամիկայում (մկմ^2)

Բջիջներ	ստուգիչ	2-րդ ՀՎՕ	3-րդ ՀՎՕ	4-րդ ՀՎՕ	5-րդ ՀՎՕ	6-րդ ՀՎՕ
Լիմֆոցիտ	82.5±10.1	128.6±13.2*	134.3±27.0**	134.6±30.2**	115.3±18.4	131.9±19.7*
Լիմֆոբլաստ	94.2±14.7	147.1±26.1**	142.5±25.2	137.4±19.8**	129.6±25.1	140.7±21.2**

*արժանահավատ է ստուգիչի համեմատ ($p<0.05$)

** միտում ստուգիչի համեմատ ($p<0.1$)

Ինչպես հետևում է աղյուսակից, հիվանդության համարյա բոլոր օրերին ավշային հանգույցներում հայտնաբերվել է լիմֆոցիտների և լիմֆոբլաստների մակերեսների արժանահավատ մեծացում կամ միտում ինտակտ կենդանիների համեմատ: Մեծ քանակության ցիտոպլազմա պարունակող լիմֆոցիտների թվի ավելացումն արտացոլում է բորբոքումների ժամանակ նրանց արդեն լավ հայտնի գործառույթների ակտիվացումը:

Այսպիսով, ավշային հանգույցների պարենքիմայի բջջային պոպուլյացիայում տեղի ունեցող հիմնական փոփոխութունները վերլուծելով, կարելի է եզրակացնել.

ա) ԽԱԺ-ի վերջնական փուլում ավշային հանգույցներում գրանցվում է էրիթրոիդ և միելոիդ բջիջների պոպուլյացիաների մասնաբաժնի մեծացում (արժանահավատ է 5-րդ օրից)

բ) Հիվանդության ողջ ընթացքում (2-րդ օրից) ավելանում է մահացած բջիջների քանակությունը գ) Հիվանդության վաղ փուլերում (2-3-րդ օրեր) տեղի է ունենում բջիջների քանակության բացարձակ աճ, իսկ ավելի ուշ շրջանում նկատվում է թվաքանակի անկման միտում:

3.2 Փայծաղի ուսումնասիրություն

3.2.1 Խոզի փայծաղի լիմֆոիդ պոպուլյացիան սուր ԽԱԺ-ի դեպքում

Լիմֆոիդ հյուսվածքի կառուցվածքը, նրա կառուցվածքային տարրերի տեղագրությունն իմուն համակարգի տարբեր օրգաններում ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները: Իմունոգենեզի կենտրոնական օրգաններում լիմֆոիդ հյուսվածքը գտնվում է ֆունկցիոնալ միասնության մեջ այլ հյուսվածքների հետ. օրինակ, ոսկրածուծում՝ միելոիդ հյուսվածքի, իսկ թիմուսում՝ էպիթելային հյուսվածքի: Աղեստամոքսային համակարգի, շնչառական և արտազատական ուղիների պատերում՝ կախված հասունացման աստիճանից և ֆունկցիոնալ վիճակից, լիմֆոիդ հյուսվածքը գտնվում է տարբեր որակական կարգավիճակներում: Այստեղ հանդիպում են եզակի լիմֆոցիտներ, ցրված (դիֆուզ) դասավորություն ունեցող լիմֆոիդ հյուսվածքներ և ավշային հանգուցիկներ բազմացման կենտրոններով, որոնց առկայությունը վկայում է օրգանիզմի իմունային բարձր ակտիվության մասին: Ամենամեծ թվով ավշային հանգուցիկները, այդ թվում նաև բազմացման կենտրոններով, հայտնաբերվում են նշիկներում, լիմֆոիդ կուտակումներում, փայծաղում, որդանման ելունի, ստամոքսի, բարակ և հաստ աղիների պատերում, ավշային հանգույցներում [Сапин, 1987]:

Այս բաժնում քննարկելու ենք սուր ԽԱԺ-ի դինամիկայում խոզի փայծաղի պարենքիմայում լիմֆոիդ բջիջների քանակական փոփոխությունները: ԽԱԺ-ի դեպքում այսպիսի ուսումնասիրություններ կատարվում են առաջին անգամ [Zakaryan et al., 2015]:

Փայծաղում իմունային բջիջների կարևոր բաղադրիչ մասն է կազմում մոնոցիտ/մակրոֆագային համակարգը: Նկար 21-ում ցույց է տրվում սուր ԽԱԺ-ի դինամիկայում մոնոցիտ/մակրոֆագային պոպուլյացիայի փոփոխությունները խոզի փայծաղում: Ինչպես երևում է նկարից այս փոփոխությունների կարևորագույն մասն են կազմում հասուն, իսկ հաճախ նաև ակտիվացած մակրոֆագերի ոչ մեծ պոպուլյացիայի հայտնվելը հիվանդության 4-7-րդ օրերեն: Առողջ խոզերի փայծաղի պատճեններում մեր կողմից մակրոֆագեր չեն հայտնաբերվել: Մոնոցիտների պոպուլյացիան հիվանդության 5-րդ և 7-րդ օրերին ունի նվազման միտում ($p<0.1$): Հիվանդության 3-5-րդ օրերին գրանցվել է մոնոբլաստների քանակության արժանահավատ նվազում ($p<0.05$):



Նկար 21 - Խոզի փայծաղում մոնոցիտ/մակրոֆագային պոպուլյացիայի փոփոխությունները ստուգիչ խմբում և սուր ԽԱԺ-ի դինամիկայում:
Աբցիսների առանցք՝ հետվարակային օրեր,
Օրդինատների առանցք՝ բջիջների քանակությունն արտահայտված %-ով:



Նկար 22 - Խոզի փայծաղում լիմֆոիդ պոպուլյացիայի փոփոխությունները ստուգիչ խմբում և սուր ԽԱԺ-ի դինամիկայում:

Աբցիսների առանցք՝ հետվարակային օրեր,

Օրդինատների առանցք՝ բջիջների քանակությունն արտահայտված %-ով:

*Հաշվարկվել են բոլոր կորիզավոր բջիջները:

Նկար 22-ում պարզ երևում է, որ սուր ԽԱԺ-ի դինամիկայում խոզի փայծաղում տեղի է ունենում հասուն լիմֆոցիտների քանակության ընդգծված նվազում: Առողջ խոզերի համեմատ հիվանդության 5-7-րդ օրերին հիվանդ խոզերի մոտ մոտավորապես երկու անգամ նվազում է լիմֆոցիտների պոպուլյացիան: Մյուս կարևորագույն փոփոխությունը դա հիվանդության 4-րդ օրը լիմֆոիդ պոպուլյացիայում ատիպիկ լիմֆոցիտների հայտնվելն է: Այս փոփոխությունները դառնում են արժանահավատ հիվանդության 5-րդ օրից սկսած: ԽԱԺ-ի վաղ փուլերում (3-4-րդ օրեր) լիմֆոբլաստների քանակությունը նվազում է, իսկ հիվանդության վերջնական փուլում և գագաթնակետում վերականգնվում է նրանց թվաքանակը:

Նկար 23-ում ներկայացվում են առողջ և ԽԱԺ-ի վերջնական փուլում գտնվող խոզերի փայծաղների պատճենները:



Նկար 23 - Փայծաղի պատճեններ:

Ա – Առողջ խոզ - 5 փոքր լիմֆոցիտ, 1 նեյտրոֆիլ և

լավ նկատելի կորիզակով 1 լիմֆոբլաստ:

Բ – Հիվանդության 6-րդ օր - վերից վար՝ էոզինոֆիլ,

էրիթրոբլաստ, 2 լիմֆոցիտ (ներքևում տեսանելի է քայքայված լիմֆոցիտ):

Պատճենները ներկված են ըստ Գիմզայի, մասշտաբը՝ 10 մկմ:

Հաշվի առնելով սուր ԽԱԺ-ի դեպքում լիմֆոպենիայի առկայությունը [Karalyan et al., 2012b], կարող ենք եզրակացնել, որ իմունային համակարգի ծայրամասային բոլոր օրգաններում և հյուսվածքներում տեղի են ունենում լիմֆոիդ պոպուլյացիայի համակարգային փոփոխություններ: Հայտնի է, որ լիմֆոպենիան զարգանում է լիմֆոիդ համակարգի զարգացման խանգարումների, լիմֆոցիտոպոեզի արգելակման կամ լիմֆոցիտների քայքայման հետևանքով: Հնարավոր է նաև մի քանի պատճառների միաժամանակյա դրսևորում լիմֆոպենիայի զարգացման համար: Լիմֆոպենիա կարող է զարգանալ նաև սուր վարակիչ հիվանդությունների ժամանակ:

Խոզի փայծաղը լիմֆոցիտներով սկսում է բնակեցվել սաղմնային զարգացման ուշ փուլերում, իսկ լիմֆոիդ պոպուլյացիայի ձևավորումն ավարտվում է արդեն ծննդից հետո: Լիմֆոցիտները կուտակվում են շուրջանոթային տարածություններում և հանդիսանում են փայծաղի սպիտակ կակղանի նախորդները [Андреева, 2013)]: Սուր ԽԱԺ-ի դեպքում դիտվում է լիմֆոիդ բջիջների քանակության նվազում փայծաղի բոլոր տեղամասերում [Zakaryan et al., 2015]:

Այսպիսով, մեր կողմից սուր ԽԱԺ-ի դեպքում խոզի փայծաղում հայտնաբերվել է լիմֆոիդ պոպուլյացիայի քանակության նվազում: Նմանատիպ ցուցանիշներ (սակայն ավելի քիչ արտահայտված) մեր կողմից ստացվել են նաև ավշային հանգույցների հետազոտության արդյունքների վերլուծության ժամանակ (տես վերևում): Բացի այս ամենից քիչ ավելի վաղ մեր լաբորատորիայում ստացված տվյալները վկայում են նաև ծայրամասային արյան մեջ և ոսկրածուծում լիմֆոցիտների քանակության նվազման մասին [Karalyan et al, 2012b]: Ելնելով այս ամենից կարող ենք եզրակացնել ԽԱԺ-ի ավելի ուշ փուլերում ընդհանուր (տոտալ) լիմֆոպենիայի զարգացման մասին:

Ձեռքբերովի լիմֆոպենիան հանդիպում է մեծաթիվ տարբեր հիվանդությունների ժամանակ: Լիմֆոպենիան կարող է զարգանալ լիմֆոցիտների արտադրության խանգարման հետևանքով, ինչի պատճառ են հանդիսանում թիմուսի և ավշային հանգույցների կառուցվածքային փոփոխությունները: Վիրուսով խթանված սուր վիրեմիայի ժամանակ լիմֆոցիտները կարող են ենթարկվել արագ քայքայման, ինչը պայմանավորված է ակտիվ վարակիչ գործընթացով, նաև կարող են պահվել փայծաղի կամ ավշային հանգույցների կողմից, ինչպես նաև գաղթել դեպի շնչառական համակարգ [McBath et al., 2014]: Վիրուսի թափանցումն օրգանիզմ հանգեցնում է լիմֆոցիտների վերաբաշխմանը հյուսվածքների և արյան միջև, որը պատճառ է հանդիսանում արյան մեջ լիմֆոպենիայի զարգացման համար: Այս երևույթը բնորոշ է վիրեմիա առաջացնող մեծաթիվ վիրուսների [Bautista et al., 2003, Pedersen et al., 2015], սակայն ի տարբերություն մյուս վիրուսային հիվանդություննների սուր ԽԱԺ-ը բնութագրվում է արագընթաց զարգացմամբ, ավելի վառ արտահայտված լիմֆոպենիայով: Այս դեպքում լիմֆոպենիան կարող է զարգանալ ոչ միայն լիմֆոցիտների վերաբաշխման, այլ նաև նրանց քայքայման հետևանքով: Մեր ուսումնասիրությունների արդյունքներում գրանցվել է լիմֆոցիտների թվի կրճատում հետազոտված բոլոր օրգաններում և հյուսվածքներում՝ ոսկրածուծ, փայծաղ, ավշային հանգույցներ, արյուն [Karalyan et al., 2012b, Zakaryan et al., 2015]:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստը, որ մենք ցույց ենք տվել լիմֆոցիտների քանակի կրճատում վերոնշյալ օրգաններում և հյուսվածքներում, կարող ենք եզրակացնել, որ լիմֆոպենիան զարգանում է լիմֆոցիտների քայքայման հետևանքով (ըստ գրականության տվյալների՝ հիմնականում ապոպթոզով): Մեր կողմից ստացված այս տվյալները համընկնում են այլ հեղինակների կողմից կատարված ԽԱԺ-ի ուսումնասիրությունների արդյունքների հետ [Carrasco et al., 1996b, Gómez-Villamandos et a.l, 2003]:

3.2.2. Փայծաղի լիմֆոցիտների և լիմֆոբլաստների կորիզային ԴՆԹ-ի, սպիտակուցների քանակական փոփոխությունները: Բջիջների մորֆոլոգիական հետազոտություն

Ուսումնասիրությունների հաջորդ փուլում կրկին բջջասպեկտրոֆոտոմետրիայի մեթոդի օգնությամբ ուսումնասիրել ենք փայծաղի լիմֆոցիտների և լիմֆոբլաստների բջջաբանական և մորֆոֆունկցիոնալ փոփոխությունները: Ինչպես երևում է նկար 24-ում առողջ խոզերի փայծաղի լիմֆոցիտները դիպլոիդ են: Հիվանդության վաղ փուլերում դիպլոիդությունը բնորոշ է ուսումնասիրվող բջիջների համար: Հիվանդության զարգացմանը զուգահեռ հայտնվում են հիպերդիպլոիդ լիմֆոցիտներ, ինչը վկայում է այդ բջիջների կորիզային ԴՆԹ-ի պրոլիֆերացիայի մասին: Նկար 24-ի Դ-ից պարզվում է, որ 4-րդ ՀՎՕ-ում այդպիսի լիմֆոցիտների քանակը գերզանցում է 15%-ը: Հիվանդության ավելի ուշ փուլերում (սկսած 5-րդ ՀՎՕ), հայտնվում են նաև հիպոդիպլոիդ լիմֆոցիտներ: Այս երևույթը բնորոշ է ապոպթոզային գործընթացներին [Mello et al., 2009]:



Նկար 24 - Ստուգիչ խմբում և ԽԱԺ-ի դինամիկայում խոզերի փայծաղում լիմֆոցիտների կորիզների բաշխումը ըստ ԴՆԹ-ի պլոիդության դասերի:
Ա – Ստուգիչ խումբ, Բ – 2-րդ ՀՎՕ, Գ - 3-րդ ՀՎՕ, Դ - 4-րդ ՀՎՕ, Ե - 5-րդ ՀՎՕ, Զ - 6-րդ ՀՎՕ:

Աբցիսների առանցք՝ պլոիդության դասերը ըստ ԴՆԹ-ի պարունակության,
Օրդինատների առանցք՝ ընդհանուր պոպուլյացիայում բջիջների պարունակությունը %-ով:



Նկար 25 - Ստուգիչ խմբում և ԽԱԺ-ի դինամիկայում խոզերի փայծաղի լիմֆոբլաստների կորիզների բաշխումը ըստ ԴՆԹ-ի պլոիդության դասերի:

Ա – Ստուգիչ խումբ, Բ – 2-րդ ՀՎՕ, Գ - 3-րդ ՀՎՕ, Դ - 4-րդ ՀՎՕ, Ե - 5-րդ ՀՎՕ, Զ - 6-րդ ՀՎՕ:

Աբցիսների առանցք՝ պլոիդության դասերը ըստ ԴՆԹ-ի պարունակության, Օրդինատների առանցք՝ ընդհանուր պոպուլյացիայում բջիջների պարունակությունը %-ով:

Ինչ վերաբերում է փայծաղի լիմֆոբլաստների կորզների բաշխմանը ըստ ԴՆԹ-ի պլոիդության դասերի, ապա այստեղ նույնպես ԽԱԺ-ի վաղ փուլում՝ 2-րդ ՀՎՕ-ում գրանցվել է հիստոգրամի տեղաշարժ դեպի աջ: Լիմֆոբլաստների պոպուլյացիայի պրոլիֆերատիվ ակտիվության հետևանքով հայտնաբերվել են մինչև տետրապլոիդ բջիջներ, որոնք պահպանվում են ԽԱԺ-ի հետագա և, ընդհուպ, վերջնական փուլերում (նկար 25): Լիմֆոբլաստներում զարգացող ապոպտոզային գործընթացները, որոնք նպաստում են հիպոդիպլոիդ լիմֆոբլաստների հայտնաբերմանը, հետևապես, հիստոգրամի դեպի ձախ տեղաշարժին, գրանցվել են 3-րդ ՀՎՕ-ում (նկար 25-ի Գ): Հիվանդության հետագա օրերին հիպոդիպլոիդ լիմֆոբլաստների պարունակությունը բջիջների ընդհանուր պոպուլյացիայում նվազում է, իսկ վերջնական փուլում անհետանում:



Նկար 26 - Ստուգիչ խմբում և ԽԱԺ-ի դինամիկայում խոզերի փայծաղի լիմֆոցիտներում և լիմֆոբլաստներում սպիտակուցի պարունակությունը: Աբցիսների առանցք՝ հետվարակային օրեր, Օրդինատների առանցք՝ սպիտակուցների պարունակությունը պայմանական միավորներով (ՊՄ):

Նկար 26-ից պարզ է դառնում, որ հիվանդության 2-րդ օրից փայծաղի լիմֆոցիտներում և լիմֆոբլաստներում տեղի է ունենում սպիտակուցի քանակության ավելացում: 3-րդ օրից սպիտակուցների քանակությունների տարբերությունը դառնում է արժանահավատ առողջ խոզերի տվյալների համեմատ: Լիմֆոցիտներում և լիմֆոբլաստներում սպիտակուցների ավելացած քանակությունը պահպանվում է մինչև հիվանդության 5-րդ օրը ներառյալ: Հիվանդության վերջնական փուլում լիմֆոբլաստներում սպիտակուցի քանակությունը չի տարբերվում ստուգիչ խմբի տվյալներից, իսկ լիմֆոցիտներում գրանցվում է միտում ($p<0.1$):

Լիմֆոցիտներում և լիմֆոբլաստներում սպիտակուցների քանակական փոփոխությունների հնարավոր պատճառները քննարկվել են վերևում:

ԽԱԺ-ի դինամիկայում փայծաղի լիմֆոիդ պոպուլյացիայի բջիջների մակերեսների փոփոխությունները ներկայացվում են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Փայծաղի լիմֆոիդ բջիջների մակերեսները սուր ԽԱԺ-ի դինամիկայում (մկմ^2)

Բջիջներ	ստուգիչ	2-րդ ՀՎՕ	3-րդ ՀՎՕ	4-րդ ՀՎՕ	5-րդ ՀՎՕ	6-րդ ՀՎՕ
Լիմֆոցիտ	88.3±9.2	97.3±9.8	98.1±14.3	102.5±10.4*	100.2±16.5	99.9±8.5*
Լիմֆոբլաստ	97.4±9.8	105.1±18.9	112.3±9.7*	104.6±11.0*	107.1±10.7*	100.2±23.1

*շեղումների քանակն ըստ Վիլկոքսոն-Մանն-Ուիթնիի U չափանիշի հավասար է 2-ի ($p<0.1$)

Ինչպես երևում է աղյուսակից հիվանդության բոլոր օրերին, ստուգիչ խմբի հետ համեմատելով, փայծաղի (ի տարբերություն ավշային հանգույցների) լիմֆոցիտների մակերեսների մեծացման արժանահավատ տվյալներ չեն ստացվել մեր կողմից: Սակայն սկսած հիվանդության որոշ օրերից (3-րդ օր) դիտվում է բջիջների մակերեսների մեծացման միտում ստուգիչի համեմատ:

3.3 Նախաբորբոքային ցիտոկինների սինթեզը սուր ԽԱԺ-ի զարգացման գործընթացում

Բորբոքային աուտոիմուն հիվանդությունների ախտածագման մեջ կարևոր նշանակություն ունեցող նախաբորբոքային ցիտոկինների խմբին են պատկանում ՈՒՆԳ-α-ն, ԻԼ-1-ը, ԻԼ-6-ը և ԻԼ -8-ը: ՈՒՆԳ-α-ն և ԻԼ-1-ը սինթեզվում են զուգահեռաբար, օժտված են մեկը մյուսի սինթեզը խթանելու հատկությամբ և դրսևորում են բազմաթիվ ընդհանուր ազդեցություններ [http://medbe.ru/materials/revmaticheskie-zabolevaniya-raznoe/provospalitelnye-tsitokiny-faktory-rosta-i-differentsirovki/]: Հայտնի է, որ բջջային և հումորալ իմունային ռեակցաներում առաջատար դեր ունենն ակտիվացած մակրոֆագերի կողմից արտազատված կարգավորիչ ցիտոկիններ ՈՒՆԳ-α-ն և ԻԼ-1β-ն: ԻԼ-1-ի կարևորագույն դերը T-լիմֆոցիտների ակտիվացումն է, որոնք միացնում են բջջային և հումորալ իմունային պատասխանները: Այս երկու հիմանական կարգավորիչ ցիտոկինների հավասարակշռությունից է կախված տարբեր վիրուսայի հիվանդությունների ընթացքը և ելքը:

Մեր աշխատանքում ուսումնասիրել ենք հիմնական նախաբորբոքային ցիտոկինների քանակական տեղաշարժերը ԽԱԺ-ի դինամիկայում:

Նկար 27-ում ներկայացվում է շիճուկային ԻԼ-1β-ի քանակական փոփոխություններն ստուգիչ խմբում և սուր ԽԱԺ-ի դինամիկայում: ԻԼ-1-ը բազմագործառույթային ցիտոկին է, որն առաջին անգամ հայտնաբերվել է որպես լեյկոցիտների կենսագործունեության արդյունք, որը կենդանիներին ներարկելիս տենդի զարգացման պատճառ է հանդիսանում: ԻԼ-1-ը սինթեզվում է բազմաթիվ բջիջների կողմից՝ մոնոցիտների, մակրոֆագերի, էնդոթելոցիտների, նեյտրոֆիլների, B-լիմֆոցիտների, բնական քիլերների, ֆիբրոբլաստների, մաշկի դենդրիտային բջիջների, երիկամի մեզանգիալ բջիջների, գլիայի բջիջների և նույնիսկ նեյրոնների կողմից:



Նկար 27 - Շիճուկային ԻԼ-1β-ի մակարդակներն ստուգիչ խմբում և սուր ԽԱԺ-ի դինամիկայում:

Աբցիսների առանցք՝ հետվարակային օրեր,

Օրդինատների առանցք՝ ցիտոկինի մակարդակը պգ/մլ-ով:

Ինչպես երևում է նկար 27-ից հիվանդության վաղ փուլերում ԻԼ-1β-ի մակարդակը չի տարբերվում ստուգիչ խմբի ցուցանիշներից: Հիվանդության 3-րդ օրից գրանցվում է այս ցիտոկինի մակարդակի արժանահավատ բարձրացում: Այս բարձրացումը աստիճանաբար աճում է 3-7-րդ օրերին և ցուցաբերում է վիճակագրական արժանահավատություն ($p<0.05$ – $p<0.01$):

Ընդհանուր առմամբ, շիճուկային ԻԼ-1-β-ի մակարդակի զգալի բարձրացումը զարմանալի չէ: Այն հայտնաբերվում է սեպտիկ շոկի ժամանակ տարբեր բակտերիալ և վիրուսային ծանր վարակների դեպքում [Escaffre et al., 2013]: Սեպտիկ շոկի շատ ախտանշաններ հնարավոր է վերարտադրել կենդանիներին ներարկելով ԻԼ-1: ԻԼ-1-ի արգելակչի ներմուծումը թողնում է դրական ազդեցություն սեպտիկ շոկով հիվանդների և փորձարարական կենդանիների մոտ:

Հետազոտությունների հաջորդ փուլում որոշվել է ԻԼ-6-ի քանակական տեղաշարժը ԽԱԺ-ի վիրուսով վարակված խոզերի արյան շիճուկում: Հետազոտության արդյունքները ներկայացվում են նկար 28-ում:



Նկար 28 - Շիճուկային ԻԼ-6-ի մակարդակներն ստուգիչ խմբում և սուր ԽԱԺ-ի դինամիկայում:
Աբցիսների առանցք՝ հետվարակային օրեր,
Օրդինատների առանցք՝ ցիտոկինի մակարդակը պգ/մլ-ով:

Ինչպես երևում է նկար 28-ից հիվանդության 4-րդ օրից ԻԼ-6-ի մակարդակը արժանահավատ գերազանցում է ստուգիչ խմբի ցուցանիշներին ($p<0.05$ – $p<0.01$): 4-7-րդ օրերին հիվանդ խոզերի արյան շիճուկում ԻԼ-6-ի մակարդակն առողջ խոզերի համեմատ գերազանցում է 7-10 անգամ:

ԻԼ-6-ը համարվում է բորբոքման սուր փուլի կարևոր միջնորդանյութերից մեկը և կարող է վնասել հյուսվածքներն աուտոիմուն ռեակցիայի հետևանքով: ԻԼ-6-ը սինթեզում են ակտիվացած մոնոցիտները և մակրոֆագերը, էնդոթելային բջիջները, ֆիբրոբլաստները, ակտիվացած T-բջիջները [Kishimoto, 1989]: Հաշվի առնելով ԽԱԺ-ի վիրուսի թիրախ բջիջների վերաբերյալ տվյալները, հասկանալի է դառնում, որ ԻԼ-6-ի բոլոր պրոդուցենտ բջիջները շատ զգայուն են վիրուսի ազդեցության նկատմամբ:

Նկար 29-ում ներկայացվում է շիճուկային ԻԼ-8-ի քանակական փոփոխությունները ստուգիչ խմբում և սուր ԽԱԺ-ի դինամիկայում:



Նկար 29 - Շիճուկային ԻԼ-8-ի մակարդակներն ստուգիչ խմբում և սուր ԽԱԺ-ի դինամիկայում:

Աբցիսների առանցք՝ հետվարակային օրեր,

Օրդինատների առանցք՝ ցիտոկինի մակարդակը պգ/մլ-ով:

Հիվանդության առաջին օրից գրանցվում է ԻԼ-8-ի մակարդակի բարձրացման միտում ($p<0.1$): Իսկ 2-րդ օրից սկսած մինչև հիվանդության ավարտը շիճուկային ԻԼ-8-ի մակարդակի բարձրացումը դառնում է արժանահավատ ($p<0.05$) (նկար 29):

ԻԼ-8-ը պատկանում է քեմոկինների խմբին, որոնց հիմնական հատկությունն է ապահովել տարբեր տեսակի բջիջների քեմոտաքսիսը բորբոքման օջախում: Այդ բջիջներն են նեյտրոֆիլները, մոնոցիտները, էոզինոֆիլները, T բջիջները: Այդ իսկ պատճառով ԻԼ-8-ը համարվում է ախտածնի թափանցման վայրում զարգացող բորբոքային ռեակցիայի կարևորագույն գործոնը: ԻԼ-8-ի պրոդուցենտ բջիջներ են համարվում մակրոֆագերը, մոնոցիտները, լիմֆոցիտները, էպիթելային բջիջները, ֆիբրոբլաստները, էպիդերմիսի բջիջները: Այս պրոդուցենտ բջիջների զգալի մասը, հատկապես, մակրոֆագերը հանդիսանում են առաջնային թիրախներ ԽԱԺ-ի վիրուսի համար: Սուր ԽԱԺ-ի դեպքում ԻԼ-8-ի քանակական տեղաշարժերի վերաբերյալ հետազոտություններն առաջին անգամ իրականացվել են մեր լաբորատորիայում [Zakaryan et al., 2015]:



Նկար 30 - Շիճուկային ՈւՆԳ–α-ի մակարդակներն ստուգիչ խմբում և սուր ԽԱԺ-ի դինամիկայում:

Աբցիսների առանցք՝ հետվարակային օրեր,

Օրդինատների առանցք՝ ցիտոկինի մակարդակը պգ/մլ-ով:

Վիրուսով վարակելուց 24 ժամ անց արդեն գրանցվում է ՈւՆԳ–α-ի մակարդակի աճի միտում ($p<0.1$): Իսկ 2-րդ օրից սկսած մինչև հիվանդության ավարտն առողջ խոզերի համեմատ շիճուկային ՈւՆԳ–α-ի մակարդակի բարձրացումը դառնում է արժանահավատ ($p<0.05$): Միակ բացառությունը կազմում է 3-րդ օրը, երբ դիտվում է միտում ($p<0.1$) (նկար 30): ԽԱԺ-ի դեպքում ՈւՆԳ–α-ի *in vivo* քանակական չափումներ սկսել են կատարվել դեռևս 1999թ-ից [Gómez del Moral et al., 1999], և այս ցիտոկինի մակարդակի աճ գրանցվել է միայն 3-րդ ՀՎՕ-ից: Մեր կողմից ստացված տվյալները հաստատում են շիճուկային ՈւՆԳ–α-ի մակարդակի աճը, բայց հիվանդության ավելի վաղ շրջանում (24-րդ ժամին): Հաշվի առնելով փորձարարական վարակի նույն պայմանները, ինչից կախված է հիվանդության զարգացման ժամանակահատվածը (կարևոր է վիրուսի միջմկանային ներարկումը), կարող ենք ենթադրել, որ ՈւՆԳ–α-ի քանակի ավելացման ավելի վաղ դրսևորման պատճառ է հանդիսանում մեր կողմից օգտագործված ԽԱԺ-ի գենոտիպ II վիրուսը: Gómez del Moral-ի և համահեղինակների (1999) հետազոտական աշխատանքներում կիրառվել էր գենոտիպ I վիրուսը: Անհրաժեշտ է ավելացնել նաև, որ ՈւՆԳ–α-ի գլխավոր պրոդուցենտ բջիջներն են մոնոցիտ/մակրոֆագային շարքի բջիջները, որոնք էլ հենց հանդիսանում են ամենաառաջին թիրախ բջիջները ԽԱԺ-ի վիրուսի համար:

ԽԱԺ-ի դինամիկայում մեր կողմից հետազոտված ցիտոկինների մակարդակների վերլուծության համար իրականացրել ենք կորելացիոն վերլուծություն: Այս տվյալները բերվում են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

ԽԱԺ-ի դինամիկայում նախաբորբոքային ցիտոկինների մակարդակների կորելացիան

		ԻԼ-1β	ԻԼ-6	ԻԼ-8	ՈւՆԳ–α
ԻԼ-1β	Պիրսոնի կորելացիայի գործակից	1	0.918**	0.832*	0.844**
	Արժանահավատություն (p)	-	0.001	0.010	0.008
	Խոզերի քանակ (n=8)				
ԻԼ-6	Պիրսոնի կորելացիայի գործակից	0.918**	1	0.739*	0.876**
	Արժանահավատություն (p)	0.001	-	0.036	0.004
	Խոզերի քանակ (n=8)				
ԻԼ-8	Պիրսոնի կորելացիայի գործակից	0.832*	0.739*	1	0.698
	Արժանահավատություն (p)	0.010	0.036	-	0.054
	Խոզերի քանակ (n=8)				
ՈւՆԳ–α	Պիրսոնի կորելացիայի գործակից	0.844**	0.876**	0.698	1
	Արժանահավատություն (p)	0.008	0.004	0.054	-
	Խոզերի քանակ (n=8)				

* Կորելացիան արժանահավատ է ($p<0.05$)

** Կորելացիան արժանահավատ է ($p<0.01$)

Աղյուսակ 4-ից պարզ երևում է, որ մեր կողմից հետազոտված նախաբորբոքային ցիտոկինների մակարդակները ցույց են տալիս արժանահավատ և փոխադարձ բարձր դրական կորելացիա: Դա վկայում է ԽԱԺ-ի դինամիկայում վերոհիշյալ ցիտոկինների ավելացած սինթեզի և շիճուկում նույնատիպ քանակական տեղաշարժերի մասին: Նման տեղաշարժերը բնորոշ են յուրահատուկ ախտաբանական գործընթացներին, որի մանրամասն նկարագրությունը կտրվի ստորև:

Պետք է ավելացնել նաև, որ ԻԼ-1-ը և ՈւՆԳ-α-ն հիմնական նախաբորբոքային ցիտոկիններն են, և նրանց փորձարարական կիրառումն առաջ է բերում տենդ, բորբոքում, հյուսվածքների կազմալուծում, իսկ որոշ դեպքերում՝ շոկ և մահ [Dinarello, 2000]: ԽԱԺ-ի ախտաբանության զարգացման մի մասը կապված է այս ցիտոկինների սինթեզի ավելացման հետ [Carrasco et al., 2002, Zakaryan et al., 2015]:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Այսպիսով, մեր հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ սուր ԽԱԺ-ի դեպքում խոզերի ավշային հանգույցներում և փայծաղում տեղի են ունենում լիմֆոցիտների մորֆո-ֆունկցիոնալ փոփոխություններ, որոնց կարելի է բնութագրել որպես ակտիվացման արդյունք [Darzynkiewicz et al., 1994, Iritani et al., 2002]:

Հաշվի առնելով վերոնշյալ փոփոխությունները, ԽԱԺ-ի վերջնական փուլերում լիմֆոցիտների պոպուլյացիան կարելի է դիտել որպես համակարգ, որտեղ խանգարվել է բջիջների պրոլիֆերացիայի և տարբերակման գործընթացները: Կարելի է ենթադրել, որ ԽԱԺ-ի վաղ փուլերում (1-2 ՀՎՕ) ծայրամասային արյան մեջ շրջանառվող լիմֆոցիտների նվազած քանակության [Karalyan et al., 2012b] պատճառ է հանդիսանում ոչ միայն և ոչ այնքան լիմֆոցիտների գաղթը շրջանառվող արյունից դեպի բորբոքման օջախներ և տեղային ավշային հանգույցներ (վիրեմիայի հետևանքով գործնականորեն բոլոր), այլ գերազանցապես այդ բջիջների ապոպթոզը:

Վերլուծելով ԽԱԺ-ի դեպքում խոզերի իմունային համակարգի բջջային բաղադրիչների փոփոխությունները հանգել ենք մի շարք եզրակացությունների: Խոզերի օրգանիզմում դիտվում է ընդհանուր լիմֆոպենիա՝ փայծաղում, ավշային հանգույցներում, ոսկրածուծում, ծայրամասային արյան մեջ (վերջինս հանտնաբերվել է մեր լաբորատորիայում ավելի վաղ աշխատանքների ընթացքում): ԽԱԺ-ի 2-5 ՀՎՕ-ին լիմֆոպենիան ուղեկցվում է մորֆոլոգիական փոփոխությունների ենթարկված բջիջների քանակական աճով, որոնք սինթեզում են ավելի շատ սպիտակուց և ունեն մեծ մակերեսներ: Գրականության տվյալների համաձայն այս երևույթն անմիջական կապ ունի լիմֆոցիտների ակտիվության բարձրացման հետ [Iritani et al., 2002]: Այս գործընթացների հետ միաժամանակ տեղի է ունենում հիստոգրամների տեղաշարժ, որտեղ լիմֆոիդ պոպուլյացիայի բջիջների կորիզների բաշխումը ըստ պլոիդության դասերի շարժվում է դեպի աջ, ինչը վկայում է այդ բջիջների կորիզային ԴՆԹ-ի խթանված պրոլիֆերացիայի մասին:

Նախաբորբոքային ցիտոկինների արտադրության ուսումնասիրությունները ցույց են տվել ԽԱԺ-ի վաղ փուլերում բոլոր հիմնական ցիտոկինների մակարդակների գրեթե միաժամանակյա բարձրացում: Նախաբորբոքային ցիտոկինների մակարդակների բարձրացման պատճառը դեռևս ամբողջովին բացահայտված չէ: Մարդու մոտ այդ պատճառների շարքին են դասվում էնդոթելոցիտների մեխանիկական ծանրաբեռնվածությունը, հիպօքսիան և միոկարդի իշեմիան, արյան մեջ ցածր խտության լիպոպրոտեիդների՝ օքսիդացած խոլեստերինի խտության բարձրացումը: Ցիտոկինների ակտիվացումը նաև կապված է աուտոիմուն մեխանիզմների, օքսիդատիվ սթրեսի, վարակիչ գործընթացների և դրանց հետևանքով էնդոտոքսինների կուտակման հետ [Кузник, 2012]: Այս երևույթները բնորոշ են բավականին յուրահատուկ մի ախտաբանական գործընթացի, որը կոչվում է ցիտոկինային գրոհ (մանրամասն տես ստորև):

Մեր աշխատանքում ցույց է տրված նաև, որ իմունային բջիջների հիմնական ցուցանիշները (քանակական փոփոխությունները, պրոլիֆերացիայի խթանումը և ֆունկցիոնալ ակտիվությունը) ունեն հստակ կապ շիճուկում ցիտոկինների մակարդակների տատանումների հետ:

Ցիտոկինային գրոհի եզրույթը (հիպերցիտոկինեմիա) չունի հստակ սահմանում և վերաբերում է բորբոքման օջախում ցիտոկինների կողմից ակտիվացած և չվերահսկվող ու պաշտպանիչ ֆունկցիա չկրող իմունային բջիջների մասնավոր խմբին: Ցիտոկինային գրոհը շատ վտանգավոր, հաճախ մահացու և իմուն համակարգի հսկողությունից դուրս մնացած իմունային ռեակցիա է: Այն պայմանավորված է ցիտոկինների և իմունային բջիջների միջև դրական հետադարձ կապով, որը հանդիսանում է օրգանիզմի վրա վտանգավոր վիրուսների կամ բակտերիաների գրոհի պատասխան: Ցիտոկինային գրոհը բորբոքման օջախում առաջացնում է հյուսվածքների քայքայում, միաժամանակ այն տարածվում է հարևան հյուսվածքների վրա և զարգացմանը զուգահեռ ձեռք է բերում համակարգային բնույթ՝ ընդգրկելով ողջ օրգանիզմը, և հանգեցնում է ծանր հետևանքների:

Հայտնի է, որ ցիտոկինների արտադրությունը կախված է օրգանիզմի վիճակից: Սովորաբար, նորմալ պայմաններում նրանք սինթեզվում են շատ չնչին և ապահովում են իրենց սինթեզն իրականացնող բջիջների և բորբոքման այլ միջնորդանյութերի միջև փոխադարձ կապը: Սակայն ցիտոկինների մակարդակը կտրուկ աճում է բորբոքային գործընթացների ժամանակ, ինչը կապված է պրոդուցենտ բջիջների ակտիվացման հետ: Պրոդուցենտ բջիջների ակտիվացումը տեղի է ունենում մի շարք ներգործությունների հետևանքով՝ էնդոտոքսիններ, մանրէներ, հյուսվածքների հիպօքսիա և ռեպերֆուզիա, ոչ կենսունակ հյուսվածքների առկայություն, շոկ և այլն:

Բորբոքման ժամանակ մեծաթիվ ռեակցիաներ տեղի են ունեում ցիտոկինների միջնորդությամբ: ԻԼ-1-ը, օրինակ, ակտիվացնում է լիմֆոցիտներին, խթանում է բորբոքման վաղ փուլերի սպիտակուցների սինթեզը, նախաբորբոքային միջնորդանյութերի (ԻԼ-6-ի, ԻԼ-8-ի, ՈՒՆԳ-α-ի) արտադրությունը: Այն նաև բարձրացնում է էնդոթելի նախամակարդելիության ակտիվությունը ու մոլեկուլների ադհեզիան և առաջացնում է մարմնի ջերմաստիճանի բարձրացում: ԻԼ-6-ը ակտիվացնում է լիմֆոցիտներին և լեյկոցիտներին, նպաստում է լեյկոցիտոզի զարգացմանը, ջերմաստիճանի բարձրացմանը և բոբոքման վաղ փուլերի սպիտակուցների սինթեզին: ՈՒՆԳ-α-ն խթանում է ԻԼ-1-ի և ԻԼ-6-ի արտազատումը, պրոստագլանդինների ձերբազատումը, ուժգնացնում է նեյտրոֆիլների, էոզինոֆիլների, մոնոցիտների ակտիվացումը: Այն ակտիվացնում է կոմպլեմենտի և մակարդման համակարգերը, բարձրացնում է մոլեկուլային ադհեզիան և անոթային թափանցելիությունը, նպաստում է թերճնշման զարգացմանը և մարմնի ջերմաստիճանի բարձրացմանը [Межирова и др., 2011]:

Ամփոփելով մեր կողմից ստացված և գրականության տվյալները գալիս ենք այն եզրահանգման, որ զարգացող համակարգային իմուն պատասխանը ԽԱԺ-ի վիրուսի բազմացման և նրան հաջորդող վիրեմիայի նկատմաբ ոչ յուրահատուկ իմուն պատասխան է: Բնածին իմունիտետի ակտիվացման սկզբնական փուլերում տեղի է ունեում նախաբորբոքային ցիտոկինների սինթեզ, որոնք, իրենց հերթին, հանդիսանում են տարբեր տեսակի բջիջների խթանիչներ: Այդ բջիջների թվին են դասվում իմունային էֆեկտոր բջիջները, անոթների հարթ մկանային և տարբեր օրգանների պարենքիմային բջիջները: Պետք է ավելացնել, որ որոշ ցիտոկիններ (ԻԼ-1 և ՈՒՆԳ-α) հանդիսանում են այլ ցիտոկինների սինթեզի խթանիչներ: ՈՒՆԳ–α-ն և ԻԼ-1-ը նպաստում են վարակի տարածման սահմանափակմանը, սակայն օրգանիզմում վարակի տարածման դեպքում նրանց ազդեցությունը դառնում է բացասական: Այս ամենի հետ միասին որոշ ցիտոկինների ակտիվացումը բերում է իմունային պաշտպանության բջիջների ծանրաբեռնվածության ավելացմանը, որը դրսևորվում է լիմֆոցիտների ակտիվացմաբ [Martina, 2014]: Այս երկու իրադարձությունները սերտորեն կապված են և այս հիվանդության (հատկապես, որ այն վիրուսային է) զարգացման մեխանիզմը պարզելը գրեթե անհնար է [Barry et al., 2000]:

ԽԱԺ-ին բնորոշ ախտաբանությունն ի հայտ է գալիս հոմեոստատիկ մեխանիզմների անհավասարակշռության հետևանքով, որոնք դրսևորվում են տարածուն բորբոքման արդյունքում: Սա հանգեցնում է ներանոթային տարածուն մակարդումների և մանր անոթներում մակադուկների ձևավորմանը, ինչը պատճառ է հանդիսանում օրգանների դիսֆունկցիայի, բազմաօրգանային անբավարարության և հիվանդ կենդանու մահվան: Բորբոքման խթանիչները հանգեցնում են անոթային էնդոթելի ուղղակի վնասմանը և էնդոթելային բջիջներից հյուսվածքային գործոնի անջատմանը: Այդ գործոնը միացնում է մակարդելության կասկադը և ուժեղացնում է թրոմբինի արտադրությունը, որը լուծելի ֆիբրինոգենը վերափոխում է ֆիբրինի: Ֆիբրինը ագրեգացված թրոմբոցիտների հետ միասին ձևավորում է ներանոթային մակարդուկները [Белобородов, 2010]:

Նախաբորբոքային ցիտոկինները (ՈՒՆԳ–α-ն և ԻԼ-1-ը) խթանում են հյուսվածքային գործոնը և սկիզբ են դնում մակարդման գործընթացին: Սեպսիսի ժամանակ այս երևույթը հաստատվում է թրոմբին-հակաթրոմբին համալիրի մեծ քանակության և պլազմայում D-դիմերների առկայությամբ: Սա մատնանշում է մակարդման և ֆիբրինոլիզի համակարգերի ակտիվացումը: Հյուսվածքային խթանիչ պլազմինոգենը ձևափոխվում է պլազմինի, որը հանդիսանում է հզոր ֆիբրինոլիտիկ: Մեր հետազոտություններում ավելի վաղ ցույց ենք տվել մակարդելիության նմանօրինակ փոփոխություններ [Zakaryan et al, 2014]:

